6430

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք!

Մ. Ջ. ԲԱԳԻՐՈՎ

ԱԿ (Բ) Կ ԿԵՆՏԿՈՄԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

ՀԱՇՎԵՏՈՒ ԶԵԿՈՒՑՈՒՄ ԱԴՐԿՈՄԿՈՒՍԻ (Բ) XII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

ЗКП2
Б-13

ԿՈՒՍՀՐԱՏ ● Բագու
1934

ՅԿՊՀ
Բ-13
15 SEP 2005
1 DEC 2009

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք!

Մ. Ջ. ԲԱԳԻՐՈՎ

ԱԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

ՀԱՇՎԵՏՈՒ ԶԵԿՈՒՅՑՈՒՄ
ԱԴՐԿՈՄԿՈՒՍԻ (Բ)
XII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

1008
38607
197

ԱԴՀՐԱՏ • Բաքու

1934

26 FEB 2013
6430

Հայերենը խմբագրեց՝
Հ. ՍԱՐԳՍՅԱՆ
Տեխ. խմբագիր՝
Կ. ԹԱՌԼԱՆՅԱՆ

Մ. Ջ. ԲԱԳԻՐՈՎ

Библиотека
3268-91

1. ԽՍՀՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՅԵՎ ՆԵՐՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Խորհուրդների յերկիրը կուսակցության 16-րդ և 17-րդ համագումարների միջև յեղած ժամանակաշրջանում ահագին հաջողություններ է ձեռք բերել թե սոցիալիստական շինարարության գործում և թե ԽՍՀՄ միջազգային դրության ամրապընդման ասպարեզում:

Կուսակցության 16-րդ համագումարից հետո անցած յերեք տարվա ընթացքում մեր յերկրում տեղի յեն ունեցել հսկայական սոցիալ-տնտեսական տեղաշարժեր՝ Խորհրդային Միությունն ագրարային յերկրից դարձել է ինդուստրիալ յերկիր: Մեր յերկիրը մանր, ցաք ու ցրիվ, հետամնաց գյուղացիական տնտեսության յերկրից դարձել է աշխարհիս ամենախոշոր հողագործության յերկիր՝ առաջավոր մեքենական տեխնիկայով զինված կոլտնտեսությունների և խորհտնտեսությունների հիման վրա: Կոլտնտեսային գյուղացիությունը դարձել է խորհրդային իշխանության գլխավոր հենարանը գյուղում և հողագործության կենտրոնական դեմքը: Այդ ժամանակի ընթացքում մենք ավարտել ենք համատարած կոլեկտիվացումը ԽՍՀՄ հիմնական հացահատիկային շրջաններում և դրա հիման վրա կուլակությանը — վորպես դասակարգ լիկվիդացիայի յենք յենթարկել: Մենք լուծել ենք «ով — ում» հարցը՝ թե քաղաքում և թե գյուղում՝ սոցիալիզմի օգտին, կապիտալիզմի դեմ և վերջնականապես կտրել ենք կապիտալիզմի արմատները գյուղում:

Առաջին հնգամյակի հետևանքով ավարտված է սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումը:

Այդ հաջողությունները ձեռք են բերված կուսակցության հիմնական գծի հաղթանակների շնորհիվ, դասակարգային թշնամու, գլխավոր վտանգ հանդիսացող աջ թեքման, «ձախ» ծռումների, Լոմինաձե-Սիրցով խմբակի աջ-«ձախ» բլոկի դեմ վճռական պայքար մղելու և հակահեղափոխական տրոցկիզմը ջախջախելու շնորհիվ:

Մեր բոլոր հաջողությունները ձեռք են բերված մեր յերկրի բանվորների ու կոլտնտեսական մասսաների արտադրական և քաղաքական ակտիվության լայն վերելքի հետևանքով, ղեկավարությամբ Համկոմկուսի (բ) լենինյան Կենտկոմի՝ գլխավորությամբ մեր առաջնորդ և ուսուցիչ ընկ. Ստալինի, վորը մեր յերկիրը հաղթանակից հաղթանակ է տանում: Առաջին հնգամյակի հաջող կատարումն, — ինչպես ասել է ընկ. Ստալինը, — հասցրել է այն բանին, —

«վոր Խորհրդային Միությունը թույլ, պաշտպանության չպատրաստված յերկրից դարձել է պաշտպանու-

թյան կողմից հզոր յերկիր, ամեն տեսակի պատահականությունների պատրաստ յերկիր, այնպիսի մի յերկիր, վորն ընդունակ ե մասսայական մասշտաբով արտադրել պաշտպանության բոլոր ժամանակակից գործիքները և դրանցով մատակարարել իր բանակը դրսից հարձակում լինելու դեպքում»:

Ընկ. Ստալինի նախաձեռնությամբ ստեղծված ՄՏԿ և խորհտնտեսությունների քաղբաժիններն ահագին դեր են խաղացել կոլտնտեսությունների և խորհտնտեսությունների կազմակերպչա – տնտեսական և քաղաքական ամրապնդման գործում: Դրա ցայտուն ապացույցն են հանդիսանում 1933 թվի գյուղատնտեսական տարվա արդյունքները, բարձր բերքատվությունը, կոլտնտեսականների յեկամուտների աճը, պետությանը հաց հանձնելու պլանների մինչժամկետ ու հաջող կատարումը և այլն:

Այդ ժամանակի ընթացքում բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության մեջ, կուսակցության ղեկավարությամբ աճել են սոցիալիստական շինարարության նոր հարյուրավոր և հազարավոր կազմակերպիչներ և հրամանատարներ:

Զգալիորեն բարելավվել ե Խորհրդային Միության բանվորների և աշխատավոր մասսաների նյութական – կենցաղային դրությունը, խիստ առաջ ե շարժվել յերկրի կուլտուրական աճը: Լայնորեն ծավալվել ե գիտական – տեխնիկական միտքը: Գիտության և տեխնիկայի բնագավառում այժմ մեր ունեցած նվաճումներից շատերը մեր սեփական աշխատանքի արդյունքն են կուլտուրական շինարարության ֆրոնտում: Խորհրդային Միությունը գիտական – տեխնիկական մտքի զարգացման ասպարեզում դառնում ե համաշխարհային կենտրոն, դեպի վորին ձգտում են և նայում մեծ հույսով, մեծ սիրով բոլոր յերկրների գիտական – տեխնիկական մտքի լավագույն ներկայացուցիչները: Դրան ապացույց ծառայում են այն մի շարք հաղթանակները, վոր տարել են մեր գիտական ուժերը միջազգային գիտական կոնֆերանսներում: Մեր բոլոր հաջողությունների հետեվանքով ստեղծված են բոլոր հնարավորությունները յերկրորդ հնգամյակի հոյակապ ծրագիրը կատարելու համար:

Պետք ե առանձնապես մատնանշել Խորհրդային Միության ազգային շրջանների տնտեսական – կուլտուրական զգալի աճը, շրջաններ, վորոնք հաջողությամբ առաջ շարժվելով, վերացնում են իրենց տնտեսական և կուլտուրական հետամնացությունը:

Առաջին հնգամյակի և յերկրորդ հնգամյակի առաջին տարվա հաջող ավարտումը, սոցիալիստական շինարարության բոլոր ասպարեզներում մեր հոյակապ հաջողությունները հանդիսանում են՝ մի յերկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորության մասին Լենինի և Ստալինի թեորիայի հաղթանակը և ԽՍՀՄ-ում ներքին ուժերով սոցիալիստական հասարակություն կառուցելու անհնարինության մասին հակահեղափոխական տրոցկիզմի «թեորիայի» հերքումը:

Մեզ մոտ ԽՍՀՄ-ում — սոցիալիստական շինարարության բուռն աճում, ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում

ծաղկում, աշխատավոր մասսաների բարեկեցության աճում, գործազրկության վերացում: Կապիտալիստական յերկրներում 5-րդ տարին ե շարունակվում ե համաշխարհային տնտեսական կրիզիսը, կրճատվում ե արտադրությունը և աճում գործազրկությունը: Այդ յերկու հանդամանքները բնորոշում են յերկու սիստեմների — բարձրացող սոցիալիզմի սիստեմի և կործանվող կապիտալիզմի սիստեմի դրությունը: Մեր հետագա առաջխաղացման տեմպերն արտացոլված են 17-րդ համագումարի առթիվ հրապարակված ընկ. ընկ. Մոլոտովի և Կույբիշևի զեկուցումների թեզիսներում:

Ընկերներ, յերկրորդ հնգամյակի հիմնական վճռական խնդիրը հանդիսանում ե ամբողջ ժողովրդական տնտեսության վերակառուցման ավարտումը: Իսկ 2-րդ 5-ամյակում ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցման ավարտման վճռական պայմանը հանդիսանում ե նոր տեխնիկայի և նոր ձեռնարկությունների յուրացումը, կուսակցության առաջնորդ ընկ. Ստալինի այն լոզունգի իրականացման համար, թե 2-րդ հնգամյակում նոր շինարարության պաֆոսը «պետք ե մենք լրացնենք նոր գործարանների և նոր տեխնիկայի յուրացման ենտուզիազմով, ՊԱՖՈՍՈՎ, աշխատանքի արտադրողականության լուրջ բարձրացմամբ, ինքնարժեքի լուրջ իջեցմամբ»: 1934 թիվը կլինի բարձրորակ տարի սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառներում, Խորհուրդների մեծ յերկրի աշխատանքի ու կյանքի բոլոր բնագավառներում բարձ – կուլտուրական տարի:

Չպետք մոռանալ, վոր մեր բոլոր միջոցառումները կիրառվելու յեն կատաղի դասակարգային պայքարի պայմաններում՝ թե մեր յերկրի ներսում ջարդված, բայց դեռ վերջնականապես չջախջախված դասակարգային թշնամու մնացորդների և թափթփուկների դեմ և թե միջազգային իմպերիալիզմի դեմ: Պետք ե ինկատի ունենալ, վոր

«Մեր ուժը թե ռուս և թե միջազգային դասակարգային մեծությունների բոլոր առկայությունների հաշվառքի լիակատար պարզության ու զգաստության ե, իսկ հետո այստեղից բղխող յերկաթե յեռանդը, հաստատակամությունը, վճռականությունը, պայքարի անձնվիրությունը: (ԼԵՆԻՆ):

Հաստատակամությունը, վճռականությունը, անձնվիրությունը, յերկաթե յեռանդը — մեր հաջողությունների գրավականը կլինեն: Սոցիալիստական շինարարության հաջողությունները և մեր յերկրի պաշտպանունակության աճումը չափազանց բարձրացրել են ԽՍՀՄ տեսակարար կշիռը միջազգային ասպարեզում, վորով և բացատրվում ե մեր դիվանագիտության խոշոր հաջողությունները վերջին ժամանակներս: (Ծափահարություններ):

Սոցիալիստական շինարարության ֆրոնտի հաջողությունները և ամենից առաջ հզոր, խոշոր, տեխնիկապես առաջավոր ին–

դուստրիայի ստեղծումը չափազանց բարձրացրել են ԽՍՀՄ տեսակարար կշիռը միջազգային ասպարիզում: Հենց տնտեսական շինարարության ֆրոնտի մեր հաղթանակներով են բացատրվում ԽՍՀՄ խոշորագույն դիվանագիտական հաջողությունները վերջին ժամանակներս: Խոշորագույն հաջողություն է Ամերիկայի Միացյալ Նահանգների կողմից մեզ ճանաչելը՝ նախագահ Ռուզվելտի նախաձեռնությամբ և մեր արտաքին քաղաքականության ընդհանուր գծին ամբողջովին համապատասխանող հիմունքներով: Դրա հետ միասին դիվանագիտական հարաբերությունների վերականգնումը Իսպանիայի և Ուրուգվայի հետ, նույնպես այդ պետությունների նախաձեռնությամբ, Իտալիայի հետ չհարձակվելու և չեզոքության մասին պայմանագիր կնքելը, ագրեսորի գաղափարը վորոշելու և չհարձակման մասին մի շարք պայմանագրեր կնքելը մի շարք պետությունների հետ (Լեհաստան, Ֆինլանդիա, Եստոնիա, Լատվիա, Լիտվիա, Ռումինիա, Չեխո-Սլովակիա, Տաճկաստան, Պարսկաստան, Աֆղանստան), հարաբերությունների բարելավումը Լեհաստանի հետ — հանդիսանում են միջազգային ասպարիզում մեր ազդեցության աճման ցայտուն վկայությունը և մեր ամուր անշեղ խաղաղության քաղաքականության յաղթական արտահայտությունը:

Առանձին նշանակություն ունի մեր հարաբերությունների լավանալը Ֆրանսիայի հետ, վորն առաջ Խորհրդային Միության դեմ ինտերվենցիայի գլխավոր ներշնչողն ու կազմակերպիչն եր հանդիսանում: Խորհրդային Միության ուժեղացումը և ֆաշիստական Գերմանիայի կողմից վտանգի աճումը ստիպել են Ֆրանսիային վճռականորեն փոխել իր վերաբերմունքը դեպի մեզ:

Ռազմածովային ժողկոմ ընկ. Վորոշիլովի գլխավորած մեր պատվիրակության գնալը տաճկական հանրապետության 10-ամյակի տոնակատարությանը և նրան ցույց տված միահամուռ բացառիկ ընդունելությունը մի ավելորդ անգամ ընդգծեցին խորհրդա – տաճկական հարաբերությունների բարեկամությունը և խաղաղական մեծ նշանակությունը:

Վերջապես, չի կարելի չնշել և մեր հարաբերությունների լավացումը Պարսկաստանի հետ, մանավանդ ընկ. Կարախանի Պարսկաստան գնալուց հետո:

Վերոհիշյալ յերկրների հետ խաղաղ հարաբերությունների ամրապնդման հակառակ՝ մեր հարաբերությունները Ճապոնիայի հետ ավելի յեն սրվել: Ճապոնիան կառավարող գեներալ Արակիի ռազմական – ֆաշիստական խմբակը բացեիբաց ձգտում է Չին-Արեվելյան յերկաթուղու, Մերձծովյան շրջանի և ամբողջ Հեռավոր Արեվելքի գրավմանը: Ճապոնիայի կատաղի սպառազինումը, Մանջուրիայում ստրատեգիական յերկաթուղիների և խճուղիների կառուցումը, ավիոբազաների ստեղծումը, զորամասերի ուժեղացումը, խորհրդային քաղաքացիների սիստեմատիկ ձերբակալությունները և բռնությունները նրանց նկատմամբ, Չին-Արեվելյան յերկաթուղու աշխատանքի տապալումը, բացեիբաց

ԽՍՀՄ վրա հարձակվելու առիթ ստեղծելու նպատակով արվող ամեն տեսակի պրովոկացիաները չափազանց սրում են պատերազմի սպառնալիքը Հեռավոր Արեվելքում: Ճապոնիայի ինտերվենցիոն քաղաքականությունը լիակատար հավանություն և աջակցություն է գտնում ամենից առաջ Գերմանիայի կողմից և վորոշ չափով ել Մեծ Բրիտանիայի կողմից, վորն այժմ գրավել է Ֆրանսիայի տեղը, վորպես ԽՍՀՄ դեմ ինտերվենցիայի գլխավոր ներշնչող:

Գերմանիայի ֆաշիստական կառավարությունը, վորը հայտարարել է իր՝ «Յեվրոպան համաշխարհային բոլշեվիզմից փրկելու միսիայի» մասին, բացեիբաց ձգտում է գրավել Բելոռուսիան, Ուկրայինան և ԽՍՀՄ մյուս մասերը:

Կապիտալիստական յերկրների պրոլետարիատը հերոսական պայքար է մղում կապիտալիզմի դեմ: Այդ կողմից առանձին ուշադրության է արժանի դրությունը Գերմանիայում: Չնայած Հիտլերի բոլոր ջանքերին՝ վոչնչացնելու կոմկուսը Գերմանիայում դաժան տեռորի և պրովոկացիայի միջոցով, — Գերմանիայի հերոսական կոմունիստական կուսակցությունը շարունակում է իր պայքարը ֆաշիստական արյունոտ դիկտատուրայի դեմ: Կոմկուսի անդամների վերացուցակագրմանը ներկայացել է 80 տոկոսը: Բեռլինում մի քանի ամսվա ընթացքում կոմունիստները 18 ցույց են կազմակերպել: Լայպցիգի դատավարության յելքը մի շրխկան ապտակ է յեղել հիտլերյան ռեժիմին, վորովհետև իրերի ընթացքով ֆաշիստական ռեժիմն է յեղել նստած մեղադրական աթոռին, այլ վոչ թե գերմանական կոմկուսը: Նախկին մեղադրյալ – կոմունիստների, մանավանդ ընկ. Դիմիտրովի հերոսական պայքարը դարձել է այն ահագին ուժի և անվախության ցուցանիշը, վորին տիրապետում է կոմունիզմը՝ կապիտալիզմի դեմ մղվող պայքարում (ծափահարություններ):

Բուրժուազիայի կարգադրության տակ չկա այնպիսի ուժ, վորը կարողանա ստիպել պրոլետարիատի հեղափոխական ավանգարդ — կոմկուսին — այլ կերպ մտածել և գործել:

Ընկերներ Դիմիտրովը, Տանեվը և մյուսները հրաշալի կերպով այդ ցույց տվին ամբողջ աշխարհին, ամբողջ համաշխարհային հասարակությանը:

Վոչ ֆաշիստական տեռորը, վոչ գազանային հալածանքները, վոչ աքսորը, վոչ բանտը, վոչ սպիտակ տեռորը, վոչ բուրժուական դրաքննությունը — չեն կարողացել մթագնել մեր նվաճումները, չեն կարող կանգնեցնել համաշխարհային պրոլետարիատի ավելի ու ավելի աճող հեղափոխ. շարժումը: Գերմանիայում հեղափոխական նոր վերելքի աճման մասին վկայում է 1933 թվին տեղի ունեցած 1095 գործադուլը, վոր տեղի յեն ունեցել չնայած գործադուլավորների դեմ դաժան խստություններ գործադրելուն, և վոր ավելի կարեվոր է, հարձակողական բնույթ կրող գործադուլների թվի աճումը, քաղաքական գործադուլների թվի աճումը (ընդամենը մոտ 400):

Պատերազմի և ինտերվենցիայի նոր սպառնալիքի հանդեպ մեր քաղաքականությունը շարունակում է մնալ խաղաղության հաստատուն և հետևողական քաղաքականություն: Մենք առաջարկել ենք լիակատար զինաթափում, մենք առաջարկել ենք Ճապոնիային ստորագրել չհարձակման պայմանագիր (վորը նա մերժել է), այն ամենը, ինչ հնարավոր է, մենք անում ենք խաղաղությունը պահպանելու և պատերազմի վտանգը վերացնելու համար, բայց միաժամանակ մենք պետք է չափազանց աչալուրջ լինենք և պատրաստ անխնայորեն հետ մղելու մեր սահմանների վրա հարձակվելու ամեն մի փորձ: «Ուրիշի հողից վոչ մի թիզ չենք ուզում, բայց և մեր հողից, վոչ մի վերշոկ մեր հողից չենք տա: վոչ վոքի» (ՍՏԱԼԻՆ):

Մեզ վրա հարձակվելու դեպքում, մենք կկռվենք, ինչպես ընկ. Մոլոտովն է ասել, մինչև թշնամու լիակատար ջախջախումը ֆրոնտում և մինչև հեղափոխությունը թիկունքում: Ամբողջ Խորհրդային Միությունը, այդ թվում է ԱՍԽՀ պրոլետարիատը և աշխատավորական մասսաները պետք է մոբիլիզացիայի յենթարկեն ամբողջ ուժերը յերկրի պաշտպանունակության հետագա ամրապնդման, մեր փառապանծ Կարմիր բանակի, նավատորմի և ավիացիայի հզորության ամրապնդման համար (ծափահարություններ):

Մեր յերկիրը — սոցիալիզմ կառուցող յերկիրը դարձել է համաշխարհային պրոլետարական հեղափոխության ամուր հենարանը, բազան, դարձել է համաշխարհային պրոլետարիատի հայրենիքը: Այդ հանգամանքը մեզ ավելի՛ յե պատասխանատու դարձնում մեր ամբողջ աշխատանքում, մեր ամբողջ քաղաքականությունում, մեր ամբողջ կյանքում: Մենք վոչ միայն մեր յերկրում ենք սոցիալիզմ կառուցում, այլև համառորեն, հաստատապես, ռեալ կերպով պատրաստում ենք համաշխարհային սոցիալիզմի հիմքը, համաշխարհային սոցիալիզմի բազան: Ահա թե ինչու Խորհրդային Միության հաջողությունները միջազգային պրոլետարիատի հաջողություններն են հանդիսանում:

Աճում և ամրապնդվում է Խորհրդային Միության զորությունը: Նրա անբաժան մասը — Անդրկովկասյան Ֆեդերացիան, վորն անցյալում գաղութային ծայրամաս եր, այժմ իրենից ներկայացնում է նոր, ինդուստրիալ - ագրարային առաջավոր հանրապետություն՝ ուժեղ ինդուստրիալ բազայով: Բաքվի նախկին նավթարդյունաբերության՝ կտոր-կտոր և ցիրուցան, հարյուրավոր մասերի բաժանված, 7 միլիոն տոնն նավթահանությամբ մասնավոր - կապիտալիստական ձեռնարկությունների փոխարեն՝ այսոր մենք ունենք ուժեղ, տեխնիկապես կատարելագործված Ադրբեջանի սոցիալիստական նավթային արդյունաբերությունը, վորն անցած տարիների ընթացքում 2½ անգամից ավելի նավթ է տըվել, քան մինչպատերազմյան շրջանում: Իսկ 1934 թվին տալու յե յերեք անգամ շատ նավթ, այսինքն՝ 22 միլիոն տոնն (ծափահարություններ):

Անդրկովկասում հսկայական աշխատանքներ են տարվել մեր արդյունաբերության վերակառուցման և ածխային նոր ճյուղեր ստեղծելու համար: Մենք այսոր ունենք վոչ միայն վերակառուցված Տկվարչելու և Տկիբուլու ածխային բազաները, այլև ունենք Ախալցխայի նոր, հարուստ ածխի հանքերը:

Անդրֆեդերացիան վերջին ժամանակներս վոչ միայն բարձրացրել և հսկայական աշխատանքներ է տարել սև ու գունավոր մետաղագործության վերականգնման ուղղությամբ, այլ և գունավոր մետաղագործության նոր ճյուղեր ստեղծելու գծով: Մենք ներկայումս ունենք վոչ միայն վերակառուցված պղնձի արդյունաբերություն — Ղափանի և Ալլահվերդու հանքերը, այլև արդեն փորձերն ավարտել և հավանական է այս տարի կանցնենք նոր հիմնական գործարանի կառուցման — ալյումին արտադրող Գյանջայի կավահողային գործարանի կառուցման (ծափահարություններ):

Մեծ աշխատանքներ են տարվել Անդրկովկասում քիմիական արդյունաբերություն ստեղծելու ուղղությամբ, առանձնապես Հայաստանում: Ներկայումս Հայաստանում կառուցվող սինթետիկ կաուչուկի գործարանը վոչ միայն անդրկովկասյան նշանակություն ունի, այլ և հանդիսանում է համամիութենական միոբյեկտ, վորը տնտեսական - քաղաքական խոշոր նշանակություն ունի մեր ավտոմոբիլային արդյունաբերությունը ռետինով ապահովելու տեսակետից:

Ելեկտրիֆիկացիայի բնագավառում մենք ունենք հետևյալը. յեթե 1929 թվին ելեկտրոկայանների ամբողջ զորությունը կազմում եր 92 հազար կիլովատ, ապա այսոր մենք ունենք ելեկտրոկայաններ 304 հազար կիլովատ ընդհանուր զորությամբ, չխոսելով այն մասին, վոր կառուցման մեջ են գտնվում մի շարք նոր ելեկտրոկայաններ. արդեն միջոցներ են տրացված և սկսված է խոշոր հզոր հիդրոկայանի կառուցումը Թարթառ գետի վրա Ադրբեջանում:

Խոշոր աշխատանքներ են տարվել Անդրկովկասի գյուղական տնտեսության վերակառուցման բնագավառում: Անդրկովկասը հացահատիկային սպառող մարզից այժմ դառնում է արտադրող: Անդրկովկասը հանձինս Ադրբեջանի վոչ միայն դարձել է Խորհրդային Միության բամբակային յերկրորդ բազան, այլև դարձել է յեգիպտական բարձրորակ բամբակի հիմնական բազան:

Արևադարձային կուլտուրաների բնագավառում Անդրկովկասը հանձինս գլխավորապես Վրաստանի դարձել է հիմնական ու միակ բազան արևադարձային և ցիտրուսային կուլտուրաների գծով:

Անդրկովկասի այդ հաջողությունները մեր կուսակցության գլխավոր գծի հաղթանակը հանդիսանալով, լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության հաղթանակի արդյունքը հանդիսանալով, հանդիսանում են նույնպես և Անդրկովկասում լենինյան այդ գլխավոր գծի, լենինյան-ստալինյան քաղաքականության ճիշտ կիրառման արդյունքը:

Չի կարելի չմատնանշել այն խոշորագույն աշխատանքները, վոր տարվել են վերջին տարիների ընթացքում Անդրկովկասի բոլշեվիկների կողմից, կուսակցության Յերկրային Կոմիտեի և անհատապես Անդրկովկասի հաղթանակների կազմակերպիչ ու ղեկավար ընկ. Բերիայի կողմից այդ նվաճումներին հասնելու գործում:

1929–30 թվականների և 1931 թ. խոշորագույն սխալները Անդրկովկասում ստեղծել եյին միանգամայն լարված դրություն գյուղում:

Անդրկովկասի բոլշեվիկները մեր կուսակցության գլխավոր գծի հիմունքով, մեր կուսակցության առաջնորդ ընկ. Ստալինի ցուցմունքների հիմունքով, նրա անմիջական ղեկավարությամբ ու անձնական ոգնությամբ ուղղելով մի շարք թերություններ, մի շարք կոպիտ աղավաղումներ, վոր տեղ են ունեցել Անդրյերկոմի հին ղեկավարության և անդրկազմակերպության աշխատանքներում, կարողացել են հսկայական աշխատանք կատարել: Յերկրային Կոմիտեն և նրա ղեկավար ընկ. Բերիան արդարացրել են ընկ. Ստալինի վստահությունն անդրկովկասյան բոլշեվիկների նկատմամբ (ծափահարություններ):

Շնորհիվ կուսակցության քաղաքականության ճիշտ կիրառմանը գյուղում, այսոր վճռականորեն ուղղել ենք թույլ տրված սխալները և ամենահաստատուն դրություն ստեղծել մեր անդրկովկասյան գյուղում: 1933 թվի գյուղատնտեսական կամպանիայի հաջող անցկացնելու հետեվանքով, մենք հասել ենք խիստ վերելքի մեր անդրկովկասյան կոլտնտեսային մասսայի նյութական դրության բարելավման գործում և ապահովել ենք Անդրկովկասում գյուղատնտեսական հիմնական բոլոր մթերումների հաջող կատարումը: Այս բոլորը հետեվանք են կուսակցության գլխավոր գծի ճիշտ կիրառման:

Ադրբեջանում սոցիալիստական շինարարության մինչեվ Համկոմկուսի (բ) 17-րդ համագումարն ունեցած հանրագումարը տալով՝ անհրաժեշտ է ընդգծել ԱՍԽՀ տնտեսական և կուլտուրական այն բացառիկ վերելքը, վոր վճռական հաջողություններ է ապահովել Ադրբեջանի նախկին տնտեսական և կուլտուրական հետամնացությունը վերացնելու գործում:

ԱՍԽՀ տնտեսական և կուլտուրական ծաղկումը փայլուն կերպով հաստատում է մեր կուսակցության լենինյան — ստալինյան ազգային քաղաքականության ճշտությունը:

Ընկ. Ստալինը կուսակցության 12-րդ համագումարում ասել է.—

«Անհրաժեշտ է, վորպեսզի բացի դպրոցից և լեզվից, ռուսական պրոլետարիատը բոլոր միջոցները ձեռք առնի, վորպեսզի ծայրամասերում, կուլտուրական տեսակետից հետ մնացած հանրապետություններում, — իսկ նրանք հետ են մնացել վոչ թե իրենց մեղքով, այլ այն պատճառով, վոր առաջներում նրանց նայել են վորպես հումույթի աղբյուրների, — անհրաժեշտ է հասնել այն բանին, վորպեսզի այդ հանրապետություններում արդյունաբերության ոջախներ կառուցվեն»:

II. ՊԱՅՔԱՐ ՆԱՎԹԻ ՀԱՄԱՐ

Դեռ նոր ավարտված Բաքվի համաքաղաքային կուսակցական 21-րդ կոնֆերանսն իր ամբողջ աշխատանքի կենտրոնում դրել է նավթի համար մղվող պայքարը: Դա վոչ միայն Բաքվի բոլշեվիկների, այլ և ամբողջ Ադրբեջանի կուսակցական կազմակերպության աշխատանքի հիմքն է, մեր առաջին և վճռական խնդիրը, նավթը և բամբակը — դա Ադրբեջանի տնտեսության զարգացման մեջ յերկու գլխավոր ուղղություններ են:

Ադրբեջանի նավթարդյունաբերության ձեռք բերած պատմական հաջողությունները լավագույն վկայությունն է այն բանի, թե ինչպիսի հսկայական տեմպերով զարգանալու ընդունակություն ունի կապիտալիզմի կապանքներից ազատված արդյունաբերությունը:

Բաքվի նավթային արդյունաբերությունը կապիտալիստների համար լավագույն տարի համարված 1913 թ. տվել է 7 միլիոն տոնն նավթ: Ազնեֆթը 1933 թվին տվել է 15·330·000 տոնն նավթ, այսինքն նախապատերազմականի դիմաց յերկու անգամ ավելի:

1933 թվին 25%-ով ավելի է հանված նախորդ տարվանից: Մենք վոչ միայն կարողացել ենք տարեկան հիմնական ծրագիրը գերակատարել համարյա մի միլիոն տոննով, այլ և կարողացել ենք լրիվին կատարել այն բարձրացրած պլանը, վորը տըրված է յեղել մեզ Համկոմկուսի (բ) Կենտկոմի և կառավարության հատուկ վորոշումով: Նավթահանման պլանը կատարելով, մենք պատվով ենք դուրս յեկել և նավթամշակման պլանի կատարման գործում: Վատ չենք աշխատել և նոր հանքավայրերի հետախուզումների ասպարեզում:

1933 թվի նավթահանության պլանի կատարման հաջողությունների համար մենք շատ բանով պարտական ենք Համկոմկուսի (բ) Անդրյերկոմի և անձնապես ընկ. Բերիայի կողմից ցույց տված կոնկրետ, ոպերատիվ ղեկավարությանը:

1934 թվին Ազնեֆթը պետք է տա 22·000·000 տոննից վոչ պակաս, այսինքն նախապատերազմական մակարդակից յերեք անգամ ավելի:

Այդ հսկայական խնդիրների լույսի տակ մենք պարտավոր ենք ամենից առաջ հայտնաբերել Ազնեֆթի աշխատանքի բոլոր այն թերությունները, վորոնք խանգարում են 1934 թվին նավթի համար մղվող մեր պայքարին:

Ինչպես հայտնի յե, Ադրբեջանի նավթային արդյունաբերության արմատական տեխնիկական վերակառուցումը հիմնական գծերով կատարված է արդեն առաջին հնգամյակի սկզբին: Դա ապահովել է հաջորդ տարիների նավթահանության բուռն աճումը, դա պայմանավորել է նավթային հնգամյակը յերկու և կես տարում կատարելը: Սակայն վերջին տարիներս Ազնեֆթի տեխ-

նիկական վերակառուցման տեմպերը զգալիորեն դանդաղել են: Այդ դանդաղումը չէր կարող չանդրադառնալ նավթահանության տեմպերի վրա: Այդ հանգամանքն առանձնապես արտահայտվել է 1932 թվին:

1932 թվի ծրագրի տապալումը հետեվանք է յեղել Համկոմկուսի (բ) Կենտկոմի 1931 թվի հոկտեմբերի 31-ի վորոշումը չըկատարելուն, մի վորոշում, վորը Բաքվի նավթագործների առաջ դրել եր նավթային արդյունաբերության հետագա տեխնիկական վերակառուցման խնդիրը:

Վորպեսզի ապահովել 1934 թվի 22 միլիոն տոնն նավթի, 677·000 մետր շահագործական հորափորման, 112 հազար մետր շահագործական – հետախուզական հորափորման ծրագրի կատարումը — հարկավոր է վճռական բեկում Ադնեֆթի աշխատանքի բարելավման գործում:

Աշխատանքի վորակը կարելի կլինի ապահովել առաջավոր տեխնիկայի արմատացման և յուրացման համար մղվող ամենօրյա պայքարով, այդ հիման վրա բոլոր ներքին միջոցներն առավելագույն չափով օգտագործելու համար մղվող պայքարով, աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու համար մղվող պայքարով, բանվորների և ինժեներա – տեխնիկական աշխատողների վորակավորումը բարձրացնելու և աշխատանքի ու արտադրության այնպիսի կազմակերպման հիման վրա, վորոնք կերաշխավորեյին կազմակերպչական ձևերի անհրաժեշտ պարզությունն ու բանվորական ուժի պատշաճ խտացումը:

Ադնեֆթի ամենից հետ մնացող տեղամասը մինչև վերջին ժամանակներս մնում է հորափորումը: Վոչ մի տեղ մենք վորակական ցուցանիշներում այնպիսի հետամնացություն չունենք, ինչպես այդ վճռական տեղամասում: Ուստի 1934 թվի հիմնական խնդիրը պետք է լինի ամենանվազագույն ժամկետներում հաղթահարել հետ մնալը հորափորման գործում: Իր հերթին դա կապահովի բարձր տեմպեր և նավթահանության մեջ:

Դրա հետ միաժամանակ մենք մեր աշխատանքի մեջ ունեցել ենք և ունենք դեռ մի շարք աններելի սխալներ և թերություններ:

Նավթի խնդրում յեղած թերությունների շարքին է պատկանում նաև Ադնեֆթի ապարատի առանձին օղակներում դեպի աշխատանքը յեղած անբավականաչափ պետական մոտեցումը: Ադնեֆթի աշխատողները հանգստացած 1933 թվի նավթի համար մղած պայքարի հաջողություններով, մոռացություն են տալիս վաղվա խնդիրները: Այդ բանն ամենից ավելի զգում է Ադնեֆթի նոր ղեկավարությունը հանձինս ընկ. Պետրոսնի և Աղավերդիյեվի, վորոնք այդ խոշորագույն թերությանն են բախվել ոպերատիվ պլանի համար պրակտիկ միջոցառումներ կազմելիս:

Այդ դրությունը, թերևս, կարելի յե վերագրել և մյուս տրեստներին — Մշակման և Հեռավոր Հետախուզումներին:

Նավթի մղման, պահեստների տարողության, նավթը ժամանակին արտահանելու հարցերում յեղած վոչ պետական մոտեցումը սեղմում և արգելակում է պլանի կատարման հաջող ընթացքին:

Ներկայումս մեր տրեստների — և՛ Ադնեֆթի, և՛ Նավթամըշակման տրեստի, և՛ Հեռավոր հետախուզությունների տրեստի ղեկավարությունը հիմնականում զբաղված է գլխավորապես այդ թերություններն ուղղելով: Կասկած չկա, ընկերներ, վոր մոտիկ ապագայում, չնայած տարվա սկզբին տեմպերի վորոշ թուլացման, առանձին օղակներում գոյություն ունեցող հանդըրստացումը, կհաղթահարվի, գործը կուղղվի, և հունվարի առաջին կեսին կուտակված պարտքը անպայման կփակվի: Դըրան յերաշխիք է հանդիսանում այն բոլշևիկյան մոտեցումը, վոր մենք ներկայումս տեսնում ենք, ինչպես Ադնեֆթի ղեկավարության մեջ, այնպես և տեղերում — ռայոններում, նավթահանքերում: Համենայն դեպս մենք նկատի պետի ունենանք, վոր վոչ միայն Ադնեֆթի ղեկավարությունը, վոչ միայն նավթահանքերի, նավթամշակման և հեռավոր հետախուզումների տրեստների ղեկավարությունը, այլ Ադրբեջանի ամբողջ կազմակերպությունը պետք է լծվի նավթային պլանի կատարման պայքարին, լծվի վոչ թե միտինգներով, վոչ թե բանաձևերով, վոչ թե ծափահարություններով, այլ ամենօրյա ընթացիկ, սև աշխատանքով: Նավթի համար մղվող պայքարում ամենալայն մասնակցություն ցույց տալու հնարավորությունները կան մեր բոլոր ռայոններում առանց բացառության, սկսած բանվոր հավաքագրման հարցերից և վերջացած այնպիսի հարցերով, ինչպիսին է՝ նավթագործ բանվորների մատակարարման համար ապակենտրոնացված մթերումները:

Մեր խնդիրը կայանում է նրանում, վորպեսզի՝ Ադրբեջանի նավթարդյունաբերության տեխնիկական վերակառուցման նոր հսկայ ծավալներով, վճռականապես վերացնելով Ադնեֆթի առանձին տեղամասերի թերությունները, սխալները, ճեղքվածքները, բոլշևիկորեն արմատախիլ անելով օպորտունիզմը, դանդաղաշարժությունը, սոցիալիստական շինարարության ներկա շրջանի պահանջների համապատասխան աշխատել չցանկանալն ու անկարողությունը, — ապահովել 1934 թ. նավթի պլանի հաջողությամբ կատարումը:

III. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Լենինյան ազգային քաղաքականության կիրառման ել ավելի ցայտուն ցուցանիշ է հանդիսանում Ադրբեջանի շրջանների ինդուստրացումը: Մինչև հեղափոխությունն Ադրբեջանը գրեթե վոչ մի արդյունաբերություն չի ունեցել, բացի նավթայինից և փոքրաթիվ մանր ձեռնարկություններից, վորոնց թվում յեղել են տեքստիլ Ֆաբրիկը, մի քանի թզուկային բամբակազտիչ գործարաններ, մետաքսագործական Ֆաբրիկներ և ծխախոտի Ֆաբրիկը:

Ըստ էության՝ Ադրբեջանը յեթե չհաշվենք Բաքուն, յեղել է «ամենահետամնաց հանրապետական-ֆեոդալական հարաբերությունների յերկիր»: (Ընկ. Ստալինի՝ Ռուսկոմկուսի (բ) 10-րդ համագումարում արտասանած յեզրափակիչ խոսքից):

Այդ մասին ընկ. Ստալինը նույն 10-րդ համագումարում ասել է.

«Ադրբեջանն ամբողջությամբ վերցրած յես դասում եմ այն ծայրամասերի խմբին, վորոնք կապիտալիզմ չեն անցել, և վորոնց վերաբերմամբ անհրաժեշտ է այդ ծայրամասերը խորհրդային տնտեսության հունը քաշելու յուրատեսակ մեթոդներ կիրառել»:

Ադրբաջանի սոցիալիստական ինդուստրացումը լենինյան գաղափարի իրացման օրինակ է հանդիսանում հետամնաց յերկրների վոչ կապիտալիստական ուղիով զարգանալու նկատմամբ պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում, այն դրույթի իրացման, թե.

«Ամենից ավելի առաջավոր յերկրների պրոլետարիատի ոգնությամբ հետամնաց յերկրները կարող են անցնել խորհրդային հասարակակարգին և զարգացման վորոշ աստիճանների միջոցով — կոմունիզմին, մի կողմ թողնելով զարգացման կապիտալիստական ստադիան» (Լենին):

Այդ քաղաքականության կիրառման հիման վրա՝ կապիտալիստական արդյունաբերության հումքի բազայի պահեստ Ադրբեջանն սկսել է արագությամբ դառնալ ինդուստրիալ յերկիր: Ընդսմին առանձնապես անհրաժեշտ է շեշտել, վոր Ադրբեջանի արդյունաբերության աճման տեմպը (բացառյալ Ազնեֆթը) բարձր է Միության արդյունաբերության աճման տեմպից. յեթե Միության ամբողջ արդյունաբերության ընդհանուր արտադրանքը առաջին հնգամյակում աճել է 118,5 տոկոսով, ապա Ադրբեջանի արդյունաբերությունը նույն ժամանակամիջոցում աճել է 246 տոկոս:

Բաքվի արդյունաբերական ուժեղ զարգացման հետ միասին՝ առաջ է յեկել յերկրորդ արդյունաբերական կենտրոն — Գյանջան, վորտեղ կառուցված է և սարքավորված լավագույն ստանոկներով հսկայական մանածագործական ֆաբրիկ, կաշվի գործարան, կարի ֆաբրիկ, ձեթհանի գործարան և այլն:

Գյանջայի արդյունաբերության արտադրանքը 1927–28 թվից մինչև 1932 թիվն աճել է չորս անգամ:

Գյանջան արագությամբ զարգացող մի ինդուստրիալ պրոլետարական կենտրոն է, վորի նշանակությունն ամենամոտ տարիներին պետք է անի ահագին չափերով, յերբ Դաշքեսանի հանքերի բազայի վրա կկառուցվի մետաղագործական գիգանտը և ալյումինի կոմբինատը: Այդ օբյեկտները Գյանջայի շրջանը համամիութենական նշանակություն ունեցող արդյունաբերական շրջան կդարձնեն:

Նուխում խոշորագույն մետաքսագործական կոմբինատ է ստեղծված: Ադրբեջանի շրջաններում ընդարձակված ու վերա-

սարքավորված են մի շարք բամբակազտիչ, կաշեգործական, յուղի քաշելու և ուրիշ գործարաններ:

Մի շարք վոչ միայն տեղական, այլ և շրջանային նշանակություն ունեցող էլեկտրոկայանների կառուցմամբ (Զուրգես)՝ հանրապետության էլեքտրատնտեսության զարգացման սկիզբն է դրված:

Ինքնավար Լեռնային Ղարաբաղը խորհրդայնացումից հետո զգալի չափով զարգացրել է մետաքսի թելի արդյունաբերությունը, Նուխուց հետո դառնալով ԱՍԽՀ մետաքսի արդյունաբերության յերկրորդ կենտրոն:

Նախիջևանի ԽՍՀ տեղական հումքի բազայի վրա՝ արդյունաբերության մի ամբողջ շարք ճյուղեր է ստեղծել:

38607

Յեթե վերցնենք Ադրբեջանի արդյունաբերությունն (առանց նավթահանման ու նավթամշակման), ապա նրա աճումն արտահայտվում է բարձր ցուցանիշներով՝ մինչպատերազմական մակարդակի համեմատությամբ — 5,3 անգամ, իսկ 1928 թվի մակարդակի համեմատությամբ — 2,5 անգամ: Հետևանքը՝ ԱՍԽՀ արդյունաբերության տեսակարար կշիռն, առանց նավթահանման ու նավթամշակման, Ադրբեջանի ամբողջ ժողովրդական տնտեսության համեմատությամբ 1913 թվի 20 տոկոսից՝ 1928 թվի 27 տոկոսից աճել և 1932 թվին հասել է 41 տոկոսի:

Հանրապետական արդյունաբերության ամբողջ արտադրանքի 90 տոկոսից ավելին տալիս են խորհրդային իշխանության օրոք նորապես վերակառուցված և նոր ֆաբրիկաներն ու գործարանները:

1. ԷԼԵԿՏՐԻՖԻԿԱՑԻԱ

Առաջին հնգամյակի ընթացքում գործարկվել են շրջանային կայաններ՝ Ներքին-Զուռնաբադի հիդրոէլեկտրոկայանը, Գյանջայի առաջին հերթին դիզելային էլեքտրակայանը, Ստեփանակերտի հիդրոէլեքտրակայանը, Զաքաթալայի հիդրոէլեքտրակայանը:

Ֆաբրիկ-գործարանների կայաններից ընդարձակված է Թաուզի ցեմենտի գործարանի էլեքտրակայանը և գործարկված է Գյանջայի մետաքսագործական ֆաբրիկի էլեքտրակայանը:

Ադրբեջանի էլեկտրակայանների ուժի ընդհանուր բարձրացումն առաջին հնգամյակում յեղել է 62 տոկոս: Այդ փաստը խիստ հարվածում է մուսավաթա-նացիոնալիստական տերերին, վորոնք փորձում են ապացուցել, թե Ադրբեջանում մենք էներգիայի տնտեսության վոչ մի ան չունենք:

Մեր պատմական հաղթանակները, վոր պայմանավորված են խորհրդային սիստեմի առաջավոր արտադրական հարաբերություններով, վոչ մի դեպքում չպետք է հանգստացման տրամադրություններ ստեղծեն, չպետք է մեզ հետ քաշեն այն թերություններից, իսկ առանձին դեպքերում և ճեղքումներից, վորոնք յերևան են գալիս մեր աշխատանքի ընթացքում:

Ամենից առաջ պետք է մատնանշել Ադրբեջանի շրջանների փոքր ինչ հետ մնալը մեր էներգետիկայի կողմից: Այդ հետ մնալը չեշտված է Անդրյերկոմի ու Հանրապետությունների կենտկոմների տված դեկուցման վերաբերմամբ՝ Համկոմկուսի (բ) Կենտկոմի 1931 թվի հոկտեմբերի 31-ի վորոշման մեջ, վորտեղ ասված է.

«Առաջարկել Միության Պետպլանին, Անդրյերկոմին ու ազգային կոմկուսների կենտկոմներին, վոր յերկրորդ հնգամյակը կազմելիս Անդրկովկասի ելեքտրիֆիկացիայի պլանը մշակեն, մանավանդ Ադրբեջանի, վոր ամենից ավելի է հետ մնացել ելեքտրիֆիկացիայի կողմից (մասնավորապես քննել Կարաախկալի և Զուրովկայի ելեքտրակայանների կառուցման արագացնելու հարցը)»:

Պետք է ասել, վոր Կենտկոմի այդ վորոշումը չի իրականացված: Մասնավորապես 1933 թիվը լուրջ փոփոխություններ չի մտցրել ԱՍԽՀ շրջանների ելեքտրամատակարարման գործում: Ընդհակառակը, 1933 թվին մի շարք մանր կոմունալ ելեքտրակայանների կառուցման տապալումն է նկատվում:

Կոմունալ ելեքտրիֆիկացիայի համար պլանով հատկացված 423 հազար ռուբլուց ընդամենը յուրացված է մոտավորապես 20 հազար ռուբլի: Դա հետեվանք է յեղել մեր վատ աշխատանքի:

Այդ կողմից բնորոշ որինակ է հանդիսանում Նուխու յերկրորդ հերթի հիդրոելեքտրակայանի կառուցումը: Յեթե առաջին յերեք յեռամսյակներում կառուցման գործը խոր ճեղքվածքի մեջ է յեղել, ապա կառուցման դեկավարությունը փոխելու հետեվանքով, չորրորդ յեռամսյակում այնպիսի տեմպեր են ծավալել, վոր տարեկան պլանի իրագործումն են ապահովել:

1934 *թիվը պետք է ելեքտրիֆիկացիայի ասպարեզում բեկման տարի հանդիսանա: Պետք է գործարկվի Նուխու հիդրոելեքտրակայանը, Ղուբայի հիդրոելեքտրակայանը, նույնպես և պետք է ծավալվի Թարթառի հիդրոկայանի կառուցումը, վորի համար առաջին տարին հատկացված է հինգ միլիոն ռուբլի:*

Բացի դրանից, պետք է ուժ տրվի շրջաններում կոմունալ կայաններ կառուցելու գործին: Մասնավորապես անհրաժեշտ է ապահովել Զանգելանի, Որդուբադի, Ղազախի, Ջուվանդի ելեքտրակայանների կառուցումը, ընդարձակել Գյանջայի, Ղուբայի, Շամախու ցանցը:

Կոպիտ հաշիվներով՝ Ադրբեջանը ոգտագործելու համար հնարավոր վոչ պակաս քան 3 միլիոն կիլովատ ջրային պոտենցյալ ուժ ունի, կենտրոնացած յերեք հիմնական սիստեմներում, այն է՝ Քուռ – Արաքսի, Լենքորանի և Կասպից ծովի սիստեմներում: *Մենք պետք է հենց այժմ բոլոր միջոցները ձեռք առնենք, գլխավորապես բազմակողմանի հետազոտությունների գծով, վորպեսզի ապահովենք յերկրորդ հնգամյակում նախատեսած Թարթառի շինարարությունն ու Շամխորի — Մինգեչաուրի և այլն նախագծումն:*

Այդ պրոբլեմների իրականացումը կապված է Միության ամբողջ ելեքտրիֆիկացիայի զարգացման ամբողջ գծի հետ: Ընկ. ընկ. Մոլոտովի և Կույբիշեվի՝ 17-*րդ կուս. համագումարին վերաբերվող թեզիսներում ասված է.*

«Նոր եներգետիկ բազա ստեղծել՝ ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի վերակառուցումն ավարտելու համար և բոլոր եներգետիկ հանգույցներում հզորությունների ռեզերվներ կազմել, վորոնք ժողովրդական տնտեսության ընդհանուր ելեքտրամատակարարումն ապահովեն»:

2. ԾԱՆՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Ծանր արդյունաբերության կարեվորագույն օբյեկտները նավթարդյունաբերությանը սպասարկող գործարաններն են (Շմիդտի անվան գործարան, «Բակինսկի Ռաբոչի», Ձերժինսկու անվ., Ռիկովի անվան, Մոնտինի անվան): Այդ գործարանների անընդհատ աշխատանքը բացառիկ տնտեսական — քաղաքական նշանակություն է ստանում:

Չնայած այդ գործարանների արտադրանքի զգալի աճման անցած տարվա ընթացքում (31,8 *տոկոս) և մասնավորապես խորհրդային նավթարդյունաբերության մի շարք վճռական նոմենկլատուրաներ ներմուծելուց ազատելու գործում ունեցած նվաճումներին* (1930 թվին բաց են թողնված նավթասարքավորումներ, վոր առաջ արտասահմանից եյին ներմուծում, 10,5 միլիոն վոսկու ռուբ.), մենք ստիպված ենք արձանագրելու, վոր մեծ խզում կա գործարանների բաց թողած արտադրանքի և նավթարդյունաբերության զարգացման տեմպի միջև:

Նավթարդյունաբերության կողմից սարքավորումների վորակի նկատմամբ գործարաններին ներկայացված պահանջները, վորպես կանոն, չեն բավարարվում: Այդ խզվածությունն զգացվում է նաև քանակական ցուցանիշների նկատմամբ: Մեր առաջ հսկայական խնդիր է դրված — 1934 *թվին վերացնել այդ խզվածությունը:*

Գործարանների մշակած արտադրանքի վորակի բարելավման և քանակի բարձրացման վճռական գործոնը պիտի հանդիսանա այդ գործարանների մասնագիտացումը: Այնպիսի գործարանը, ինչպես, որինակ Շմիդտի անվան գործարանն է, չպիտի արտադրի մոտ 50 տեսակի զանազան նոմենկլատուրաներ, ինչպես այդ յեղել է 1933 թվին, այլ պիտի կրճատի մինչև 10-14, վոչ ավելի:

Բայց, վերջին հաշվով Ազնեֆթեմաշի գործարանների հաջող աշխատանքը կախված է ներքին տեխնիկական և կազմակերպչական անհարթությունների վերացումից, բանվորների և ինժեներա-տեխնիկական անձնակազմի կողմից տեխնիկայի իսկական բոլշևիկյան յուրացումից: Այդ թերությունների վերացման համար մղվող պայքարում Ազնեֆթը կարող է և պետք է ապահովի 1934 *թվի նշած պլանը:*

Յեթե հաշվի չառնենք Ազնեֆթը և նրան սպասարկող նավթակառուցման գործարանները, ապա ԱՍԽՀ ծանր արդյունաբերությունը մինչև առաջին հնգամյակը ներկայացված է յեղել ընդամենը յերկու ցեմենտի գործարաններով և ծծմբային կալչադանի հանույթով:

Արդեն առաջին հնգամյակի վերջին ծանր արդյունաբերության արտադրանքն աճել է 248 տոկոսով: ԱՍԽՀ ամբողջ հանրապետական արդյունաբերության մեջ ծանր արդյունաբերության տեսակարար կշիռը մինչև առաջին հնգամյակի վերջը հասել է 10 տոկոսի, 1927–28 թվի 6,8 տոկոսի դիմաց: Չնայած ահագին աճմանը և նվաճումներին՝ Ծանր արդյունաբերության ժողկոմատի լիազորության աշխատանքը միանգամայն անբավարար է ընթանում:

Յերկրորդ հնգամյակի առաջին տարին բնորոշվում է ԱՍԽՀ ծանր արդյունաբերության համար պլանի խիստ թերակատարումով. Ադրծանրարդժողկոմատը 1934 թ. ընդհանուր արտադրանքի պլանը կատարել է ընդամենը 72 տոկոսով:

Առանձնապես անմխիթարական յեն ԱՍԽՀ Ծանր արդյունժողկոմատի հիմնական ճյուղի՝ ցեմենտի արդյունաբերության ցուցանիշները, վորը 1933 թ. ամբողջ տարվա ընթացքում դուրս չի յեկել խորը ճեղքվածքից: Ցեմենտի արդյունաբերության ճեղքվածքն առավել ևս անմխիթարական է, վորովհետև վերջին յերկու տարում այդ արդյունաբերությունը, մանավանդ Բաքվի ցեմենտի գործարանը, յենթարկվել է խոշոր վերակառուցման: Այս յերկու տարում ցեմենտի արդյունաբերության մեջ ընդհանուր ներդրումները կազմել են 5 միլիոն ռուբլի:

Ծանր արդյունաբերության ժողկոմատի արդյունաբերության անբավարար աշխատանքի հիմնական պատճառները կայանում են արտադրության և աշխատանքի վատթար կազմակերպման մեջ, տեխնիկային չտիրապետելու, աշխկարգապահության չարամիտ խախտողների նկատմամբ լիբերալ վերաբերմունք ցույց տալու մեջ, ինչ այստեղից էլ՝ սիստեմատիկ ավարիաների մեջ, վորոնք հարվածում են գործարանների աշխատանքի քանակական և վորակական ցուցանիշներին:

Բանուժի կազմակերպված հավաքագրման բացակայությունը, այդ ասպարեզում լիակատար ինքնահոսը, բանվորների նյութական – կենցաղային սպասարկման նկատմամբ անհրաժեշտ ուշադրության բացակայությունն առաջ են բերում հսկայական հոսունություն:

Առանձնապես անբավարար են վորակական ցուցանիշները՝ աշխատանքի արտադրողականությունն ամենևին չի հասնում պլանային առաջադրություններին, արտադրանքի ինքնարժեքը փոխանակ պլանով նախատեսված իջեցման՝ սիստեմատիկորեն բարձրանում է (ցեմենտի գործարանում արտադրանքի արժեքը բարձրացել է 15 տոկոսով):

Ծանրարդյունժողկոմատի լիազորության և նրա ձեռնարկությունների աշխատանքով ավելի ևս ցայտուն կերպով հաստատվել է, վոր ղեկավարից է կախված ամեն ինչ: Յեթե Ծանր արդյունժողկոմատի լիազորության ձեռնարկությունները պլանը կատարել են 45–50 տոկոսից վոչ ավելի, ապա նրանց ղեկավարության նորացումից և ուժեղացումից հետո մենք խիստ բարելավում ունենք. այնուամենայնիվ, առաջին կիսամյակի ծրագրի տապալման հետևանքով՝ Ծանրարդյունժողկոմատի լիազորության տարեկան պլանը կատարված է միայն 72 տոկոսով:

Մենք Ծանրարդյունժողկոմատի լիազոր ենք առաջ քաշել ընկ. Հյուսեյնովին, վորը բոլշևիկորեն, հենց առաջին որվանից սկսել է ուղղել թերությունները և ծրագիրը կատարել: Կասկած չկա, վոր 1934 թվի պլանը վոչ միայն կկատարվի, այլ և կգերակատարվի, վորպեսզի ջնջենք ԱՍԽՀ Ծանրարդյունժողկոմատի լիազորի 1933 թվի ամոթը:

Յերկրորդ հնգամյակի 2-րդ տարում ծանր արդյունաբերության ընդհանուր արտադրանք է նշվում 14,9 միլիոն ռուբլու, վորը 1933 թվի պլանի փաստական կատարման դիմաց տալիս է 41 տոկոս աճ: *Ընդ վորում ամենամեծ աճ է նշվում լեռնահանքային ճյուղում, շնորհիվ հանքերի և տրանսպորտի բարելավման համար դրված մեծ կապիտալ – ներդրումների և 1933 թվին չգործող Գետաբեկի հանքերի շահագործման մտցնելուն:*

1934 *թվին պետք է գիտական – հետազոտական լայն* նախապատրաստական աշխատանք կատարվի, այնպես վոր 1935 թ. սկսվի քիմիական յերկու զորեղ կոմբինատների կառուցման ծավալումը:

Վերջերս ավարտվել է կավահողային փորձնական գործարանի կառուցումը և շահագործման է տրված: Նրա աշխատանքը հիանալի արդյունքներ է տվել: Այդ կապակցությամբ 1934 թ. նշվում է կավահողային կոմբինատների կառուցում՝ 35 հազար տոննա ուժեղությամբ:

Միանգամայն պարզ է, վոր այդ բոլոր պրոբլեմների լուծումը պահանջում է աշխատանքի մեթոդների և տեմպերի վճռական վերակառուցում մեր ծանր արդյունաբերության բոլոր օղակներում՝ սկսած Ծանրարդյունժողկոմատի լիազորությունից և վերջացրած առանձին ձեռնարկություններով:

3. ԹԵԹԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Թեթև արդյունաբերությունն իր նյութական–տեխնիկական բազայով բոլոր հնարավորություններն ունի ապահովելու համար լայնասպառի արտադրանքի մշակման ընդլայնված առաջադրությունը՝ ընկ. Ստալինի *ցուցմունքների հիման վրա, թե հնգամյակի վերջին պետք է կրկնապատկել ու յեռապատկել լայնասպառի արտադրանքի թողարկումը:*

Տեխնիկական վերակառուցման հետևանքով ԱՍԽՀ թեթև արդյունաբերության արտադրանքն առաջին հնգամյակում ավելացել է ավելի քան յերկու անգամ:

Սակայն 1933 թվի պլանը կատարվել է միայն 82,2 տոկոսով, նախընթաց տարվա համեմատությամբ չնչին աճում տալով — 3,3 տոկոս:

Պլանի չկատարման հիմնական պատճառներն են՝ վարչատեխնիկական անձնակազմի վատ ղեկավարությունը, աշխատանքային ցածր կարգապահությունը ձեռնարկություններում, բանվորների ապահովված չլինելը բնակարանային-կուլտուր-կենցաղային պայմաններով, իսկ այտեղից—բանուժի հոսունությունն ու պակասությունը:

Թեթև արդյունաբերության վճռական պրոբլեմն արտադրանքի վորակի բարելավումն է: Արտադրանքի ցածր վորակը միանգամայն անթույլատրելի չափեր է ընդունում: Այդ կողմից ցայտուն օրինակ կարող է հանդիսանալ Գյանջայի չթի ֆաբրիկը, վորը 1933 թվի 9 ամսում տվել է մանվածքի 16 տոկոս խոտանք, իսկ գործվածքի — 22 տոկոս: Մահուդի գործարանում սեպտեմբերին խոտանքը հասել է 10 տոկոսի, հոկտեմբերին 15 տոկոսի:

Վատորակ արտադրանքի թողարկումը հանցավոր տնտեսավարության տեսակներից մեկն է:

ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի վերջերս հրապարակված վորոշումը—վատորակ արտադրանք տալու համար պատասխանատվության յենթարկելու մասին—քրեական պատասխանատվություն է սահմանում նման տեսակի տնտեսավարության համար, դատական ռեպրեսիաներ կիրառելով ինչպես՝ ազատազրկություն, վոչ պակաս քան հինգ տարով: Մենք պետք է այդ վորոշումը դարձնենք արտադրանքի բարձր վորակի համար մղվող պայքարի լծակներից մեկը:

Յերկրորդ հնգամյակում մենք առանձին ուշադրություն ենք դարձնում մանածագործական արդյունաբերության զարգացմանը. — ծախսումների ընդհանուր գումարը յերկրորդ հնգամյակում նշվում է 95,9 միլիոն ռուբլի, վորից չթեղենի արդյունաբերության համար 61,5 միլիոն ռուբլի:

4. ԱՆՏԱՌԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Անտառային արդյունաբերությունը հանրապետական արդյունաբերության ամենահետամնաց ճյուղն է հանդիսանում: 1933 թվին այդ արդյունաբերության աշխատանքները ցածր ցուցանիշներ են ունեցել: Առանձնապես կատաստրոֆիկ դրության մեջ է չինափայտի և արժեքավոր տեսակի փայտեղենի դուրս հանման գործը: Բավական է ասել, վոր 1933 թվի 11 ամսվա պլանը կատարված է մթերման գծով 75 տոկոս և դուրս հանման գծով 53 տոկոս: Պլանների կատարման արդյունքներն ավելի վատ են փայտեղենի գործարանների գծով—պլանը կատարված է 41 տոկոսով:

Անհրաժեշտ է նշել, վոր Ադրանտառտրեստի պլանների կատարումը խոշոր նշանակություն ունի ամբողջ խորհ. Միության համար: Մասնավորապես Շուշու և Լենքորանի յերկու սղոցագործարանները, միակ գործարաններն են, վորոնք խորհրդային Միության մանածային արդյունաբերությանը մատակարարում են կիսաֆաբրիկատներ, վորոնցից մաքուկներ են պատրաստվում, վորոնք ներմուծվող հումույթը դուրս են մղում: *Սակայն չնայելով այդ սղոցագործարանների խոշոր նշանակության, նրանք աշխատում են ծայր աստիճան անբավարար:*

1933 *թվի պլանի չկատարման հիմնական պատճառները յեղել են—մեքենայացման թույլ արմատացումը, օպորտունիստական վերաբերմունքը դեպի ունեցած մեխանիզմների օգտագործումը, բանվորական ուժի հսկայական հոսունությունը, վոր առաջ է գալիս բանվորների նյութական-կենցաղային անբավարար պայմաններից, Ադրանտառտրեստի կողմից միանգամայն անբավարար տնտեսական – տեխնիկական ղեկավարությունը սղոցագործարանների նկատմամբ, աշխատանքային ցածր կարգապահությունը—դրանք են Ադրբեջանի անտառային արդյունաբերության ճեղքվածքի վճռական պատճառները: Անհրաժեշտ է նախազգուշացնել Անտառժողկոմատի լիազորության ղեկավարությանը և նրա առանձին ձեռնարկություններին, վոր անտառային արդյունաբերության հետագա հետ մնալն այն խնդիրներից, վորոնք դրված են կուսակցության և յերկրի կողմից, բացարձակապես անհանդուրժելի յե:*

5. ՍՆՆԴԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Ադրբեջանի սննդահամային արդյունաբերության համար առաջին հնգամյակը բնորոշվում է նոր ճյուղերի—տոսցարանային, պահածոների, մրգարանջարեղենի վերամշակման և այլն ստեղծմամբ: Զգալիորեն վերակառուցվել են ձկան և ծխախոտի ճյուղերը: Ընդհանուր արտադրանքի աճն առաջին հնգամյակում կազմում է 118 տոկոս:

Սակայն պետք է ասել, վոր արդյունաբերության այդ ճյուղը մեզ մոտ աշխատում է անբավարար: Յերկրորդ հնգամյակի առաջին տարվա պլանը կատարվել է 85,4 տոկոսով: *Սննդահամային արդյունաբերության* առանձին ճյուղերի *և գործարանների (Բաքվի մսակոմբինատ, Խաչմասի պահածոների գործարան, Զաքաթալայի ընկույզ մաքրելու գործարան, ծխախոտի գործարան)* պլանների կատարման և գերակատարման հետ միասին, *ձկան արդյունաբերության մեջ պլանների սուր թերակատարում տեղի ունի՝ տարեկան պլանի կատարումը կազմում է 66,2 տոկոս:*

Այդպիսով՝ Մատժողկոմատի արդյունաբերության առաջատար ճյուղն ամենից հետամնացն է, չնայելով նրա բարձր զինվածության: Ադրձկում միանգամայն թույլ է յուրացվում խոր ձկնորսության տեխնիկան: Ձկան արդյունաբերության զարգացած տեխնիկական բազան յուրացվում է միանգամայն թույլ: Չափազանց թույլ է ընթանում ձկնորսության և պատրաստի արտադրանքի մշակման տեխնիկայի յուրացումը:

Պետք է նկատի ունենալ, վոր Ադրբեջանի ձկնարդյունաբերությունը աշխատավորների աճած պահանջների բավարարման գործում ահագին նշանակություն ունի:

Մատժողկոմատի արդյունաբերության աշխատանքի մեթոդների վճռական բարելավումը, և առաջին հերթին արտադրական պրոցեսների տնտեսական — տեխնիկական ղեկավարության լավացման ու աշխատանքի ճիշտ կազմակերպումը Մատժողկոմատի արդյունաբերության առաջ կանգնած ամենաայժմեական խնդիրները պիտի դառնան:

Մենք սովոր ենք լսել Մատժողկոմատի ղեկավարությունն ամբաստանել նրա համար, վորովհետև նրա աշխատանքի վճռական բեկման հասնենք: Այդ գործում մեզ օգնել է Յերկրային Կոմիտեն, մեզ տալով գործին ծանոթ, լուրջ աշխատող ընկ. Մելքումյանին:

Կենտկոմն առաջարկում է կուսկազմակերպություններին «Սնգի ձեռնարկությունների կուսբջիջները ամրապնդել լավագույն կոմունիստներով, ապահովել այնտեղ կուսմասսայական աշխատանքի վերելքը»:

Կենտկոմի այդ հրահանգը պարտավորեցնում է սննդահամային ձեռնարկությունների բոլոր տնտեսավարներին, կուսակցական, պրոֆեսիոնալ կազմակերպություններին՝ արմատապես վերակառուցել աշխատանքներն այնպես, վոր այդ ձեռնարկությունները դառնան սննդամթերքների օրինակելի կուլտուրական ֆաբրիկներ և գործարաններ:

6. ՏԵՂԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Տեղական և շրջգործկոմային արդյունաբերությունը հանդիսանում է Ադրբեջանի արդյունաբերության ամենահետամնաց տեղամասը: Բաքխորհրդի տեղական արդյունաբերությունը մեծ չափով չի կատարել պլանը:

Ավելի վատ է շրջանային արդյունաբերության դրությունը (շինանյութերի պլանի կատարումը 47 տոկոսից չի բարձրացել): Այդ բացատրվում է ամենից առաջ գործառնական ղեկավարության բացակայությամբ ինչպես Տնտժողկոմատի կողմից, նույնպես և մանավանդ շրջգործկոմների ու կուսշրջկոմների կողմից:

Բնորոշ է, վոր շրջգործկոմային արդյունաբերությունն ընդհանրապես վոչ վոքի կողմից չի պլանավորվում, վոչ վոքի կողմից չի կարգավորվում: Օրինակ՝ ջրաղացները, վոր կոչված են կոլտնտեսականներին սպասարկելու, գտնվում են միանգամայն քայքայման վիճակում: Նրանք չեն նորոգվում, սարքավորումները մաշվում են, աղունավարձը ցաք ու ցրիվ է արվում: Դրա հետևանքով ամիս-ամիս ջրաղացները մեկը մյուսի հետևից շարքից դուրս են գալիս:

Պետք է ստիպել և մեր Պետպլանին, և մեր ժողկոմատներին, և մանավանդ, մեր շրջգործկոմներին՝ լուրջ կերպով զբաղվելու տեղական արդյունաբերությամբ:

7. ԶԲԱՂԿՈՈՊԵՐԱՑԻԱ

Զբաղկոոպերացիան, վորպես լայնսպառի կարևորագույն արտադրողներից մեկը, ահագին նշանակություն ունի: Ադրբեջանի զբաղմունքային կոոպերացիան վերջին յերեք տարիներս զգալիորեն բարձրացրել է իր դերը ժողովրդական տնտեսության մեջ, 1931 թվի իր 60 միլիոնի ընդհանուր արտադրանքը 1933 թվին հասցնելով 109 միլիոն ռուբլու: Զբաղկոոպերացիայի տեսակարար կշիռը ԱՍԽՀ արդյունաբերության ամբողջ արտադրանքի մեջ (առանց միութենականի) հասել է 40 տոկոսի::

Ադրբեջանի զբաղկոոպերացիան յերկրորդ հնգամյակի առաջին տարին է մտել տարեկան 146 միլիոն ռուբլի ծրագրով: Սակայն նա այդ ծրագիրը չի կատարել մոտ 22 տոկոսով: Ծրագրի զգալի չափով թերակատարումը գլխավորապես այն զբաղմունքների հաշվին է, վորոնք պետք է Ադրբեջանի շրջաններում ծավալվեյին:

Առանձնապես անթույլատրելի յեն զբաղկոոպերացիայի արտադրանքի ցածր վորակն ու բաց թողնման բարձր գները: Դա չեր կարող չազդել ապրանքաշրջանառության ընթացքի վրա: Զբաղկոոպերացիայի առանձին ձեռնարկություններում ապրանքի կուտակում է տեղի ունեցել, վորը հասցրել է ֆինանսական սուր լարվածության:

1934 *թվին կոոպերացիայի առաջ ահագին խնդիր է դրված — իր ընդհանուր արտադրանքը բարձրացնել* 34,9 *տոկոս, բայց վորում վճռական ուշադրություն պիտի դարձնել բաց թողնվող լայնսպառի ապրանքների վորակի բարձրացմանը:*

ԱՍԽՀ զբաղկոոպերացիայի առաջ խնդիր է դրված անհապաղ բեկումն ապահովել՝ արտադրանքի ասորտիմենտի վերանայելու հիման վրա, բրակերաժ, մարկիրովկա մտցնելու, արտադրանքի վորակի համար նյութական պատասխանատվություն սահմանելու, արտադրական ինքնարժեքի իջեցնելու, արտադրության մեքենացման համար միջոցներ ձեռք առնելու, սեփական հումքի բազա կազմակերպելու, բանվորական ուժը լավագույն կերպով դասավորելու, այդ ուժն արտադրության մեջ ամրացնելու՝ բանվորների մատակարարման և կենցաղային սպասարկման բարելավման միջոցով:

IV. ՏՐԱՆՍՊՈՐՏ

1. ՅԵՐԿԱԹՈՒՂԻ

Յերկաթուղային տրանսպորտը շարունակում է ժողովրդական տնտեսության նեղ տեղը մնալ: Անդրկովկասյան յերկաթուղիների Ադրբեջանի ուղեմասը չի կարողանում իր վրա դրված խնդիրներն իրագործել: Նրա աշխատանքի ցուցանիշները չափազանց անբավարար են: Բացի դրանից, այդ ցուցանիշները վատացել են անցյալ տարիների համեմատությամբ: Յերկրորդ շրջանում մի վագոնի օրական միջին վազքը 1931 *թվին կազմել է*

124,2 կիլոմետր, իսկ 1933 թվին՝ 111,2 կիլոմետր: Ցիստերնի որական միջին վազքը 1931 թ. 218 կիլոմետր է յեղել, իսկ 1933 թվին՝ 202 կիլոմետր: Ապրանքային վագոնների շրջանառությունը 1931 թվին կազմել է 3–7 որ, իսկ 1933 թվին՝ 4–9 որ: Ցիստերների շրջանառությունը 1931 թվին յեղել է 3–8 որ, իսկ 1933 թվին չորս որ: Ապրանքատար գնացքների ժամացուցակով յերթևեկությունը 1931 թ. կազմել է 58 տոկոս, իսկ 1933 թըվին՝ 37 տոկոս:

Այս տվյալները ցույց են տալիս, որ յերկաթուղային տրանսպորտը դեռևս խոր ճեղքվածքում է գտնվում: Կուսակցակերպությունների յարված մարտական աշխատանքն է պահանջվում. յերկաթուղային տրանսպորտի աշխատանքի վորակական չափանիշները բարելավելու համար: Յերկաթուղային տըրանսպորտը վերակառուցելու և քաղբաժինները կազմակերպելու մասին Համկոմկուսի (բ) Կենտկոմի և ԽՍՀՄ Ժողկոմխորհի կայացրած վորոշումը յերկրորդ հնգամյակի աշխատանքի բարելավման սկիզբն է դրել:

Կուսակցության առանձին շրջանային կոմիտեների կողմից (Ղազախ, Բարդա, Քյուրդամիր) առաջվա պես նկատվում է յերկաթուղային տրանսպորտի աշխատանքի թերագնահատում, վերակառուցման մասին Կենտկոմի և Ժողկոմխորհի վորոշման անտեսում:

Տրանսպորտում աշխատանքի վերակառուցման գործը տարվում է դասակարգային թշնամու աջակիցների՝ հանձին հին չինովնիկական առանձին կադրերի, լոդրերի, նախկին տրոցկիստների, մուսավաթիստների, դատարկապորտներ-դիմադրության պայմաններում (Գուլիևի, Ջիկոյակու գործը և այլն):

Սակայն յերկաթուղում մենք յերկաթուղու բանվորների ու վարչական — տեխնիկական անձնակազմի մեջ հերոսության և նվիրվածության որինակներ ունենք:

Շոգեկառքի դեպոյում խառատ Ալեքսեյ Մակարովը մըրցում է Մակարովի վորդու հետ: Յերկուսն էլ աշխատում են միևնույն ստանոկի վրա: Պարապուրդ, խոտանք չունեն, նորմաները գերակատարում են: Մի շարք ռացիոնալացնող առաջարկություններ են մտցրել:

Բանվոր Ալեքսանդր Ռասսկինը սիստեմատիկաբար գերակատարում է արտադրական առաջադրությունները. սեպտեմբերին՝ 23 տոկոս, հոկտեմբերին՝ 24 տոկոս, նոյեմբերին՝ 40 տոկոս:

Կոմյերիտական № 70/14 շոգեկառքը՝ կոմյերիտականներ մեքենավարներ ընկ. ընկ. Ռոժնովսկու և Տչերբակովի բրիգադով 4000 կիլոմետր նորմայի փոխարեն տվել են 5327 կիլոմետր՝ 15.500 կիլոգրամ վառելիք տնտեսելով: № 680/54 կոմյերիտական շոգեկառքը (*մեքենավարները՝ Պոնոմարյով և Կրինցկի*) *4000 կիլոմետր նորմայի տեղ՝ տվել է 5247 կիլոմետր, 9000 կիլոգրամ վառելիք տնտեսելով:*

№ 77/31 կոմյերիտական շոգեկառքը (Ալի Հուսեյնով, Ղահրամանով) վառելիք են տնտեսել 4000 կիլոգրամ:

Բաքու – Բալաջարի – Գյանջա դեպոները մի շարք աչքի ընկնող շոգեկառքային բրիգադներ ունեն, վորոնք որինակելի կերպով կատարում ու գերակատարում են կուսակցության առաջադրությունները:

Խնդիրը կայանում է նրանում, վորպեսզի այդ որինակները յերկաթուղային ամբողջ մասսայի սեփականությունը դարձնել:

Յերրորդ շրջանի քաղբաժնի պետ ընկ. Պոլյակովի պետք է բոլոր միջոցները ձեռք առնի ամենամոտ ժամանակներս դրությունն ուղղելու համար:

Խնդիրը կայանում է նրանում, վորպեսզի յերկաթուղային տրանսպորտի մասին ԽՍՀՄ Ժողկոմխորհի և Համկոմկուսի (բ) Կենտկոմի վորոշումն իրագնելու հիման վրա տրանսպորտում ապահովել կուսակցական, պրոֆմիութենական, տնտեսական աշխատանքի այնպիսի վերակառուցում, *վոր Անդրյերկաթուղու Ադրբեջանի ուղեմասը հաննենք ճեղքվածքից և նրանց աճող պահանջների մակարդակի վրա դնենք:*

2. ՋՐԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏ

Ադրբեջանի բուռն տեմպերով աճող նավթարդյունաբերությունն առանձին սրությամբ է դնում մեր ջրային տրանսպորտի հարցը:

Կասպարը 1933 թվին կատարել է նավթ արտահանելու պլանը. կատարված է նաև կառավարության առաջադրությունը՝ մինչև նավագնացության փակելը բարձրացրած քանակությամբ նավթաբեռներ փոխադրելու նկատմամբ: *Դեպի Հաշտարխան նավթ փոխադրելու նավագնացային պլանի կատարումը հետևանք է յեղել նավապետների, մեքենավարների, Կասպարի բանվորների — ջրաշխատավորների հարվածային մարտական աշխատանքի, վորոնք Անդրյերկոմի, Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի ու Բաղկոմի և Վորոշիլովի կուսկազմակերպության ղեկավարությամբ՝ կատարել են նավագնացային պլանը:*

Սակայն Կասպից ծովի նավագնացության աշխատանքում մի շարք խոշոր թերություններ կան: Թե կլիմատուրայի և թե հենց ծովային նավատորմի ու նրա ապարատի պատճառով տեղի ունեցող անարտադրողական պարապուրդներն դժալի չափերի յեն հասնում:

Վերջին նավագնացության ընթացքում (1933 թվի ապրիլից-նոյեմբեր) նավթատար նավատորմը 31,5 հազար ժամ անարտադրողական պարապուրդ է ունեցել: Անարտադրողական պարապուրդները առանձնապես մեծ են չոր բեռներ փոխադրող նավատորմում, վորը 1933 թվի 10 ամիսներում ժամանակի ընդհանուր շահագործական բուջեի 26 տոկոսն է կազմել:

Զնայած պլանի կատարմանը, տնտեսական դրությունը Կասպարում լարված է: Վատ է դրված պրոֆմիութենական և կուսակցական աշխատանքը: Կասպարում կուսակցական աշխատանքն

ստուգելիս պարզվել է, վոր մի շարք նավերի կուսբջիջներում վոչ կոմունիստների հաշվառում կա, վոչ վերահսկողություն, վոչ գործին հսկել, վոչ ղեկավարություն: Ահա թե ինչու մենք ստիպված ենք լսել ընկ. Բերիայի նախաձեռնությամբ՝ Կենտկոմի առաջ դնել Կասպարի տնտեսական ամրապնդման, ընկ. Ջոֆի նշանակման և քաղբաժին կազմակերպելու հարցը: Համկոմկուսի (բ) Կենտկոմն արդեն վորոշում է կայացրել Կասպարում քաղբաժին կազմակերպելու մասին:

1934 թվին նավթի վերաբերմամբ կուսակցության առաջադրությունների կատարումը Կասպարին պարտավորեցնում է վճռականորեն բարելավել իր աշխատանքը: Նավատորմի մարտական խնդիրն է հանդիսանում կատարել նավթի փոխադրման ձմռան պլանը և ապահովել 1934 թվի պլանի իրականացումը, վոր զգալիորեն անցնում է 1933 թվի պլանից:

V. ԿԱՊ

Վերջին տարիների ընթացքում զգալիորեն աճել է կապի նյութական — տեխնիկական բազան Ադրբեջանում: 1928 թվի 1.200.000 ռ. կապիտալ ներդրումները 1933 թվին հասել է մինչև յերեք միլիոն ռուբլու: Հեռագրա — հեռախոսային գծի յերկարությունը ԱՍԽՀ-ում ամբողջությամբ վերցրած 1920 թվի 11 հազար կիլոմետրից՝ 1933 թվին հասել է 22 հազար կիլոմետրի:

Հեռախոսային կապ է բացված Անդրկասպիի հետ (Բաքու — Աշխաբադ). Բաքվից յերկու կողմանի ռադիոկապ է կազմակերպված 23 շրջանների հետ, շահագործման են մտցրված Բաքվի տասը հազար աբոնենտների ու Բալախանու հազար աբոնենտների սպասարկելու կարողություն ունեցող ավտոմատ հեռախոսակայանները, մեծացված է Բաքու — Մոսկվա հեռագրական և ռադիոհեռախոսական կապի ուժը. վերասարքված, ընդլայնված և նոր հեռախոսակայաններ են կառուցված Ստեփանակերտ, Գյանջա, Աղդամ, Սալյան, Կարա — Զալա և Միլլի խորհտնտեսությունում: Ռադիոֆիկացիայի յեն յենթարկված մի շարք նավթային շրջաններ, Ադրնավթի առաջատար ձեռնարկություններ, կուլտուրայի պալատներ: Սակայն տեխնիկական բազայի այդ մեծ աճումը հետ է մնում այն պահանջներից, վոր այժմ ներկայացվում են:

Առանձին շրջաններ հաճախ բոլորովին առանց կապի յեն մնում մետաղալարերը կտրվելու, սյուներն ընկնելու, ապարատուրան փչանալու և այլն հետեվանքով: Ռադիոհանգույցների և ռադիոսարքերի տեխնիկական դրությունը բավարար չէ:

Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի և Ադրժողկոմխորհի 1933 թվի հոկտեմբերի 17-ի վորոշմամբ կապի աշխատանքի արմատական վերակառուցման մասին գործնական ցուցմունքներ են տրված, վորոնց իրականացումը պետք է այդ կարևորագույն տեղամասի ճեղքվածքի վերացումն ապահովի:

VI. ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ընկ. Ստալինը Համկոմկուսի (բ) Կենտկոմի ու ԿՎՀ հունվարյան պլենումում շեշտել է այն հիմնական դրույթները, վորոնցից յելավ կուսակցությունն առաջին հնգամյակի շրջանում գյուղական տնտեսության ասպարեզում: Նա ասել է.

«Կուսակցությունը յելել է այն բանից, վոր պրոլետարիատի դիկտատուրան ամրապնդելու և սոցիալիստական հասարակություն կառուցելու համար, բացի ինդուստրացումից, անհրաժեշտ է նաև անցումն մանր անհատական գյուղացիական տնտեսությունից տրակտորներով և ժամանակակից գյուղատնտեսական մեքենաներով մատակարարված խոշոր կոլեկտիվ տնտեսության, վորպես խորհրդային իշխանության միակ հաստատուն հիմքին գյուղում»:

Հայտնի յե, վոր Խորհրդային Միությունն առաջին հնգամյակի հանրագումարի հետևանքով կատարել է այդ խնդիրը: ԽՍՀՄ գյուղացիական մանր տնտեսության յերկրից վերածվել է աշխարհիս ամենախոշոր գյուղական տնտեսության յերկրին: Հայտնի յե, վոր մեր կուսակցությունն առաջին հնգամյակի հանրագումարով կարողացել է գյուղացիական տնտեսությունների ճնշող մասը կոլտնտեսությունների մեջ միացնել, կազմակերպել հազարավոր կոլտնտեսություններ, բարձր տեխնիկա արմատացնել գյուղատնտեսության արտադրության մեջ և այդ հիման վրա գյուղական տնտեսության մեջ չտեսնված վերելքի յե հասել:

Ադրբեջանի գյուղում գյուղական տնտեսության մեջ հիմնական գիծն անց կացնելու համար մղվող պայքարում մենք ահագին արդյունքներ ենք ձեռք բերել գյուղի արմատական տեխնիկական ու սոցիալ — տնտեսական վերակառուցման գործում:

ՄՏԿ ցանցն ուժեղ թափով ծավալելու շնորհիվ, ահագին չափով մեծացել է կոլտնտեսությունների ընդգրկումը ՄՏԿ արտադրական սպասարկությամբ:

Բամբակային հողերի հերկը տրակտորներով ՄՏԿ-ում 70%.
Բամբակային հողերի հերկը տրակտորներով խորհտնտեսություններում . . . . 100%.
Բամբակի ցանքը տրակտորներով ՄՏԿ-ում . . . . . . 2%.
Բամբակի ցանքը տրակտորներով խորհտնտեսություններում . . . . 80%.
Բամբակի կուլտիվացիան ՄՏԿ-ում . . . . . . 10%.
Բամբակի կուլտիվացիան խորհտնտեսություններում 60%.
Հացահատիկների հունձը ՄՏԿ-ում . . . . 10%.
Հացահատիկների հունձը խորհտնտեսություններում. 40%.
Հացահատիկների կալսումը ՄՏԿ-ում . . . . 58%.
Հացահատիկների կալսումը խորհտնտեսություններում 100%.

Գյուղատնտեսական մեքենաշինական գործարանների ուժեղ զարգացումը ԽՍՀՄ-ում գյուղատնտ. կատարելագործված ինվենտարի մասսայական ներդրումը, հնարավորություն տվին

ապահովել մեծ քանակությամբ գյուղատնտեսական բարդ մեքենաների ներմուծումն Ադրբեջան: 1930–1931 թ. ընթացքում ներմուծված է յեղել ԱՍԽՀ ավելի քան յոթ միլիոն ռուբլու գումարի միմիայն գյուղատնտեսական մեքենաներ՝ չհաշված տրակտորային պարկը: Խորհտնտեսությունների ու կոլտնտեսությունների մեքենաների պարկը, վորը մինչև այդ առավելապես ձիու ինվենտարի վոչ մեծ ասորտիմենտից եր բաղկացած, սկսում է հագեցվել այնպիսի բարդ գյուղատնտեսական մեքենաներով, ինչպիսին են կալսիչները, ավտոմեքենաները, կոմբայնները, տուրման-փակոցները, տրակտորային սերմիչները, կուլտիվատորները և այլն:

Հենց դրա մեջ ել ամենից առաջ արտահայտվում է լենինյան ազգային քաղաքականության իսկական կենսագործումը, վորովհետև վերջինիս դասակարգային եյությունը կայանում է «նախկին պետական ազգի պրոլետարիատի և նախկին ճնշված ազգությունների գյուղացիության միջև» (Ստալին—զեկուցում 12–րդ համագումարում, եջ 7) ճիշտ փոխհարաբերությունների մեջ: Այստեղ ինչպես տեսնում ենք գործնականորեն իրագործվում են այդ փոխհարաբերությունները:

Կոլտնտեսությունների կազմակերպչա – տնտեսական ամրապնդման և չքավոր – միջակ գյուղացիության մեջ կազմակերպչա-մասսայական աշխատանք ծավալելու նկատմամբ կուսակցության կատարած միջոցառումների հետևանքով, կուլակային դիմադրության և կոլտնտեսային շինարարության ասպարեզում տեղի ունեցած աղավաղումների դեմ մղած պայքարի, կոլտնտեսությունները դասակարգային թշնամի տարրերից մաքրելու յեվ չքավոր – միջակային տնտեսությունները դեպի կոլտնտեսությունները մասսայորեն ձգտելու հետևանքով ԱՍԽՀ-ում գյուղական տնտեսության կոլեկտիվացման մակարդակն ահագին չափով բարձրացել է:

Առ 1-ն հունվարի 1930 թ. կոլտնտեսությունների թիվը 535 եր 11,600 տնտեսություններով, կոլեկտիվացումը 3,4% եր, ամեն մի կոլտնտեսությանը միջին հաշվով ընկնում եր 22 տնտեսություն:

Առ 1-ն հունվարի 1931 թ. կոլտնտեսությունների թիվը 1839 եր, 55,304 տնտեսություններով, կոլեկտիվացումը 16,7% եր, ամեն մի կոլտնտեսությանը միջին հաշվով ընկնում եր 30 տնտեսություն:

Առ 1-ն հունվարի 1932 թ. կոլտնտեսությունների թիվը 3,330 եր, 154,455 տնտեսություններով, կոլեկտիվացումը 43% եր, ամեն մի կոլտնտեսությանը միջին հաշվով ընկնում եր 46 տնտեսություն:

Առ 1-ն հունվարի 1933 թ. կոլտնտեսությունների թիվը 3,440 եր, 171,948 տնտեսություններով, կոլեկտիվացումը 44,5 տոկոս եր, ամեն մի կոլտնտեսությանը միջին հաշվով ընկնում եր 50 տնտեսություն:

Առ 1-ն դեկտեմբերի 1933 թ. կոլտնտեսությունների թիվը 3,692 եր, 195,345 տնտեսություններով, կոլեկտիվացումը 51,6 տոկոս եր, ամեն մի կոլտնտեսությանը միջին հաշվով ընկնում եր 53 տնտեսություն:

Ցանքային տարածությունների համայնացման տոկոսն աճել է 10,6 տոկոսից 1930 թ. մինչև 55,4 տոկոսի 1933 թ.: Յեթե 1930 թվին ամեն մի կոլտնտեսությանը միջին հաշվով ընկնում եր 60 հեկտար, ապա 1933 թվին ամեն մի կոլտնտեսությանն ընկնում է 140 հեկտար:

Գյուղատնտեսական մթերումների հաջող կատարման մեջ ամենից առաջ վճռական դեր է խաղացել կուսակցական ղեկավարման նոր մեթոդները գյուղում, վորոնք կենսագործվել են կուսակցության Կենտկոմի հունվարյան պլենումի վորոշման և ընկ. Ստալինի ցուցմունքների հիման վրա:

Նոր որենքները գյուղատնտեսական մթերքների մասին, քաղբաժինների կատարած ահագին աշխատանքը լիովին արդարացրին իրենց:

Կոլտնտեսական լայն մասսաների քաղաքական ակտիվության ահագին վերելքը արտահայտվել է աշխատանքի սոցիալիստական ձևերի՝ մրցման, հարվածայնության, սոցբուքսիրի և այլն մասսայական աճման մեջ:

Պետք է նշել հանրապետական կազմակերպությունների մի շարք ղեկավարների՝ Հողժողկոմ ընկ. Վեզիրովի, Ադրբամբտրակտորկենտրոն — ընկ. Բիրյուշովի, Ադրջրտնտեսություն— ընկ. Բաղրամովի և մի շարք ուրիշների, բոլշևիկյան աշխատանքը:

Չի կարելի չնշել դեպի գործը ցույց տված մի շարք մասնագետների՝ Գլուշանովսկու, Մաշկարի, Կրեմլևվայի, Կրավչենկոյի, Լևինայի, Ստեպանովի, Միշինի բացառիկ բարեխիղճ վերաբերմունքը: Միշինը պատկանում է այն մարդկանց թվին, վորոնք խորհրդային իշխանության կողմից պատժված լինելով վնասարարական աշխատանքի համար, 1933 թվի բամբակային կամպանիայի շրջանում Ադրբեջանում, յերևան են բերել անկեղծորեն զղջալու, բանվորա – գյուղացիական իշխանության հանդեպ իրենց մեղքը քավելու ցանկության բոլոր նշանները: Ջրային տնտեսության մի շարք մասնագետներ հրաշալի կերպով աշխատել են բամբակի ցանքերը ջրով ապահովելու համար, վորոնք առանձնապես պարգևատրվել են ԱՍԽՀ Ժողկոմխորհի կողմից: Այդ մասին դուք կարդացել եք թերթերում:

Բոլշևիկորեն ու ազնվությամբ են աշխատել շրջանային մի շարք ղեկավարներ—շրջկոմների քարտուղարներ, շրջգործկոմների նախագահներ, ՄՏԿ դիրեկտորներ, քաղբաժինների պետեր: Զանգելանի շրջգործկոմի նախագահ ընկ. Զուլֆուղլինսկին կարող է որինակ ծառայել, վորից պետք է սովորեն մեր շրջգործկոմների նախագահները: Ընկ. Զուլֆուղլինսկին, գյուղատնտես լինելով, վոչ միայն ապահովեց շրջանի միջին բերքատվությունը՝ ամեն մի հեկտարին 11-ից ավելի ցենտներ բամ-

բակ (այդ շրջանի ամենամեծ բերքատվությունը 3,5 ցենտներից չէր անցնում), նա ոչ միայն ապահովեց չալթուկի պլանի հաջող ու մինչժամկետային կատարումը և լավ տարավ աշնանացանի կամպանիան, այլ և նա հսկայական աշխատանք է կատարել շրջանի բարեկարգության համար:

Գյուղացիական տնտեսությունների կոլեկտիվացման տեմպերը և ցանքերի համայնացումը բամբակային շրջաններում ավելի բարձր մակարդակով են կատարվում՝ առ մեկն հունվարի 1932 թ. բամբակային շրջաններում կոլեկտիվացված է որն տնտեսությունների 58,5 տոկոսը, առ մեկն հունվարի 1933 թ. — 61 տոկոսը, իսկ առ մեկն սեպտեմբերի 1933 թ. — արդեն տըն տնտեսությունների 70,5 տոկոսն, այդ շրջանների բոլոր գյուղացիական բամբակային ցանքերի 90 տոկոսի ընդգրկումով:

Կոլտնտեսություններում աշխատանքի կազմակերպման մասին, որպես գյուղական տնտեսության հետագա կոլեկտիվացման և սոցիալիստական վերակառուցման համար մղվող պայքարի կենտրոնական պրոբլեմի մասին, կուսակցության դիրեկտիվին իրականացնելու հետևանքով, գործարքայնությունն ու բրիգադային մեթոդն Ադրբեջանի կոլտնտեսություններում աշխատանքի կազմակերպության հիմնական ձևերն են դարձել: Գործարքայնությունն ու արտադրական մշտական բրիգադը անհագին չափերով բարձրացրել են աշխատանքի արտադրողականությունը, ամրացրել են աշխատանքային կարգապահությունը: Լավագույն հարվածային կոլտնտեսականները բոլշևիկյան աշխատանքի օրինակներ են ցույց տալիս: Այդ կողմից աշխատանքի հազարավոր օրինակներից կնշեմ մի քանիսը:

Սալյանի շրջանի Թաթար — Մահալա գյուղի կոլտնտեսության մեջ սերմնացան Աբդուլ Ալի Ալիևը օրական յերեք հեկտար բամբակ ցանելու նորմա ունենալով, ցանել է օրական չորս հեկտար:

Սալյանի շրջանի «Գուլամ Իմամալիլով» կոլտնտեսության տրակտորիստ Ֆեյզուլլաև 15 հեկտար նորմա ունենալով օրական ցանել է Փորմոլով 20 հեկտար:

Կասում-Իզմայիլովի շրջանի «Սոցիալիզմ» կոլտնտեսության մեջ Գյուլնաշ Զեյնալովան օրական հավաքել է 101 կիլո բամբակ:

Սաբիր-Աբադի շրջանի «Մայիսի մեկի» անվան կոլտնտեսության մեջ Լալա Նադիր ղըզին օրական հավաքել է ավելի քան 80 կիլո բամբակ և այլն:

Օրական 90–100 կիլոգրամ բամբակի հավաքումը ամենևին հազվադեպ յերևույթ չէ Ադրբեջանի առաջավոր կոլտնտեսություններում:

ՊԱՅՔԱՐ ԲԱՄԲԱԿԻ ՀԱՄԱՐ

ԱՍԽՀ գյուղում տեղի ունեցած բեկման արդյունքներն ամենից ավելի լավ են յերևում 1933 թվի բամբակի կամպանիայի հանրագումարում: Վորովհետև բամբակն ԱՍԽՀ գյուղական

տնտեսության ասպարեզում վճռական է հանդիսանում, յես նրա վրա ավելի մանրամասն կանգ կառնեմ:

Բամբակի պլանի կատարումը ոչ մի կերպ չի վերացնում անողոք քննադատությունն այն բոլոր թերությունների, վոր անցյալ տարի տեղի յեն ունեցել թե ամբողջ ԱՍԽՀ-ում և թե, գլխավորապես, առանձին շրջաններում:

Մենք բոլորս, և առանձնապես խայտառակաբար հետ մնացող շրջանների ղեկավարները, ոչ միայն լրիվ չափով հաշվի չեն առել 1932 թվի սխալները, այլ և չեն կատարել կուսակցության Կենտկոմի, Միության կառավարության, Անդրյերկոմի և Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի ուղղակի հրահանգները:

Գլխավոր անները սխալները, վորոնք առանձին շրջաններում անդրադարձել են պլանի կատարման վրա, հանդիսանում են. — ժամկետները չպահպանելը, վորոնք վճռական դեր են խաղում բամբակի ժամանակին հասունանալու և բերքատվությունը բարձրացնելու խնդրում (աշնան ցել, ձմռան արաթ, գարնան վաղ ցել, կրկնավար, վարի ժամանակ սահմանած խորությամբ հերկելը, ցանքը ժամանակին սկսելն ու վերջացնելը, ժամանակին մշակում, վոռոգում և այլն):

Սաբիր — Աբադի, Աղջաբեդու և մյուս շրջաններում պլանը կատարելու տապալման հիմնական պատճառներից մեկը ուշ ջրելն է—ոռոգման կեսերից, վորը հետաձգել է բամբակի ժամանակին հասունանալը: Կոկոններն ուշ են կազմվել, և յեկած անձրևների ու ձյունի պատճառով՝ անհագին չափով կոկոններ են փտել:

Հետ մնացող շրջաններում բամբակաքաղի պլանի կատարումը վիժեցրել են օպորտունիստական, կուլակային տրամադրությունները: Այդ տրամադրություններն առանձնապես ուժեղ են յեղել Աղջաբեդու, Սաբիր-Աբադի և Սալյանի շրջաններում: Նրանք արտահայտվել են նրանով, վոր բացված բամբակը դաշտերից ժամանակին չի հավաքվել, սպասելով այսպես կոչված «մասսայականի» բացմանը: Հետևանքն այն է յեղել, վոր Սալյանի ու Սաբիր-Աբադի շրջանները, ունենալով բոլոր հնարավորությունները ոչ միայն պլանը կատարելու, այլ և պլանից դուրս հազարավոր տոնն բամբակ տալու, ամենախայտառակ կերպով տապալել են բամբակաքաղը: Չգիտեմ, թե Սալյանի շրջանի ընկերներն (ընկ. Ռասուլ-Զադե) ինչով է ղեկավարվել, Կենտկոմին ու Ժողկոմխորհին անհիմն խոստում տալով, թե պլանն իրենք ժամանակին կկատարեն ու կգերակատարեն:

Աղջաբեդու շրջանը միմիայն նրա համար չի մինչև այսօր պլանը կատարել, վոր արմատեղ մեծ չափով բացված բամբակ են փչացրել, ժամանակին չքաղելով:

Բնորոշ է, վոր դեռ հոկտեմբերի վերջերքին, յերբ յես Աղջաբեդու շրջանի բամբակի արտերն էի շրջագայում, մասսայական կորուստ նկատեցի մի դաշտում: Ինձ հետ միասին շրջագայող՝ քաղբաժնի պետ ընկ. Նեֆենդիևն իմ հարցին, թե ինչու չեք քաղում բամբակը, պատասխանեց, թե այդ բամբակը մենատանե

ալի չի պատկանում: Հենց տեղն ու տեղը կատարած ստուգումը ցույց տվավ, որ դա կոլտնտեսային բամբակ է, որին անմիջականորեն սպասարկում է քաղբաժինը: Այս օրինակը բնորոշ է ոչ միայն Աղջաբեդու շրջանի համար, այլ և շրջանների մեծամասնության համար, մանավանդ նրանց, ովքեր խայտառակ կերպով տապալել են պլանի իրագործումը: Մի՞թե միևնույնը չէ, թե ում է պատկանում բամբակը, կոլտնտեսությա՞նը, թե մենատնտեսին, բացվել է, ուրեմն պետք է ժամանակին քաղել և կազմակերպել այդ բամբակաքաղը:

Եթե Ստալինի անվան խորհտնտեսությունը հաշվառելով հացի հունձի ժամանակ կատարված սխալները որոշ յեզրակացություններ է հանել բամբակաքաղի համար, ապա Կարա-Զալա խորհտնտեսությունը խայտառակորեն տապալել է բամբակի ամբողջ կամպանիան: Տապալման պատճառը պետք է փնտրել բացառապես ղեկավար կադրի, խորհտնտեսության վարչության և քաղբաժնի վարմունքի մեջ:

Կարա-Զալա խորհտնտեսությունում հալածում են մասնագետներին: Առանձին ընկերներ իրար կրծելով են զբաղվել, աչքաթող անելով այն բանը, որ իրենց հիմնական, սրբազան խնդիրն է հանդիսանում կուսակցության առաջադրությունները կատարելը և ժամանակին բամբակաքաղն ու խորհտնտեսության ամբողջ բերքը պետությանը հանձնելը, խորհտնտեսության կազմակերպչա – տնտեսական ամրապնդումն ու աշխատանքի սոցիալիստական ձևերի ծավալումը, խորհտնտեսության լավագույն գյուղատնտեսական և տեխնիկական կադրերի ու առաջավոր հարվածային բանվորների համախմբումն քաղբաժնի շուրջը: Անդրկոմկուսի (բ) նոր կենտկոմը պետք է լրջորեն զբաղվի Կարա Զալա խորհտնտեսության հարցերով:

Բամբակային կամպանիայի տապալման նույնպիսի պատճառներ գոյություն ունեն Գյոկչայի շրջանում, որտեղ շրջգործկոմի նախագահ Միրզա Կասումովը իրեն այդ աշխատանքին ուղարկելու հենց առաջին օրից՝ բացառապես խմբակցական պայքարով, ինքնամատակարարմամբ ու կուսակցականի համար անարժան գործերով է յեղել զբաղված, մի կողմ թողնելով բամբակի համար մղվող պայքարը: Ըստ յերևույթին Միրզա Կասումովը մոռացել է, որ իր խղճի վրա յե ծանրացած 1932 թվի բամբակային կամպանիայի տապալումը, յերբ նա, ինչպես Հողժողկոմ և Անդրբամբակկոմի նախագահ, անհատական և անձնական պատասխանատվությունն իր վրա պետք է կրեր: Ըստ յերևույթին այդ բանից նա ոչ մի դաս չի առել:

1933 թվի բամբակային կամպանիայի առանձնապես խոցելի ու թույլ կողմն է հանդիսացել մեր գործարանային սիստեմը: Մենք պետք է շատ լուրջ մտածենք Ազգադտախլոպոկի տնտեսության գործարանների մասին, որովհետև գործարանների դրությունը, նրանց խիստ վատ աշխատանքը պակաս դեր չեն խաղացել բամբակային պլանի կատարման ժամկետները հետաձգելու, և գլխավորապես՝ բամբակը մաքրելու պլանի կատարումը

տապալելու, հետևաբար և մեր տեքստիլ արդյունաբերությանը ժամանակին հումք մատակարարելու գործում:

Մենք 1934 թվին յերկրին պետք է տանք 150 հազար տոնն հումք նույն տարածությունից, այսինքն 191 հազար հեկտարից: Դա նշանակում է, որ բամբակի ընդհանուր քանակությունը պետք է բարձրանա մոտ 20 հազար տոնն: Յեգիպտական բամբակ պետք է տանք մոտ 25 հազար տոնն՝ նրա ցանքսը հասցնելով 40 հազար հեկտարի, և ընդհանուր քանակությունը բարձրացնենք մոտ 10 հազար տոննով:

Պետք է ասել, որ մի շարք շրջանների կողմից 1934 թվի բամբակային գարնան պատրաստվելը բավարար չի կարելի համարել: Մի շարք շրջաններում աշնան ցելի պլանը չի կատարված: Ձմրան վարը անբավարար է կատարվում: Գրեթե ոչ մի տեղ չեն սկսել առուները մաքրելն ու ձմեռային պայքարը գյուղատնտեսական վնասատուների օջախների դեմ, մինչդեռ այդ պայմաններն ապահովում են բամբակենու բերքատվության համապատասխան բարձրացումը:

Համագումարից անմիջապես հետո, ԱՍԽՀ բոլոր բամբակային դաշտերում պետք է բոլշևիկյան վճռական պայքար ծավալել մի հեկտարից 7,5 ցենտներ բերքատվությունն ապահովելու և յեգիպտական բամբակի համար40 հազար հեկտար յուրացնելու համար:

Բամբակի ֆրոնտի մասին խոսելով, չի կարելի ասել, թե այստեղ մենք լավ հրամանատարներ չունենք: Այս տարի մենք Ադրբեջանի կազմակերպության ղեկավար կադրից քչերին կարողացանք տեսնել Կիսլովոդսկի կամ մյուս կուրորտների պարկերում, բացի մեկից-յերկուսից, որոնք «առհասարակ հիվանդանում են» (ծիծաղ) և ամբողջ տարվա ընթացքում ոչ մի կերպ չեն կարողանում գործով զբաղվել: Դուք Բաղվում քիչ կտեսնեյիք մի ժողկոմ, որը չաշխատեր մինչև գիշերվա ժամը մեկը, յերկուսը: Այնուամենայնիվ մենք և դրանով չենք բավականանում: Օրինակի համար, յես ինքս անձամբ գոհ չեմ բամբակի համար մղած պայքարի արդյունքներով, չնայած, որ բամբակի պլանը կատարելու և գերակատարելու գործում Ադրբեջանի բոլշևիկյան կազմակերպության հաղթանակն ահագին քաղաքական նշանակություն ունի: Մենք լրիվ չենք կատարել այն խնդիրը, որի համար պայքարել ենք: Պլանը կատարվել է նրա հետևանքով, որ մի շարք շրջաններ, — Զանգելանը, Կասում-Իսմայլովկը, Գյանջան, Աղդաշը, Թաուզը, Ինքն. Լեռն. Ղարաբաղը, Ղազախը կոնտրակտացիոն պլանից 3823,5 տոնն ավելի յեն տվել, այն ժամանակ, յերբ Աղդամը, Աղջաբեդին, Բարդան, Բելասուվարը, Ջիբրայիլը, Քյուրդամիրը, Նախ. ԽՍՀ, Սաբիր-Աբադը, Շամխորը և Ստալինի անվ. ու Կարա-Զալա խորհտնտեսությունները յերկրին 9912,91 տոնն պակաս են տվել: Եթե այդ շրջանների ու խորհտնտեսությունների ղեկավարները տանուլ չտային բամբակի համար մղվող պայքարն ու

աշխատեյին ինչպես պետքն է, մենք այսօր մոտ 140 հազար տոնն բամբակ կունենայինք: Ճի՞շտ է, ընկերներ (Ձայներ— ճիշտ է):

Այն բոլոր հայտարարումները թե բամբակ չի յեղել, ճիշտ չեն: Յեթե Սալյանի ու Աղջաբեդու շրջանները խայտառակ կերպով տապալվել են, ապա վոչ թե նրա համար, վոր այնտեղ բամբակ չի յեղել, այլ նրա համար, վոր ժամանակին չեն քաղել այն: Յերկու ամիս առաջ Սալյանի դաշտերում այնքան բամբակ է յեղել, վոր պատ կերպով կարելի յեր վոչ միայն Սալյանի շրջանի պլանը կատարել, այլև ամենապակասը՝ պլանից ավելի 1500–2000 տոնն տալ: Դրա պատասխանատվությունն ընկնում է Սալյանի ղեկավարության՝ ընկ. ընկ. Ռասուլ-Զադեյի, Մահմուդովի, Խասայեվի վրա:

Աղջաբեդու շրջանը նույնպես ժամանակին չի հավաքել բամբակն ու կորցրել է բամբակի այն քանակությունը, վորն այսօր նա պակաս է քաղել: Մինչդեռ Աղջաբեդու շրջանն ունեցել է պլանը գերակատարելու բոլոր հնարավորությունները: Սաբիր-Աբադի շրջանում քիչ բամբակ չի փտել: Ուրիշ վոչ վոք, յեթե վոչ Բալա Եփենդիևն ինձ ասել է, թե ինքը կարող է բամբակի քաղը հասցնել մինչև 11 հազար տոննի, բայց իր խոստումը չի կատարել: Մեր բոլոր գյուղական կազմակերպությունների, մեր բոլորիս խնդիրն է, ինչ գնով էլ լինի, յերկրին 150 հազար տոնն բամբակ ապահովել: Այդ մարտական խնդրի իրականացումը վորոշում է Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի ղեկավարության վերաբերմունքն առանձին շրջանային ղեկավարների, կուսակցական և խորհրդային կազմակերպությունների աշխատողների նկատմամբ:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐ

Անցնում եմ տեխնիկական մյուս կուլտուրաներին:

Նրանց ցանքսերի տարածությունը (չհաշվելով բամբակը) 1926 թվի համեմատությամբ զգալի աճ է տալիս: 1926 թվին — ունեյինք 6·400 հեկտար, 1933 թվին — 18·100 հեկտար, դրանից 50 տոկոսից ավելին ընկնում է կոլտնտեսական սեկտորին, 9·000 հեկտարը նոր – լուբային կուլտուրաներին: Խորհտնտեսությունների բաժինն ընկնում է — 2·400 հեկտար:

Պետք է ուղղակի ասել, թե վոչ մենք, վոչ Ադրբեջանի Հողժողկոմատը և վոչ էլ շրջանային կազմակերպությունները բավականաչափ ուշադրություն չեն դարձնում տիրապետելու այդ կուլտուրաների ագրոտեխնիկային, վորի հետևանքով այդ արժեքավոր կուլտուրաները չափազանց փոքր բերք են տալիս: Այդ կուլտուրաներին վերաբերյալ ագրոպարտադրական միջոցառումների պլանները չեն կատարվում, շատ աշխատանք պահանջող առանձին պրոցեսների մեխանիզացիան չափազանց վատ է դրված:

Խաչմազի, Մասաալու, Զաքաթալայի, Բեյլականի, Նուխու, Գեյի և այլ շրջանային կազմակերպությունների ղեկավարները պետք է խիստ կերպով վերակառուցեն իրենց՝ այդ կուլտուրաների տեխնիկային տիրապետմանը և բերքատվության բարձրացմանը վերաբերյալ աշխատանքը:

Մենք հաջողությամբ ենք տարել կամպանիան ծխախոտ հավաքելու և հանձնելու նկատմամբ: Դրա հետ միասին միանգամայն անբավարար են տարվում կենաֆի, կանեփի, թե ցողունի և թե սերմերի մթերումը մանավանդ Խաչմազի, Աստրախան-Բազարի և Մասաալուի շրջաններում: Մոտակա 10 որում մթերումների պլանը, ինչ էլ լինի, պետք է իրագործվի, վորովհետև այդ կուլտուրաների նկատմամբ Միության մեջ մենք բավական լուրջ տեղ ենք գրավում և այժմ առանձին շրջաններ ամբողջովին (Ջերրայիլ) հատկացնում ենք կենաֆին:

Չնայած, վոր Ադրբեջանը հացահատիկային կուլտուրաների նկատմամբ Անդրկովկասի հիմնական հանրապետությունն է հանդիսանում, Կենտկոմի ղեկավարության կողմից գյուղական տնտեսության այդ ճյուղի թերագնահատումը 1931–32 թ. խիստ իջեցման պատճառ յեղավ նրանց թե տարածության և թե նրանց բերքատվության նկատմամբ: Անցյալ տարիների սխալներն ուղղելու հիման վրա մենք զգալի չափով մեծացրել ենք հացահատիկային կուլտուրաների ցանքսային տարածությունը և բարձրացրել նրանց բերքատվությունը 1933 թվին:

Սակայն այդ բացարձակորեն չի նշանակում, վոր ԱՍԽՀ կենտրոնական ապարատներում առանձին աշխատողների կողմից և գլխավորապես շրջաններում, մենք արդեն չունենք հացահատիկային տնտեսության նշանակության բացահայտորեն չըմբռնելը, հացահատիկային տնտեսությունը ոպորտունիստորեն բամբակաբուծությանը հակադրելը: Այդ բանն առանձնապես յերևան է յեկել աշնանացանի կամպանիան անցկացնելիս, 1934 թվի գարնան սերմային ու ապահովագրական ֆոնդեր առանձնացնելիս: Դրա հետևանքն այն յեղավ, վոր Միության մեջ մենք գրեթե առաջինը ժամկետից առաջ պարտադիր հացահանձնումը կատարելով հանդերձ սերմային ու ապահովագրական ֆոնդերի ժամանակին առանձնացումը ձգձգվելու պատճառով, միմիայն այսօր ԽՍՀՄ Ժողկոմխորհի ու Համկոմկուսի (բ) Կենտկոմի վորոշման հիման վրա թույլ ենք տալիս հացի կոոպերատիվային առևտուրը:

Չի կարելի չխոսել դեպի այնքան կարևոր կուլտուրան, ինչպիսին չալթուկն է, յեղած հանցավոր – անփույթ վերաբերմունքի մասին: Տնտեսության այդ ճյուղը ամենահետամնացն է, մինչդեռ յելնելով կուսակցության ու կառավարության առաջադրած խնդրից՝ էլ ավելի բարելավելու Խորհրդային Միության բանվորների ու աշխատավոր մասսաների նյութական-կենցաղային պայմանները, չալթուկին պետք է բացառիկ ուշադրություն դարձնել:

1933 թվին չալթուկի ցանքը, մշակումը և հունձի կամպանիան տանելու ժամանակ թույլ տրված սխալները մենք պետք է հաշվի առնենք: 1934 թվին մենք պետք է ապահովենք չալթուկի կամպանիայի հաջող կատարումը:

Մեր խնդիրները 1934 թվի համար հացահատիկային կուլտուրաների, այդ թվում և չալթուկի նկատմամբ գլխավորապես կայանում է բերքատվության բարձրացման մեջ՝ պահպանելով տարածությունների նախկին չափը:

Ադրբեջանը բոլոր հանրապետություններն ունի վոչ միայն գոհացուցիչ կերպով մատակարարել Բաքվի բանվորներին և Ադրբեջանի արդյունաբերության այլ կենտրոնների բանվորներին բավականաչափ քանակությամբ ու լավ վորակի մրգաբանջարեղեն, այլև դրանից մատակարարել կարող է և մեր Միության մյուս կենտրոններին:

Չնայած, վոր մրգաբանջարեղեն մթերելու պլանը Մատակարարման ժողկոմատի սիստեմում արդեն կատարված է, չի կարելի ասել, վոր մեր խորհրդային տնտեսությունում այդ ճյուղի հարցը բարեհաջող է: Պետք է ուղղակի ասել, վոր իբր թե «բամբակով զբաղվելով» մեր Հողժողկոմատը, մեր հանրապետական կազմակերպությունները ի դեմս Սոյուզպլոդովոշչի, Ազմեյվատրգավաթի և այլոց ու գլխավորապես մեր շրջանային ղեկավարները թերագնահատում են մրգաբանջարեղենային տնտեսության զարգացման նշանակությունը: Այս յերևույթին պետք է վերջ տալ: Մեր մրգաբանջարեղենային շրջանների աշխատանքի ստուգումն են ծառայելու 1934 թվի մրգաբանջարեղենի կամպանիայի նախապատրաստությունը, ընթացքն ու կատարումը:

ԱՍԽՀ-ում ունենք 1112,8 հեկտար արևադարձային մրգեղենի այգիներ (թուզ, նուռ, նուշ և այլն), մի փոքրիկ ֆոնդ ձիթապտղի, ֆեյխոյի, պեկանի և այլն: Մեր արևադարձային շրջաններում կարելի յե հանդիպել այնպիսի թանկարժեք տեսակներ, ինչպիսիք են տունգի ծառը, լաքը, բամբուկը, խցանի կաղնին: Լենքորան – Աստարայի մասսիվում վաղուց հետաքրքրվում են թեյի և մանավանդ ցիտրուսային կուլտուրաների տունկերով: Լենքորանի մասսիվը, վորպես խոնավասեր արևադարձային կուլտուրաների շրջան, ապահովում է այդտեղ ցիտրուսային թանկարժեք տեսակի ու թեյի զարգացումը:

Ցիտրուսայինների կուլտուրայի հարցը ընկ. Ստալինի լուրջ ուշադրության առարկան է: Նա հատուկ ցուցմունքներ է տվել այդ կուլտուրաներն Անդրկովկասում տարածելու մասին: Ահա ինչու մասսայական մաշտաբով ցիտրուսային տունկերի տարածումը բացառիկ նշանակություն է ստանում: Այդ ասպարեզում տարվող գիտական-փորձնական աշխատանքները բավականաչափ չեն ծառայել արևադարձայինների զարգացման պրակտիկ խնդիրներին և չեն ընդգրկել մի շարք կարևորագույն կուլտուրաներ և շրջաններ:

1931 և 1932 թվերին հողային որգանների միանգամայն անբավարար ղեկավարության հետևանքով Աղդաշի, Գյոքչայի և Քյուրդամիրի շրջաններում նռան բերքի զգալի կորուստ է նկատվել:

Ապշերոնը Միության մեջ միակ ռայոնն է, վորտեղ մշակվում է այնպիսի արևադարձային արժեքավոր կուլտուրա, ինչպիսին քրքումն (շաֆրանն) է, վորն արտահանվում է:

Սակայն քրքումի հողերը Ապշերոնում մինչպատերազմական ժամանակի 150 հեկտարից կրճատվել է ավելի քան յերկու անգամ առաջին հնգամյակի սկզբներին և 1933 թվին կազմում է ընդամենը 84 հեկտար:

1932 թվին Լենքորանի շրջանում կազմակերպվել եյին թեյի յերկու խորհտնտեսություն և Աստարայում ել կիտրոն – մանդարինի մի խորհտնտեսություն:

Թեյի տունկերի վիճակը խորհտնտեսություններում միանգամայն գոհացուցիչ է և թեյի թփի նորմալ աճումն է ցույց տալիս: Լավ են զարգանում նույնպես ցիտրուսային տունկերը, թեյի տեսակներին ու միկրոշրջանի պայմաններին համապատասխան խնամք տարվի: Յեթե դրան ավելացնենք ցիտրուսի, կիտրոնի, մանդարինի միանգամայն կայուն տունկերը, ապա մեզ մոտ Լենքորան – Աստարայի մասսիվում խոնավասեր արևադարձայինների զարգացման հնարավորության մասին բոլոր վեճերն անհիմն կդառնան:

Անհրաժեշտ է կուսակցական, խորհրդային կազմակերպությունների, խորհտնտեսությունների ու կոլտնտեսությունների ամենամեծ ուշադրությունը կենտրոնացնել ամենաթանկարժեք արևադարձային շրջանի յուրացման և Ադրբեջանում Միության արևադարձային յերկրորդ բազան ստեղծելու վրա:

Ընկ. Ստալինն անձամբ հետաքրքրվել է Լենքորան – Աստարայի մասսիվով: Նա մատնանշել է այդ մասսիվի առանձնահատկությունները արևադարձայինների ու ցիտրուսների համար, մինչև իսկ սև ծովյան ափերի հանդեպ, Լենքորան – Աստարայի մասսիվը համեմատելով հարավային Ֆրանսիայի բնական ու կլիմայական պայմանների հետ:

Այժմ պետք է այդ յերկու շրջաններն ամրացնել լավագույն, ստուգված ու պատրաստված ընկերներով: Ահա ինչու Ադրկոմկուսի (բ) Կենտկոմը վորոշել է այդ շրջանի քարտուղար ուղարկել այժմ Կենտկոմում աշխատող ընկ. Միրսալայեվին, վորը հանրապետական վոչ մի աշխատողից թույլ չի:

Արևադարձային թանկարժեք կուլտուրաների (նուշ, պիստակ) արտադրության հնարավորության նկատմամբ ուշադրության արժանի յերկրորդ շրջանն է Ապշերոնի թերակղզին: Մենք պետք է ամրացնենք այդ շրջանի ղեկավարությունը և համապատասխան տեխնիկական ու մեքենայական բազա հաստատենք նրա գյուղական տնտեսության նկատմամբ և այնտեղ արևադարձային արժեքավոր կուլտուրաներ տարածենք:

Մեզ մոտ չափազանց մեծ ժողովրդա – տնտեսական խնդիր է ներկայացնում կաուչուկատուների զարգացումը: Գիտական միտքն այս ուղղությամբ թույլ է աշխատում: Մարդուշչեվանի խորհտնտեսության համար մեր սակավահողության դեպքում

մինչև 8000 հեկտար լավագույն հող է տրվել։ Մինչև այժմ գյուղի համար միայն 105 հեկտար է յուրացվել։

1934 թվի համար մենք նախագծում ենք արևադարձային կուլտուրաների համար 331 հեկտարի տարածություն, որ 1933 թվի համեմատությամբ 272 հեկտար ավ. կտա․ դրանցից թեյինը — 90 հեկտար, ցիտրուսայիններինը — 5 հեկտար։ Յերկրորդ հնգամյակի վերջին արևադարձային կուլտուրաների տարածությունը պետք է հասցնել մինչև 5·500 հեկտարի․ դրանցից թեյինը — 1·200 հեկտար, ցիտրուսայիններինը 500 հեկտար։

Գյուղական տնտեսության առաջատար հիմնական կուլտուրան համարելով բամբակը, հաստատապես ձեռք բերելով ԱՍԽՀ դրության ամրապնդումը, որպես Միության բամբակային յերկրորդ բազա, Ադրբեջանի կուսակցական և խորհրդային կազմակերպությունները պետք է իրենց աշխատանքի հիմնական բովանդակությունը յերկրորդ հնգամյակում դարձնեն—ԱՍԽՀ Միության յերկրորդ արևադարձային բազան դարձնելը։

3. ԾԵՐԱՄԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Մինչև 1930 թ․ բոժոժի ապրանքային արտադրությունն ավելացել, հասել է 2017,6 տոննի, տալով մի տուփից 24,3 կիլոգրամ բերք։

Վերջին յերկու տարիները բավական զգալի ճեղքվածք են ըստեղծել մետաքսի արդյունաբերությունը հումքով ապահովելու գործում։

1930 թվից մինչև 1932 թիվը ներառյալ՝ բոժոժի ապրանքային ստացումն իջնում է, իսկ 1933 թվին բարձրանում է մինչև 1534,6 տոննի (1932 թվի համեմատությամբ՝ 400 տոնն ավելի)։

Բոժոժի ստացման այսքան խիստ անկումն ու Ադրբեջանում զետեղվող շերամի սերմի քանակության իջնելու պատճառը շերամի որդի կերի բազայի զգալի չափով կրճատվելն է յեղել՝ տեղերում կոլտնտեսային շինարարության աղավաղումների հետևանքով։ Կուլակային ագիտացիայի ազդեցության տակ թթենիների անխնա կտրումը, բամբակային շրջաններում շերամապահության բացահայտ թերագնահատումը, շերամապահության զարգացման համար շրջանի թթենիների ռեսուրսների ոգտագործումը կազմակերպելու չկարողանալը, 1932–33 թվերին զետեղվող քանակությունն իջեցրել են 70–73 հազար տուփի, հնգամյակի սկզբում յեղած 82 հազար տուփի դիմաց։

1934 թվին 70·500 տուփ զետեղելու և մի տուփից 25 կիլոգրամ բոժոժ ստանալու ծրագիրը պետք է կատարվի։

4. ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Կուլակ – ունևոր տարրերը, կատաղի դիմադրություն ցույց տալով կոլեկտիվացմանը, նենգաբար ոչնչացրել են իրենց անասունները։ 1929–31 թվերին Ադրբեջանի մի շարք շըր-

ջաններում տեղի ունեցած աղավաղումները, մթերատու անասունների շտապողաբար համայնացումը դասակարգային ծավալվող պայքարի պայմաններում, հանգել են նրան, որ գյուղի անգիտակից մասը նախ քան կոլտնտեսություն մտնելը ոչնչացրել է անասունները։

Միայն առաջին հնգամյակի վերջին, սկսած 1930 թվից, սոցիալիստական անասնապահության անշեղ աճումն է նկատվում։

Կոլտնտեսություններում ձիերի թիվը յերեք տարում հինգ անգամից ավելի յե աճել, ձիաբուծական խորհտնտեսություններում ստեղծված է հոտ՝ բարելավված ցեղերով, որը թե բանող և թե հատուկ ու նստելու ձիերի ամենաարժեքավոր ցեղի զարգացման բազա յե հանդիսանում։ Կոլտնտեսություններում խոշոր յեղջյուրավոր անասունների թիվն ավելացել է գրեթե չորս անգամ, ոչխարներինը՝ ավելի քան յոթ անգամ։ Խոզերի հոտի ամբողջ գլխաքանակի մոտ 50 տոկոսը կենտրոնացած է կոլտնտեսություններում։

Մեծ թվով անասուններ ունեցող հատուկ անասնաբուծական խորհտնտեսությունները վերջին տարիներս լայն աշխատանքներ են սկսել անասունների մեստիզացման և ցեղերի տարածման վերաբերմամբ, որ ահագին նշանակություն ունեցող միջոցառում է՝ մեր խոշոր յեղջյուրավոր անասունների ցեղը լավացնելու վերաբերմամբ։

Դրա հետ միասին մենք ունենք կոլտնտեսային անասնաբուծության զգալի զարգացում հատուկ ապրանքային ֆերմաներում։

1933 թվին 774 կոլտնտեսային ֆերմաներում (զանազան արտելներում) մենք արդեն ունեցել ենք 47·900 խոշոր յեղջյուրավոր անասուն, 150·700 մանրագլուխ անասուն և 16·500 խոզ։

Խորհտնտեսությունները, կոլտնտեսությունները, ապրանքային ֆերմաները բնական կերային բազան զարգացնելու, անասունների պահելը բարելավելու, համեմատաբար լավ զոոտեխնիկական սպասարկման հետ միասին՝ մեծ աշխատանք են տարել տնտեսության մեջ կեր հավաքելու և սիլոսացնելու համար։ Սիլոսային փոսերի ու խրամատների քանակությունը կոլտնտեսություններում 1932 թ․ հասել է 626-ի։ Նրանց մեջ սիլոսացրված է 18·240 տոնն կեր։

Սակայն պետք է մատնանշել, որ խորհտնտեսություններում և անասնաբուծական ապրանքային ֆերմաներում անասունները պահելու պայմանները և տեխնիկան դեռևս ցածր մակարդակի վրա յեն գտնվում։

1934 թվի և յերկրորդ հնգամյակի խնդիրն է հանդիսանում՝ ամեն կերպ աճեցնել անասունների գլխաքանակը․ միաժամանակ բարձրացնելով նրա մթերատվությունը։

5. ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Կուսակցությունը մեծ նշանակություն է տվել ջրային տնտեսությանը, վորպես գյուղատնտեսության արտադրողական ուժերի զարգացման, չքավոր և միջակ գյուղացիության դրության բարելավման հիմունքի: Վլադիմիր Իլյիչ Լենինն իր «Նամակում Կովկասի կոմունիստներին» գրել է.

«Անմիջապես աշխատել բարելավել գյուղացիների դրությունը և սկսել ելեկտրոֆիկացիայի, վոռոգման խոշոր աշխատանքներ: Վոռոգումն ամենից շատ է հարկավոր և ամենից շատ կվերստեղծի յերկիրը, կվերածնի նրան, կթաղի անցյալը, կամրացնի անցումը դեպի սոցիալիզմ»:

1928 թվին, հիմնականում, ավարտվել է վոռոգվող հողերի վերականգնումը: Հետագայում աշխատանքը կենտրոնացվել է վոռոգման աղբյուրների վերակառուցման և նոր շինարարության վրա:

Առաջին հնգամյակում խոշոր ջրաշինարարական տնտեսության գծով հետևյալ աշխատանքներն են կատարվել.

ա) Ավարտվել է Կարասախկալի ջրանցքի կառուցումը, վորը վոռոգում է 900 հեկտար հող:

բ) Հիմնականում ավարտված և շահագործման է հանձնված Միլի առաջին ջրանցքը, վորի համար արդեն 1933 թվի գարնանը ջրելու համար նախապատրաստված եր 20 հազար հեկտար հող:

գ) Համարյա լրիվ կերպով վերականգնված են (բացառությամբ Նարիմանովի սիստեմի) Մուղանի ճարտարապետական սիստեմները, վորոնց վերակառուցման համար մասնակի աշխատանքները սկսված եյին առաջին հնգամյակի ընթացքում (Շահումյանի և Աղիզբեկովի սիստեմները):

դ) Մերձքուռյան շրջանի մեքենական վոռոգման մատորների հզորությունը 928 թ. 6.351-ից բարձրացել է 1932 թվին 11.427 ձիու ուժի. սրա հետ միասին ջրհաններով վոռոգվող հողերի քանակը 13.500-ից հասել է 48.900 հեկտարի:

յե) Կարա – Զալայի շինարարությունը:

Խոշոր ջրատնտեսության շինարարության գծով վոռոգվող հողերի աճումն առաջին հնգամյակի ընթացքում կազմում եր 75.675 հեկտ. (այդ թվում բամբակի համար՝ 67.623 հեկտար):

Ըստ պլանի, առաջին հնգամյակի ընթացքում վոռոգվող հողերը բոլոր սիստեմների գծով պետք է կազմեր 120950 հեկտար, իսկ փաստորեն կազմել է 121150 հեկտար:

Առաջին հնգամյակի ընթացքում վոռոգվող հողերը ստացվել են տեղական սիստեմների լարման և ջրհանների շինարարության ուժեղացման հաշվին:

1928 թվին ջրի ընդհանուր տարածությունը հավասար եր 512.320 հեկտարի, վորից բամբակի տարածություն 111.100 հեկ-

տար, իսկ 1932 թվին համապատասխան 628.100 — 224.000 հեկտար:

Առաջին հնգամյակում ջրատնտեսության մեջ ներդրված է 38.727 հազար ռուբլի:

Մուղանի լիակատար առողջացումն Աղիզբեկովի և Շահումյանի սիստեմների սահմաններում, միաժամանակ իրենց ճարտարապետական սիստեմների տեխնիկական դրության և վերակառուցման բարելավումը – պետք է հանդիսանա ԱՍԽՀ կուսակցական և խորհրդային կազմակերպությունների խնդիրը:

1934 թվին սկսվում են Թարթառի սիստեմի վերակառուցման աշխատանքները, վորը պետք է ապահովի ԱՍԽՀ-ում տեղական ամենամեծ սիստեմի վերածումն ճարտարապետականի:

Անցյալ հնգամյակի ընթացքում մենք հանրապետության հիմնական արտադրական շրջանները զգալիորեն հագեցրել ենք գործարանային արտադրության գյուղատնտեսական գործիքներով: Հնգամյա պլանով նախագծված 4.974,9 հազար ռուբլու ընդհանուր արժողությամբ մեքենաներ բերելու փոխարեն — փաստորեն բերված է 1929 թվից մինչև 1933 թվի հունվարի մեկը 16686500 ռուբլու մեքենաներ:

Այսպիսով գյուղատնտեսական մեքենաների և գործիքների փոխադրման պլանն առաջին հնգամյակում կատարված է ավելի քան յերեք և կես անգամ:

Առաջին 5-ամյակում մենք ունեցել ենք վողջ գյուղատնտեսական ինվենտարի լրիվին վերանորոգումը և գյուղատնտեսական գործիքների հին պապենական տեսակների (արոր) փոխարինումը — գործարանային արտադրության գործիքներով ու մեքենաներով:

Առաջին հնգամյակում ավտոտրակտորային պարկը 150 տրակտորներից, հզորությամբ 5000 ձիու ուժի, (առ 1-ը հունվարի 1929 թվի) աճել է մինչև 2.164-ի՝ հզորությամբ 30 հազար HP գումարած 121 ավտոմեքենաները (առ մեկը հունվարի 1933 թվի):

Մեքենա – տրակտորային կայանները դարձել են իրենց գործունեության շրջանի կոլտնտեսությունների եներգետիկական տնտեսական – ագրոկուլտուր և քաղաքական սպասարկման խոշորագույն կենտրոններ:

1933 թվին ՄՏԿ-ների թիվը հասել է 30-ի՝ 1931 թվի 19-ի և 1930 թվի 2-ի դիմաց, յերբ առաջին անգամ Ադրբեջանում կազմակերպվեցին ՄՏԿ-ներ:

ՄՏԿ տրակտորների կատարած ամբողջ աշխատանքը վարի վերածած՝ 1932 թվի 194 հազար հեկտարից՝ 1033 թվին ավելացել, հասնելով 250 հազար հեկտարի:

1933 թվին ՄՏԿ-ներն իրենց սպասարկմամբ ընդգրկել են հանրապետական հիմնական բամբակային շրջանների բամբակի ցանքսի ավելի քան 31 տոկոսը: Խորհտնտեսությունների տրակտորային և մեքենայական պարկերի կողմից մշակվում է խորհ-

տնտեսությունների ցանքային դաշտերի հիմնական և գերակշռող մասը:

1933 թվի հունվարին Համկոմկուսի (բ) Կենտկոմի և ԿՎՀ-ի միացյալ պլենումում ընկ. Կագանովիչն իր զեկուցման մեջ բնորոշել է ՄՏԿ աշխատանքը հետևյալ ձևով:

«Մենք պետք է ուղղակի ասենք, որ ՄՏԿ-ների և խորհ տնտեսությունների քաղաքական դերը ոչ մի չափով չի համապատասխանում նրանց տնտեսական դերին: Օրինակ. ՄՏԿ-ները հաճախ վարձակալանի յուրահատուկ դեր են խաղում: Խորհտնտեսությունները ու ՄՏԿ-ները շատ վատ են կատարում պրոլետարական պետության շահերի համար պայքարող մարտիկների իրենց դերը: Ավելին, մենք մի շարք փաստեր ենք ունեցել, յերբ խորհտնտեսությունները ու ՄՏ կայանի աշխատողները ոչ միայն պատասխանատվություն չեն զգում ցանքսի, հացամթերումների, վարի վորակի պլանների կատարման համար, այլ փաստորեն գերի յեն ընկնում բուրժուա – կուլակային վերասերված տարրերին և նրանց հետ միասին իրենց հակադրում են պրոլետարական պետության շահերին»:

Ադրբեջանում, մի քանի շրջաններում 1932–1933 թ. թ. ՄՏԿ-ները շատ վատ են աշխատել: Մի շարք ղեկավարների «վերասերված» տրամադրությունները, ՄՏԿ-ների, վորպես կոլտնտեսությունների տնտեսական – քաղաքական ամրապնդման կենտրոնների առաջ դրված խնդիրները մոռացության մատնելը մի քանի ՄՏ կայանների հացային աշխատանքների խայտառակ տապալմանը բամբակի պլանի կատարման ապարբիզում, հացային կոլտնտեսությունների արտադրական պլանների կատարման և յեկամուտների բաշխման կամպանիաների անբավարար անցկացմանը:

Պլանները կատարող լավագույն ՄՏԿ-ների դիրեկտորների հետ միասին, վորոնք աշխատում են մարտականորեն և պատվով (ՄՏԿ դիրեկտոր Զուլվարլինսկի, Կասում – Իսմայիլովի ՄՏԿ դիրեկտոր Տոնյան) կան այնպիսիները, վորոնք խայտառակորեն տապալում են աշխատանքը: Այդպիսիների շարքին է պատկանում Աղջաբեդու ՄՏԿ դիրեկտոր Կասպարովը, վորը ցելի պլանը կատարել է 3 տոկոսով, տուրմանով բամբակահավաքի պլանը 18 տոկոսով, խոտհարքինը՝ 4 տոկոսով. Մասալու ՄՏԿ դիրեկտոր Մյասնիկը, վորի մոտ հացահատիկների գըծով պլանը կատարված է 13 տոկոսով, աշնանացանինը 28 տոկոսով, ցելինը 18 տոկոսով:

Համկոմկուսի (բ) Կենտկոմի և ԿՎՀ-ի հունվարյան պլենումի ցուցմունքները և ՄՏԿ-ների քաղբաժինների ստեղծումը, ապահովեցին թերությունների վճռական ուղղումը ՄՏԿ-ներում ու նրանց՝ կոլտնտեսությունների կազմակերպչա – տնտեսական ամրապնդման բոլշևիկյան կենտրոններ դարձնելու համար մղվող՝ պայքարի ծավալումը:

Տրակտորային պարկի ցանցի և հզորության աճումը 1934 թվին պետք է կազմի 1,976 տրակտոր 17,940 ձիու ուժի հզորությամբ, իսկ հնգամյակի վերջում 4,250 տրակտոր 57 հազար ձիու ուժի հզորությամբ:

ՄՏԿ-ների աշխատանքը վարի վերածած 1937 թվին պետք է կազմի 1,320 հազար հեկտար, 1933 թվի 250 հազար հեկտարի դիմաց:

ՄՏԿ-ների կողմից սպասարկվող միայն բամբակային տարածությունը 1937 կկազմի 183 հազար հեկտար:

Խորհտնտեսությունների ցանքսի տարածությունը 1937 թըվին պետք է լիովին մեքենայացվի: Խորհտնտեսական արտադրության ճիշտ կազմակերպման հետ մեկտեղ, տրակտորների, ավտոմեքենաների ու գյուղատնտեսական մեքենաների ոգտագործումը 1934–35 թվերին պետք է ապահովի մեր խորհտնտեսությունների վերածումը իսկական որինակելի սոցիալիստական տնտեսությունների:

VII. ՀԱՆՈՒՆ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱՆՈՒՆ ՈՒՆԵՎՈՐ ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ԿՅԱՆՔԻ

1. ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱ—ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄՆ ՈՒ ՔԱՂԲԱԺԻՆՆԵՐԻ ԴԵՐԸ

Ընկ. Ստալինն այն հարցի մասին, թե ինչով է թելադրվել հնգամյակի հիմնական խնդիրները, հունվարյան պլենումում ասել է.

«Այն նկատառումով վոր խորհրդային իշխանությունը չի կարող յերկար հենվել յերկու հակադիր հիմքերի վրա — խոշոր սոցիալիստական արդյունաբերության վրա, վորը վոչնչացնում է կապիտալիստական տարրերին, և մանր անհատական գյուղացիական տնտեսության վրա, վորը կապիտալիստական տարրեր է ԾՆՈՒՄ:

«Այն նկատառումով, վոր քանի դեռ մանր գյուղական տնտեսության համար խոշոր արտադրության բազա չի դըրված, դեռ մանր գյուղական տնտեսությունները չեն միացված խոշոր կոլեկտիվ տնտեսության մեջ, — ԽՍՀՄ-ում կապիտալիզմի վերականգնման վտանգն ամենառեալ վտանգն է հանդիսանում՝ բոլոր հնարավոր վտանգներից»:

Միմիայն խոշոր ինդուստրիալ արդյունաբերության խնդիրները գյուղական տնտեսությունում կոլտնտեսություններ ու խոշոր խորհտնտեսություններ կազմակերպելու խնդիրների հետ

լծորդելով, կուսակցությունը կարողացել է ապահովել պրոլետարիատի դիկտատուրայի ամրությունը և հետագա անցումը դեպի անդասակարգ սոցիալիստական հասարակություն:

Առաջին հնգամյակի հանրագումարում Խորհրդային Միությունը մանր գյուղացիական յերկրից՝ աշխարհիս ամենախոշոր հողագործության յերկիր է դարձել:

Յերեկվա հետամնաց, նահապետական թրքական գյուղն, իր տոհմական մնացորդներով, արտադրության նախապատմական գործիքներով պետք է ամենակարճ ժամանակամիջոցում հաղթահարեր ու վերացներ այդ դարավոր հետամնացությունը: Ադրբեջանի բոլշևիկների առաջ խնդիր էր կանգնած — «Հասնել կենտրոնական Ռուսաստանին թե պետական, թե կուլտուրական, թե տնտեսական տեսակետից»: (Ընկ. Ստալինի 10-րդ համագումարում տված զեկուցումից):

Ադրբեջանի գյուղը, Խորհրդային Միության պրոլետարիատի կողմից ցույց տրված օգնության շնորհիվ, Բաքվի պրոլետարիատի օգնությամբ՝ անցել է տեխնիկապես զինված կոլեկտիվ գյուղական տնտեսության ռելսերի վրա:

Կոլտնտեսությունների կազմակերպչա-տնտեսական ամրապնդման համար կուսակցության կենսագործած միջոցառումների և կուլակային դիմադրության դեմ, կոլտնտեսական շինարարության ասպարեզում յեղած աղավաղումների դեմ մղած պայքարի հետևանքով՝ ԱՍԽՀ գյուղական տնտեսության կոլեկտիվացման մակարդակն ահագին չափով բարձրացել է:

Առ 1-ն հունվարի 1932 թ. կոլտնտեսությունների թիվը 3.330 է յեղել, 154.455 տնտեսություններով: Հանրապետության մեջ կոլեկտիվացման տոկոսը 43 է կազմել, մի կոլտնտեսության միջին թվով ընկել է 46 տնտեսություն: Առ 1-ն հունվարի 1933 թվի, կոլտնտեսությունների թիվը յեղել է 3.440 նրանցում՝ 171.948 տնտեսություններ: Կոլեկտիվացման տոկոսը կազմել է 44,5 միջին թվով մի կոլտնտեսության ընկել է 50 տնտեսություն: Առ 1-ն դեկտեմբերի 1933 թվի, կոլտնտեսությունների թիվը հասել է 3692-ի, նրանցում, 195,345 տնտեսություններ, կոլեկտիվացման տոկոսը բարձրացել, հասել է 51,6 տոկոսի:

Մի շարք շրջաններ ընդհուպ մոտեցել են կոլեկտիվացման ավարտմանը (Բարդայի շրջանը — 95,6 տոկոս, Կասում-Իսմայիլովինը — 88,2 տոկոս, Ալի-Բայրամլինը — 86,1 տոկոս, Զանգելանինը — 82,9 տոկոս, Լենքորանինը — 77,7 տոկոս):

Դրանց շարքում կան կոլեկտիվացման շատ ցածր տոկոս ունեցող շրջանները. — Խամայլինը — 16 տոկոս, Շամախինը — 19,6 տոկոս, Գիլինը — 26,1 տոկոս: Այդ շրջանների կոլեկտիվացման ցածր տոկոսը գլխավորապես բացատրվում է ՄՏԿ-ի տեխնիկական բազայի բացակայությամբ, կենտրոնական կազմա-

կերպությունների կողմից յեղած թույլ ղեկավարությամբ և նրանց թույլ աշխատանքով:

Կոլեկտիվացման աճման հետ միասին՝ աճել է և ցանքային տարածությունների համայնացման տոկոսը: 1930 թվին դա կազմել է 10,6 տոկոսը (109,960 հեկտար), 1933 թվին — 55,4 տոկոս (525,070 հեկտար): Յեթե 1930 թվին մի կոլտնտեսությունը միջին թվով ունեցել է 60 հեկտար, ապա 1933 թվին՝ ունեցել է 140 հեկտար:

Բամբակային շրջաններում գյուղական տնտեսության կոլեկտիվացման ու ցանքային տարածությունների համայնացման տեմպերն ավելի բարձր մակարդակի վրա յեն:

Բամբակային շրջաններում առ մեկն հունվարի 1932 թ. կոլեկտիվացված է յեղել տնտեսությունների 68,5 տոկոսը և առ մեկն դեկտեմբերի 1933 թ. արդեն 70,6 տոկոսը, վորն ընդգրկել է այդ շրջանների բամբակի բոլոր գյուղացիական ցանքերի 90 տոկոսը:

Գյուղական ինվենտարը հիմնականում ամբողջապես համայնացված է: Համայնացված է կոլտնտեսություն մտած տնտեսությունների բանող անասունների 82 տոկոսը, վոր գյուղացիական սեկտորի բանող անասունների 34 տոկոսն է կազմում:

Զգալի հաջողություններ են ձեռք բերվել կոլտնտեսային ապրանքային ֆերմաներ կազմակերպելու գործում: 1930 թվին Համկոմկուսի (բ) Անդրյերկոմը Ադրբեջանի կազմակերպությունների տված զեկուցումների վերաբերմամբ, ինչպես հայտնի յե, «ձախ» վորոշումներ է կայացրել մինչև 1931 թվի վերջը բամբակային ռայոններում համատարած կոլեկտիվացումն ավարտելու մասին:

Ընկ. Ստալինի «Գլխապտույտ հաջողություններից» հոդվածի մեջ արած ցուցմունքը — չեյին հաշվեառել Անդրկովկասի և մասնավորապես Ադրբեջանի կուսակցական կազմակերպությունները:

1931 թվի ապրիլին, Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի պլենումը գյուղացիական տնտեսությունների կոլեկտիվացման կոնտրոլային թվեր էր տվել.

«Բամբակային շրջաններում բոլոր տնտեսությունների 50 տոկոսը կոլեկտիվացնելու մասին Համկոմկուսի (բ) Անդրյերկոմի տված հրահանգը կատարելու համար, Ադրկոմկուսի (բ) Կենտկոմն առաջարկում է տեղերին՝ աշխատել 1931 թվի ընթացքում, բամբակային շրջաններում կոլտնտեսությունները ներգրավել նոր, առնվազն 35–38 հազար տնտեսություն, ըստ վորում այս տարվա գարնանն այդ քանակությունից պետք է կոլտնտեսություններում կազմակերպված լինեն առնվազն 20–28 հազար տնտեսություն, այնպես, վոր 1931 թվի աշնանը, բերքահավաքի և 1932 թվի նախապատրաստման ժամանակ կոլտնտեսության մեջ քաշվի մնացած 10 հազար տնտեսությունները»:

Այդ հրահանգի հիման վրա կոլտնտկենտրոնը (Թայիրով) կոլեկտիվացման կոնտրոլային թվերը բաժանել է ըստ առանձին շրջանների և հրատարակել այն մամուլում: Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի ղեկավարության սխալները չեն ուղղվել հետագա պլենումի ու համագումարի վորոշումներում:

Կոլեկտիվացման ասպարեզում կուսակցական գծի «ձախ» աղավաղումները, — վոր հիմնականում կամավորության լենինյան սկզբունքի խախտման, ինչպես և վարչական հարկադրման և այլնի մեջ են կայացել, — ծառայել են գյուղի հակախորհրդային և կուլակային տարրերի ոգտին, վորոնք ակտիվացրել են իրենց գործունեյությունը:

Դրա հետևանքն այն է յեղել, վոր այն ժամանակ մասսայորեն դուրս յեկան կոլտնտեսություններից, թուլացավ տնտեսական գործունեյությունն ու մի շարք շրջաններում քայքայվեցին կոլտնտեսությունները:

Բացարձակ պայքարում ջարդված կուլակն ու նրա գործակալությունը վնասարարական գործունեյության՝ են անցնում կոլտնտեսության ներսում և խլուրդային աշխատանք են տանում:

Կուսակցության 16-րդ համագումարի դրած պատմական խնդիրներն իրացնելու ընթացքում՝ Անդրկովկասում մի շարք սխալներ են կատարվել, վորոնց ուղղումն է պահանջել Համկոմկուսի (բ) Կենտկոմը՝ Անդրյերկոմից և ազգային հանրապետությունների կենտկոմներից:

«Անդրյերկոմն ու ազգային կոմկուսների կենտկոմները գյուղական տնտեսության վերակառուցման վերաբերմամբ հսկայական աշխատանք ծավալելով, առավելապես աշխատանքի տեխնիկական կողմն են ընդգրկել և գյուղացիության (չքավոր-միջակ մասսաների) հանդեպ ճիշտ քաղաքական ղեկավարություն չեն ապահովել»:

Ադրբեջանի կուսակցական կազմակերպությունը, Համկոմկուսի (բ) Անդրյերկոմի ղեկավարությամբ, մեծ աշխատանք է կատարել Համկոմկուսի (բ) Կենտկոմի մատնանշած սխալներն ուղղելու համար: Սակայն պետք է ասել, վոր այդ կողմից դեռ մեծ, համառ աշխատանք կա կատարելու, վորը թերագնահատում են առանձին շրջանային ղեկավարներ (Սալյան, Աղջաբեդի, Գյոկչայ, Շամխոր):

2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Կուսակցության 16-րդ համագումարը ամբողջ հասակով առաջ է քաշել աշխատանքի կազմակերպման պրոբլեմը «վորպես ամենաայժմեյական հարց գյուղական տնտեսության հետագա կոլեկտիվացման և սոցվերակառուցման համար տարվող պայքարի գործում»:

Խորհուրդների 6-րդ համագումարը և Համկոմկուսի (բ) Կենտկոմի 1932 թվի փետրվարի 4-ին «կոլտնտեսությունների կազմակերպչա-տնտեսական ամրապնդման նկատմամբ հերթական միջոցառումների մասին» կայացած վորոշումը ծավալուն ծրագիր են տվել կոլտնտեսությունների աշխատանքի կազմակերպման համար (գործարքայնություն և աշխատանքի բրիգադային մեթոդ մտցնելը):

Այդ վորոշումների իրականացման հետևանքով գործարքայնությունն ու բրիգադային մեթոդը Ադրբեջանի կոլտնտեսություններում աշխատանքի կազմակերպման հիմնական ձևն է դարձել: Մենք մի շարք առաջավոր կոլտնտեսություններ ունենք ամուր, ճիշտ կերպով կազմակերպված բրիգադներով, որինակ Ալի-Բայրամլուի շրջանի Մեյնիխման գյուղի կոլտնտեսությունը, Աղդամի շրջանի «Տրուդ» կոլտնտեսությունը, Կասում-Իսմայլովի շրջանի «Բագխորհրդի» անվան կոլտնտեսությունը և ուրիշները:

Գործարքայնությունն ու արտադրական մշտական բրիգադն ահագին չափով բարձրացրել են աշխատանքի արտադրողականությունը և ամրապնդել աշխատանքային կարգապահությունը կոլտնտեսություններում: 90–100 կիլոգրամ հավաքելը շատ էլ հազվադեպ յերևույթ չի Ադրբեջանի առաջավոր կոլտնտեսություններում:

Բամբակենու մշակման գործում ունեցած նվաճումները, այլ և ժամկետից առաջ բամբակաքաղի պլանների կատարումն ու գերակատարումը Զանգելանի, Կասում-Իսմայլովի, Գյանջայի, Աղդաշի առաջավոր շրջանների կողմից՝ մասամբ բացատրվում է աշխատանքի ճիշտ կազմակերպումով, անդեմության ու հավասարանքի վերացումով, կոլտնտեսություններից շատերում ապրանախմինիմումը գործադրելով:

Ընկ. Ստալինի լոզունգը — «Ազնվաբար աշխատել և պահպանել կոլտնտեսային բարիքը» — հազարավոր կոլտնտեսականների համար որենք է դառնում:

Արդյունաբերության մեջ ծագում առած աշխատանքի սոցիալիստական ձևերն առաջավոր կոլտնտեսականների միջոցով փոխադրվում են գյուղական տնտեսություն. հարվածային շարժումը լայնորեն ծավալվել է Ադրբեջանի կոլտնտեսություններում և այդտեղից անցել Խորհրդային Միության կոլտնտեսային դաշտերը:

Կասում-Իսմայլովի շրջանի «Բագխորհուրդ» կոլտնտեսության կոմյերիտական բրիգադիր, լավագույն կոլտնտեսական Մուստաֆա Մամեդովը առաջադրել է ագրոնարյադի գաղափարը:

Մուխթար Հյուսեյնովն առաջադրել է ագրոտեխպլանը: Նրանք յերկուսն էլ տաղանդավոր կազմակերպիչներ են, վորոնց հարյուրներով է առաջ քաշել կոլտնտեսային արտադրությունը:

Մեզ մոտ քիչ չեն օրինակելի կոլտնտեսությունները։ Ալի-Բայրամլուի շրջանի «Զահմեթ» կոլտնտեսությունը 1933 թվին ըստ պլանի պետք է 500 հեկտար յեգիպտական բամբակ ցաներ․ փաստորեն ցանել է 511 հեկտար, իսկ 1934 թվի համար 550 հեկտար պլան է ընդունել։

Ունենալով 37 ձի և 49 յեզ կոլտնտեսությունն անցյալ տարի անբաժանելի միջոցներից ձեռք է բերել եվս 14 ձի և 6 յեզ։ Բանող անասունները լավ վիճակում են, լիովին ապահովված են մինչև նոր բերքը կերով և պահվում են 1932 թվին կոլտնտեսության շինած գոմերում։

Գյուղատնտեսական ամբողջ ինվենտարը նորոգված է և յուղած պահվում է ծածկի տակ։ Կա ղարբնոցային արհեստանոց։ Կովազուրկ տնտեսություններին (14 տնտես․) անասուն ձեռք բերելու համար օգնություն հասցնելու նպատակով կոլտնտեսությունն իր յեկամուտներից անհրաժեշտ միջոցներ է հատկացնում։

Բանող անասուններն ու գյուղատնտեսական ինվենտարն ամրացված են առանձին բրիգադների։ Մշակման նորմաներն ու բերքատվությունը դիֆերենցիացիայի յեն յենթարկված ըստ բրիգադների առանձին տեղամասերի։

1932 թվին այդ կոլտնտեսություններում ամեն մի աշխորին ընկել էր 2,1 կիլոգրամ ցորեն, 76 գրամ շաքար, 6 գրամ թեյ և 1 ռ․ 21 կոպեկ փող, իսկ 1933 թվին—4 կիլո ցորեն, 91 գրամ շաքար, 9 գրամ թեյ և 1 ռ․ 89 կոպեկ փող։

Այդպիսի կոլտնտեսություններ մենք ունենք տասնյակներով ու հարյուրներով։

Այդ օրինակելի կոլտնտեսությունների հետ միասին քիչ չեն և հետ մնացողները, Աղդամի շրջանի Կուզանլինի գյուղխորհրդի 26-ի անվան կոլտնտեսությունը կազմակերպվել է 1927 թվին․ 1932 թվի հունվարի 1-ին ուներ 81 տնտեսություն, 1933 թ․ հոկտեմբերի 1-ին—76։6 ձի, 52 խոշոր յեղջյուրավոր անասուն։ Բրիգադները կազմակերպված են տերիտորիալ ու ազգակցական սկզբունքով։ Խիստ ցածր է աշխատանքային կարգապահությունը։ 140 աշխատունակներից բամբակաքաղի եյին յելնում հոկտեմբերին 35–50 հոգի։ Բամբակաքաղի նորման 45 կիլո լինելով կոլտնտեսականներն օրեկան միջին հաշվով 14-ից մինչև 21 կիլո հնդավոր բամբակ եյին քաղում։ Աշխատանքային հաշվառումը կարգի չի բերված։ Աշխատանքային գրքույկները գտնվում են կոլտնտեսության գրասենյակում և վոչ թե կոլտնտեսականների ձեռքին։ Բանող անասունները լիովին չեն համայնացված։ Միմիայն 4-րդ բրիգադում կոլտնտեսականներն ունեն 9 վոչ համայնացրած ձիեր։ Համայնացրած գոմ չունենալու պատճառով բոլոր անասունները նախկին տերերի մոտ են գտնվում։ Մանկամսուրները քայքայվել են։ Ծայր աստիճան թույլ պայքար է մղվում սոցիալիստական սեփականությունը պահպանելու համար։ Կոլտնտեսու-

թյան գույքը սիստեմատիկ կերպով հափշտակվում է և ցաք ու ցրիվ է արվում, հափշտակվել է և աղունավարձը։ 1933 թվի 10 ամսում փոխվել են կոլտնտեսության չորս նախագահ։ Բերքը բաշխելու ժամանակ ամեն մի աշխորին ընկել է 0,4 կիլո (400 գրամ) ցորեն և 0,8 կիլո գարի։

3. ԲԵՐՔԻ ԲԱՇԽՈՒՄԸ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Կոլտնտեսային յեկամուտների բաշխումն ըստ աշխատանքային սկզբունքի, բացառապես ըստ աշխատանքի քանակի ու վորակի, հաստատապես և ամուր կերպով մտել է կոլտնտեսությունների պրակտիկայի մեջ։ Աշխորն աշխատանքի միակ չափանիշն է դարձել և «ով ավելի շատ ու ավելի լավ է աշխատում, նա ավելի յե ստանում» լոզունգը ռեալ մարմնացումն է գտել կոլտնտեսային իրականության մեջ։

Համկոմկուսի (բ) Անդրյերկոմի ու Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի ղեկավարությամբ, ՄՏԿ քաղբաժինների օգնությամբ, կոլտնտեսությունների կազմակերպչա-տնտեսական ամրապնդման և խորթ ու կուլակային տարրերից մաքրելու համար կոլտնտեսականների մղած վճռական պայքարի հետևանքով, տնտեսական միջոցառումների ճիշտ կիրառման և կուսակցության առաջնորդ ընկ․ Ստալինի «բոլոր կոլտնտեսությունները բոլշևիկյան և կոլտնտեսականներին ունևոր դարձնել» լոզունգի կենսագործման համար մղած հերոսական պայքարի հետևանքով — ԱՍԽՀ կոլտնտեսություններն ընթացիկ տարում յեկամուտների առաջին աճում են ձեռք բերել։

Բերքի առանձին շրջաններում ու կոլտնտեսություններում բաշխելու հանրագումարի նախնական տվյալները ընթացիկ տարում կոլտնտեսականների յեկամուտների զգալի աճում ցույց տվին, նախորդ տարիների յեկամուտների համեմատությամբ։

Յեթե 1932 թվին ամեն մի աշխորին հացահատիկի քանակը վորպես կանոն, 1–2–3 կիլոգրամից չեր անցնում, ապա 1933 թվին 5–10 կիլոգրամ մի օրին՝ սովորական է դառնում, չխոսելով մի ամբողջ շարք կոլտնտեսությունների մասին, վորտեղ աշխորին ընկնում է 15–20 կիլոգրամ հացահատիկ։

Իսկ Կարյագինի շրջանի Աշաղա Սեյիդ Ահմեդ գյուղի Վորոշիլովի անվան կոլտնտեսությունում ամեն մի աշխորին ընկնում էր 46 կիլո 847 գրամ հացահատիկ, վորից 31 կիլո կորեկ։

Այս տվյալները խոսում են այն մասին, վոր մեր կոլտնտեսությունները հաստատուն կերպով անցել են բոլոր կոլտնտեսականներին ունևոր դարձնելու ուղին։

Ահա ինչ են ասում հենց իրենք, կոլտնտեսականները․—

Գյանջայի շրջանի Ալի-Բայրամովի անվան կոլտնտեսությունից Գյուլ Ահմեդ Ալի օղլին իր մասին այսպես է ասում․

«Յես ամբողջ կյանքս բատրակ եյի, ապրում եյի գետնափորում, կուլակի մոտ, աշխատեցի բարեխղճությամբ։

1932 թվին ստացա 361 կիլո ցորեն, 180 կիլո գարի, 48 կիլո սոխ, 61 կիլո բրինձ և 295 ռուբլի փող: Կով գնեցի, տնակ շինեցի: 1933 թվին վաստակեցի 457 աշխօր, ստացա 1889 կիլո ցորեն, 1140 կիլո գարի, ելի մի գոմեշ ձեռք բերի. ապրում եմ լուսավոր, մեծ սենյակում, մեր անկողինը միշտ մաքուր է, ունեմ կարի մեքենա, կերոսինկա և այլն»:

Աճում է կոլտնտեսականների յերեխաների կուլտուրական մակարդակը և քաղաքական գիտակցությունը: Ահա ինչ է ասում Գյանջայի շրջանի Ալի Բայրամովի անվան կոլտնտեսության կոլտնտեսականի վորդի, 10 տարեկան Ռասուլ Հեյդար ողլին.

«Յես առաջ բոբիկ եյի ման գալիս, այժմ ունեմ վառնաման ու հագուստ: Յերբ յես դպրոց եմ գնում ինձ հետ նախաճաշ եմ վերցնում: Յերբ իմ հայրը դեռ կոլտնտեսությունում չեր, յես յերբեք քաղցր թեյ չեյի խմում: Յես աշխատում եմ գրագետ լինել, վոր շուտով դառնամ մեր կոլտնտեսության բրիգադիրը»:

Բոլշևիկյան կոլտնտեսությունների համար, կոլտնտեսային ունևոր կյանքի համար մղվող պայքարը հանդիպում է դասակարգային թշնամու կատաղի դիմադրությանը: Կուլակը շատ դեպքերում գողության և կոլտնտեսային գույքի թալանին է դիմում:

1933 թվին Ալի Բայրամովի շրջանի «Ազինչի» կոլտնտեսությունում կոլտնտեսության նախագահ Բալա Ալի օղլին, Դուգան Տիր Ալի և Հասանով կուլակների մասնակցությամբ թաքցրել է տաս բարդան բամբակ:

Զաքաթալայի շրջանի Ֆալդար գյուղում 150 փութ ծխախոտ է թաղված յեղել գետնի տակ: Աղդաշում կողոպտումներ են յերևան հանվել 29 կոլտնտեսությունում, Խաչմասում—16:

Կուլակն աշխատելով կոլտնտեսություններին վնաս հասցնել, իր ուշադրությունն է կենտրոնացնում աշխօրերը վատնելու վրա, մշակման ցածր նորմաներ հաստատելու, բրիգադները կազմակերպելու վրա և աշխատում է կոլտնտեսային յեկամուտների բաշխման վոչաշխատանքային, հավասարանքի սկզբունքը կիրառել և այլն:

Դիվիչու շրջանի «Կըզըլ Բարալի» կոլտնտեսությունում աշխօրը հաշվում են ժամանակով աշխատանքի հիման վրա՝ առանց հաշվի առնելու նորմաներն ու փաստական մշակումը:

Նուխու շրջանի «Կոչկարակոյունլու» կոլտնտեսությունում գործարքայնությունը բացակայում է. աշխատանքի դուրս գալը հաշվի յե առնվում խաչանիշներով, իսկ դուրս չգալու համար գծիկներ են դնում. և բացարձակ պրոգուլշչիկներին անպատիժ են թողնում:

4. ԽՈՐՀՏՆՏԵՍԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակաշրջանը խորհտնտեսությունների, վորպես հետևողական սոցիալիստական տիպի ձեռնարկությունների, ուժեղ զարգացման շրջան է յեղել: 1930 թվին կար ընդամենը 21 խորհտնտեսություն: Այդ թիվը 1933 թվին ավելացել է մինչև 115 (դրանցից 77 խորհտնտեսություն պատկանում են պետկազմակերպություններին, 28-ը սպառկոոպերացիայի սիստեմին և 10-ը քաղաքամերձ խոշոր տնտեսություններ են):

Խորհտնտեսությունների ընդհանուր մասսայում, մանր խորհտնտեսությունների և կոոպտնտեսությունների հետ միասին կան այսպիսի ուժեղ խորհտնտեսություններ.

Ստալինի անվան բամբակային խորհտնտեսությունը 30,446 հեկտար ընդհանուր տարածությամբ.

Կարա – Ջալայի բամբակային խորհտնտեսությունը 22,437 հեկտար ընդհանուր տարածությամբ,

Որջոնիկիձեյի անվան հացահատիկային խորհտնտեսությունը 29,543 հեկտար ընդհանուր տարածությամբ,

Ապշերոնի խաղողի այգիներինը 862 հեկտար ընդհանուր տարածությամբ,

Շամախու խաղողի այգիներինը 1262 հեկտար ընդհանուր տարածությամբ,

Մինգեչաուրի վոչխարաբուծական խորհտնտեսությունը 38,656 գլուխ վոչխարով և 111,276 հեկտար հողային տարածությամբ:

Խորհտնտեսությունների ցանքսային տարածությունը և նրա տեսակարար կշիռը հանրապետության ընդհանուր ցանքսում հետևյալ թվերով է արտահայտվում.—

1930 թ. 4,85 հազար հեկտար մոտ 1 տոկոս
1931 թ. 40,38 հազար հեկտար կամ 3,7 տոկոս
1932 թ. 64,09 հազար հեկտար կամ 6,5 տոկոս
1933 թ. 74,13 հազար հեկտար կամ 7,2 տոկոս

Յերկրորդ հնգամյակի վերջին նախագծվում է խորհտնտեսությունների սեկտորում ցանքսային տարածության զգալի ընդարձակումը, վոր պետք է հասցնի 120,3 հազար հեկտարի:

Խորհտնտեսությունների տրակտորային պարկը 1932 թվին 80 միավոր էր 1200 ձիու ուժով, 1933 թվին հասել է 779 միավորի: Այդ աճումն ըստ տարիների բնորոշվում է հետևյալ թվերով.—1931 թ.—685 տրակտոր, 1932 թ.—737 միավոր—10,530 ձիու ուժով:

Զգալի աճում է տավարի նույնպես բանող անասունների գլխաքանակը:

Պրոլետարական արդյունաբերական կենտրոններին՝ Բաքվին ու Գյանջային բանջարեղեն մատակարարելու անհրաժեշտության կապակցությամբ 32-33 թվին ստեղծվել են մի շարք հատուկ քաղաքամերձ բանջարանոցային տնտեսություններ թե

սպառկոոպերացիայի և թե բանմաքրաժինների դեմ Ազնեֆթի խոշոր ձեռնարկություններում: 1933 թվի վերջին այդպիսի քաղաքամերձ տնտեսությունների թիվը հասնում եր 187-ի:

5. ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Առաջվա պես Ադրբեջանի բոլշևիկների առաջ խնդիր է դրված առանց առարկության կատարել Համկոմկուսի (բ) Կենտկոմի փետրվարի 4-ի վորոշումը—կոլտնտեսությունների կազմակերպչական – տնտեսական ամրապնդման հերթական խնդիրների մասին:

Աշխատել ազնվաբար, վերացնել անդեմությունը և հավասարանքը կոլտնտեսություններում, բարձրացնել բրիգադիրների և կոլտնտեսականների պատասխանատվությունը, կազմակերպել կոլտնտեսական ակտիվ, պահպանել կոլտնտեսության հասարակական սեփականությունը դասակարգային թշնամու վոտնձգություններից, — ահա թե ինչ է պահանջում մեզնից կուսակցությունը:

Որն որին աշխատել լիովին կատարել ընկ. Ստալինի հրահանգը՝ կոլտնտեսությունները բոլշևիկյան և կոլտնտեսականներին ունևոր դարձնելու մասին, չբավականանալով այն նվաճումներով, վոր մենք ունենք այդ բնագավառում:

Մենք պետք է բոլշևիկորեն կազմակերպենք գործը, ճիշտ դասավորենք ուժերը կոլտնտեսային շինարարության վորոշ տեղամասերում, բարձրացնենք կոմունիստների և կոմյերիտականների ավանգարդային դերը, բարձրացնենք կնոջ դերը կոլտնտեսային շինարարության մեջ, ներգրավենք ակտիվը կոլտնտեսային շինարարության մեջ և ծավալենք սոցմրցությունն ու հարվածայնությունը:

Ճիշտ կազմակերպել աշխատանքը, բարձրացնել աշխատարգապահությունը, խիստ պայքար մղել լոդըրների և դատարկապորտների դեմ, աշխատապահությունը խախտողների դեմ, բարձրացնել կոլտնտեսականների կուլտուրական մակարդակը—այսպիսին են խնդիրները:

Դնելով այս խնդիրները մենք պետք է կտրականապես դեն շպրտենք այն հանգստացումը, վոր կա մեր կուսակցական կազմակերպությունների մի շարք օղակներում և մեր ղեկավար ակտիվի առանձին անձերի միջև, մանավանդ բամբակի պլանի կատարման կապակցությամբ, վորոնք կարծում են, վոր մենք կոլեկտիվացումն ավարտել ենք և վոր մնացած ամեն ինչը կանցնի ինքնահոսով:

Այդ ընկերներին յես ցանկանում եմ հիշեցնել ընկ. Ստալինի յելույթը Համկոմկուսի (բ) Կենտկոմի հունվարյան պլենումում, վորտեղ նա ասել է. —

«Շատերը կարծում են, թե քանի վոր հասել ենք, ասենք կոլեկտիվացման 70 կամ 80 տոկոսին այս կամ այն շրջանում, այս կամ այն մարզում, ապա դրանով արդեն

ամեն ինչ արված է և մենք կարող ենք գործն իրերի բնական ընթացքին թողնել, յենթադրելով, վոր կոլեկտիվացումն ինքը կանի իր գործը, ինքը կբարձրացնի գյուղական տնտեսությունը: Բայց դա խորին մոլորություն է»:

Նա, ով հանգստանում է, նա ընդունակ է կորցնելու դասակարգային զգաստությունը, նա դասակարգային թշնամուն է նպաստում: Իսկ այդպիսի հանգստացումը և դասակարգային զգաստության կորուստը տեղ է գտնում մինչև իսկ այնպիսի կարևորագույն ապարատում, վորպիսին Հողժողկոմատն է: Նախկին տրոցկիստ Սկուբլինսկին շարունակում է չափազանց նուրբ կերպով ներս խցկել իր կուլակային իդեոլոգիան: Ահա թե ինչ է գրում նա յեկամուտների բաշխման սեկտորին ուղղած իր զեկուցագրի մեջ. —

«Բամբակի ցածր բերքատվությունը ճիշտ չէ բացառապես դասակարգային թշնամու գործ համարել: Այստեղ կան բնական – կենցաղային և կուլտուրական կարգի պատճառներ»:

Դասակարգային թշնամու ազդեցությունը, և մանավորապես գյուղական առանձին աշխատողների դասակարգային զգաստությունը կորցնելու պատճառով (Աղդաշ), անկասկած ուղղված է գլխավորապես բերքի դեմ: Այստեղ մենք ունենք բացահայտ թունդ – օպորտունիստական յելույթ, վորն ըստ եյության ժխտում է դասակարգային թշնամու այն ընդդիմադրությունը, վոր մենք ունենք բամբակի համար մեր կողմից մղվող պայքարում: Միանգամայն պարզ է, վոր նման դրույթները թուլացնում են մինչև իսկ դեմոբիլիզացիայի յեն յենթարկում դասակարգային զգաստությունը:

Դժբախտաբար, այդ վնասարարական դրույթը ժամանակին հակահարված չի ստացել Հողժողկոմատի ղեկավար ընկերների կողմից: Համամիութենական 17-րդ կուսկոնֆերանսն իր վորոշման մեջ ուղղակի գրել է, վոր՝ «Հետագայում ել դեռևս անխուսափելի յե դասակարգային պայքարի սրումն առանձին մոմենտներում, և մանավանդ առանձին շրջաններում և սոցշինարարության առանձին տեղամասերում, վոր դրա հետ միասին չեչտում է աշխատավորների առանձին խավերի և խմբակների վրա բուրժուական ազդեցությունների պահպանման, իսկ վորոշ դեպքերում նաև ուժեղացման անխուսափելիությունը, դեռևս յերկար ժամանակի ընթացքում պրոլետարիատին խորթ դասակարգային ազդեցությունների թափանցման անխուսափելիությունը բանվորների և մինչև իսկ կուսակցության մեջ»:

Դրա ցայտուն հաստատումն է հանդիսանում այն դիմումը, վոր գրել է Սաբիրաբադի շրջանի Կրասնոսելսկ գյուղի բջիջի քարտուղար Սկլյարովը, վորը դուրս յեկավ տիպիկ սպիտակգվարդիական գործակալ: Նրա դիմումը վոչնչով չի տարբերվում այն սովորական դոկումենտներից, վոր գրում են խոր-

հողային սահմաններից վռնդված սովխոզ – գվարդիականները:

Ըստ յերևույթին այդ դիմումը կազմել են վոչ միայն բջջի քարտուղարն ու այդ գյուղի կուլակները, այլ և ուրիշները:

Դա վկայում է այն մասին, վոր այն ընկերները, վորոնք իրենց հետ մնալու պատճառն ամենից առաջ աշխատում են վորոնել կնգուղների ուշ բացման, այս տարվա վատ վեգետացիայի, գյուղատնտեսական վնասատուների մեջ — խորին մոլորության մեջ են գտնվում, վորովհետև այդ բոլոր խոսքերը կուլակների խոսքեր են, վոր ուղղված են մեր շարքերի կազմալուծմանը և մեր պլանների տապալմանը: Հետ մնալու առաջին և հիմնական պատճառներից մեկը պետք է վորոնել կուլակային սաբոտաժի մեջ, պետք է վորոնել, թե վոր ճեղքն է խցկվել կուլակը, դուրս հանել նրան այնտեղից, մերկացնել ու դուրս վռնդել: Դա գլխավորապես վերաբերում է հետ մնացող շրջաններին: Այդ կողմից բնորոշ են Աղջաբեդու և Սալյանի շրջանները:

VIII. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ՅԵՎ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՈՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կոլտնտեսությունների կազմակերպչա – տնտեսական ամրապնդման հետ անմիջականորեն կապված է սոցիալիստական սեփականության պահպանման և հեղափոխական որինականության հարցը: Այդ գործն անմիջապես տնօրինող մարմինների աշխատանքը չափազանց վատ է դրված: Մեր այսօրվա դրությունների տեսակետից դատախազության որգաններն ստանում են շատ մեծ քաղաքական նշանակություն: Հեղափոխական որինականության և սոցիալիստական սեփականության պահպանման նկատառմամբ, ըստ յերևույթին, մենք պետք է հսկայական, մեծ աշխատանք կատարենք այդ ֆրոնտում, այնտեղ ուղարկենք ամենալավ աշխատողներին, վորոնց միայն մենք կարող ենք տալ մեր շարքերից:

Սոցիալիզմի կառուցման ժամանակակից էտապի հեղափոխական որինականության բնույթն ու բովանդակությունը վորոշելով՝ ընկ. Ստալինն ասել է առաջին հնգամյակի հանրագումարի մասին տված իր զեկուցման մեջ. —

«Հասարակական սեփականության պահպանման համար մղվող պայքարը, խորհրդային իշխանության որենքների կողմից մեզ տրամադրած բոլոր միջոցներով ու չափերով մղվող պայքարը, — կուսակցության հիմնական խնդիրներից մեկն է հանդիսանում»:

Սոցիալիստական սեփականությունը մեր կարգերի հիմքն է հանդիսանում, և այդ հարցը — մեր հեղափոխության կարևորագույն հարցն է:

«Մեր կարգերի հիմքը, — ասել է ընկ. Ստալինը նույն զեկուցման մեջ, — հասարակական սեփականությունն է այնպես, ինչպես կապիտալիզմի հիմքը — մասնավոր սեփականությունն է: Յեթե կապիտալիստները մասնավոր սեփականությունը սրբազան և անձեռնմխելի յեն համարել, իր ժամանակին ձեռք բերելով կապիտալիստական կարգերի ամրապնդում, ապա մենք, կոմունիստներս առավել ևս պետք է հասարակական սեփականությունը հայտարարենք սրբազան և անձեռնմխելի, վորպեսզի հենց դրանով ամրապնդենք տնտեսության նոր, սոցիալիստական ձևերը արտադրության և առևտրի բոլոր ասպարեզներում»:

Ահա թե ինչու ընկ. Ստալինի նախաձեռնությամբ ընդունված 1932 թվի ոգոստոսի 7-ի դեկրետը խորին սկզբունքային նշանակություն ունի: Ջարդված, բայց դեռ ևս վերջնականապես չջախջախված դասակարգային թշնամու մնացորդները հրաշալի կերպով հասկանում են հասարակական սեփականության՝ պրոլետարիատի համար ունեցած ահագին նշանակությունը և աշխատում են այն խախտել, այդ նպատակի համար ոգտագործելով հենց աշխատավորների հետամնաց տարրերին, վորոնց գիտակտանձնապես ոգտագործելով, ինչպես մատնանշել է ընկ. Ստալինը, «կոլտնտեսականների — յերեկվա մենատնտեսների, իսկ այսօրվա կոլտնտեսության անդամների — մասնավոր սեփականության սովորույթներն ու մնացորդները»:

Իսկ ինչպե՞ս է մեզ մոտ, Ադրբեջանում իրագործվել սոցիալիստական սեփականության պահպանման համար մղվող պայքարը: Ի՞նչ արդյունք է տվել ոգոստոսի 7-ի որենքի մեզնում կիրառումը:

Ընտրությամբ կատարված հետազոտությունից յերևում է, ցության մեջ դեռևս ուժեղ են կապիտալիզմի մնացորդները, վոր հափշտակման հիմնական ոբյեկտները մեզ մոտ կոլտնտեսությունները ու կոոպերատիվ կազմակերպություններն են: Այսպես՝ դատական 100 ուսումնասիրված գործերն ըստ իրենց ոբյեկտների հետևյալ կերպով են բաժանվում — կոլտնտեսություններ — 45, խորհտնտեսություններ — 4, ՄՏԿ — 2, կոոպերատիվներ — 37, հիմնարկներ և ձեռնարկություններ—22, այլ կազմակերպություններ — 1: Այսպիսով 100 ուսումնասիրված ոբյեկտներից 82-ը մեր կոլտնտեսությունները յեվ կոոպերատիվ կազմակերպություններն են:

Ոգոստոսի 7-ի որենքի համաձայն պատասխանատվության յենթարկվածների թվում — 25,5 տոկոսը կոլտնտեսականներ և մենատնտեսներ են և 20 տոկոսը կուլակներ, առևտրականներ և անորոշ զբաղմունքի մարդիկ: Վերջիններիս մեծ տոկոսը պարզ ցույց է տալիս դասակարգային թշնամու ղեկավար ու ակտիվ դերը՝ հասարակական սեփականության խախտման մեջ: Բայց և ձևականորեն նշանակված բանվոր, կոլտնտեսական ու ծառայող անձերի մեջ մեծ քանակությամբ «նախկին մարդիկ» կան:

Պետք է ասել, վոր մեր դատական և դատախազական մարմինները հաճախ վոչ բավարար մանրազննությամբ են բաց անում հասարակական սեփականության հափշտակիչների դասակարգային դեմքը, բավականաչափ ուշադրությամբ չեն շոշափում նրանց կապը կուլակների, դասակարգայնորեն թշնամի տարրերի հետ, յերբեմն սահմանափակվելով մեղադրյալին ձեվականորեն այս կամ այն սոցիալիստական խմբի մեջ դասելով:

Այսպես, № 671 գործով մեղադրյալը դատավճռում կոչված է ծառայող, այնինչ 1924 թվից մինչեվ 1930 թիվը նա ամբողջ ժամանակ զբաղվել է առևտրով: № 79/33 գործով մեղադրյալը կոչված է ծառայող, այնինչ անցյալում զբաղվել է մանուֆակտուրայի խոշոր առևտրով և այլն: Պատասխանատվության յենթարկվածների թվում քիչ չեն կոոպերացիայի աշխատողները, կոլտնտեսությունների հաշվետարները, պահապանները և ձիապանները:

Պետք է ասել, վոր մեր սարքին կոոպերատիվ ապարատը, մանավանդ գյուղական շրջաններում, չնայած նրա զտման համար մեր ձեռք առած մի շարք միջոցառումներին, դեռևս խիստ աղտոտված է:

Կոնկրետ օրինակները ցույց են տալիս, վոր հաճախ վորպես խանութի վարիչ, վաճառող, հաշվետար աշխատում են նախկին մարդիկ — քյոխվաներ, բեկեր, պրիստավներ և այլն: Այդպիսի կոոպերատիվներում վատնումներն ու չարաշահությունները խարխլում են ռայոնական ամբողջ կոոպերատիվ բաժանմունքները և աշխատավորների վստահությունը դեպի նրանց խախտում են: Այսպես՝ Ազերիթտիֆակի Աղդամի բաժանմունքի նախագահ — Մոլլա Գուսամովը իր հանցակից թալանչիական գործունեության մասնակից է արել բաժինների վարիչներին, հաշվապահին և առանձին կետերի վարիչներին: Միությանը 100 հազար ռուբլուց ավելի վնաս է հասցրել: Արտեմ Դովլյակովը, վոր բազմիցս դատվել է կոոպերատիվ կազմակերպություններում կատարած վատնումների համար, նորից ընդունվել է Բաքկոոպերացիայում և № 322 խանութից գողացել 64.483 ռուբլու ապրանք, № 129 խանութից — 1649 ռուբլու, № 75 խանութից — 2085 ռուբլու և «Վտուզովեց» փակ բանկոոպից — 11,267 ռուբլու (դատապարտված է սոցիալիստական պաշտպանության գերագույն պատժի):

Դրա կապակցությամբ անհրաժեշտ է մատնանշել, վոր «հասարակական սեփականությունը գողանալու և հափշտակելու փաստերին քաղքենիական բարեհոգի վերաբերմունք ցույց տալու պրակտիկան», — վորի մասին խոսել է ընկ. Ստալինը հունվարյան պլենումում, — տեղի ունի նաև մեզ մոտ — Ադրբեջանում, մեր անտեսական և կոոպերատիվ կազմակերպությունների մի քանի ղեկավարների կողմից:

Կարելի յեր մի ամբողջ շարք փաստեր բերել՝ այդ բանը հաստատող: Ցես կսահմանափակվեմ մի չափազանց բնորոշ գործով

—Ազտորգի № 90 կետի նախկին վարիչ Աշումովի գործով: Համաձայն հաշվապահության 1932 թվի մայիսին տված տեղեկանքի՝ Աշումովին պակասում եր 511 ռուբ., յերկրորդ տեղեկանքով պակասում եր 884 ռուբլու, ըստ վորում հաղորդվում եր, վոր դրանից վճարված է 840 ռուբլին, յերրորդ տեղեկանքում «յերրորդ թիվ» — 131 ռ. վերջապես, չորրորդ տեղեկանքում նույն հաշվապահության մեջ Աշումովի պակասը հաշվում եր 129 ռուբլի, վորն իբր թե լրիվին մուծված է: Միևնույն ժամանակ ինքը մեղադրյալը տեղեկանք է ներկայացրել, վոր վճարել է 574 ռուբլի:

Այդպիսով, մի տարվա ընթացքում հանելուկ է մնացել Աշումովի պակասորդի գումարը: Ինքն՝ Աշումովն առաջ դատվել է Կաստպո-ի ապրանքները գողանալու համար, բայց քննիչը չի կարողացել հետաքննությունն սկսել, վորովհետեվ Ազտորգի առանձին սեղանը չի իմացել Աշումովի հասցեն: Այնինչ դուրս է յեկել, վոր Աշումովը նորից աշխատում է Ազտորգի մի խանութում, ապա Զըլխի № 151 կետի վարիչ, վորտեղ նրան դարձյալ պակասել է 16 հազար ռուբլի:

Ի՞նչ են վկայում այս փաստերը: Այն, վոր մեր կազմակերպությունների մի շարք ղեկավարներ դեռ ևս չեն հասկացել հասարակական սեփականության ամրապնդման համար մղվող պայքարի ամբողջ նշանակությունը, դեռ ևս այդ կողմից բոլշևիկյան աշխատանք չեն ծավալել: Այնինչ պարզ է, վոր սոցիալիստական սեփականության պահպանման աշխատանքը միայն այն չէ, վորպեսզի նրա խախտողներին պատժենք, հանցանքը կատարելուց հետո: Վոչ պակաս չափով, յեթե վոչ ավելի, կայանում է նրանում, վորպեսզի այնպիսի պայմաններ ստեղծենք, վորոնք հասարակական սեփականությունը հափշտակումից ապահովում են:

Այդ թերությունները մենք պետք է հենց մոտ ժամանակներս ուղղենք:

Հեղափոխության օրինականության սուր ծայրը գլխավորապես ուղղելով գողերի և վնասարարների, հասարակական սեփականության թալանողների դեմ, ամենևին չեն վերանում հեղափոխական օրինականության խնդիրները՝ բանվորների և կոլտնտեսականների և ազնիվ աշխատավոր միանձնատնտեսների իրավունքները պաշտպանելու նկատմամբ, այլ ընդհակառակը, պետք է զուգակցվի այս վերջինիս հետ: Անկասկած է, վոր այդ կողմից մենք ունենք մի շարք նվաճումներ, այդ թվում նաև գյուղում:

Սակայն մի շարք փաստեր վկայում են այն մասին, վոր այստեղ ևս քիչ չեն խոշորագույն թերությունները: Մենք պարտավոր ենք ուժեղացնել մեր աշխատանքը բանվորների և կոլտնտեսականների իրավունքը պաշտպանելու համար՝ մեր մի քանի հիմնարկների ու կազմակերպությունների մեջ յեղած առանձին բյուրոկրատների և «զմայլված ադմինիստրատորների» կողմից դեռևս տեղի ունեցող հարձակումներից:

Հեղափոխական որինականության խախտման տեսակներից մեկն այդ կողմից հանդիսանում է մեր մի քանի աշխատողների կամայականությունն ու վարչարարումը և «ադմինիստրատիվ զմայլանքը»: Պատասխանատվության զգացմունքի բթացումը, ինչ էլ վոր լինի իր «հզորությունը» ցույց տալու ցանկությունը, յերբեմն ընդունում է չափազանց այլանդակ ձև և վերջին հաշվով ձեռնտու յե դասակարգային թշնամուն: Հեղափոխական որինականության խախտման կոպիտ, այլանդակ ձևերի համար (գյուղացիներին ծեծելու, ապորինի ձերբակալությունների յեվ խուզարկությունների առանձին փաստեր), դատական պատասխանատվության են յենթարկված Կարաբոգորի (Գյոդչայ), Բագիմլու (Քյուրդամիր), Դեկինի (Գյոդչայ) և Ջարանու (Շամախի) գյուղխորհուրդների նախագահները: Սալյանում ապորինի ձերբակալման մեջ 10 օր պահել են Բաքվի յերեք նավթագործների: Տեղական կազմակերպությունների ճնշման տակ Նուխու շրջանում պատասխանատվության է յենթարկվել մի կոլտնտեսության ամբողջ կազմը — 87 հոգի — պլանը չկատարելու համար:

Իշխանության սահմաններից անցնելը, վոր սահմանակցվում է հեղափոխական որինականության կոպիտ խախտման հետ, նկատվում է նաև շրջանային խորհուրդների մի քանի աշխատողների կողմից, մասնավորապես բնակարանային հարցի նկատմամբ: Ջերժինսկու, Վորոշիլովի, Հոկտեմբերյան և այլ շրջաններում, մի շարք դեպքեր են արձանագրված, յերբ ապորինի կերպով բնակցվել են այն աշխատավորների բնակարանները, վորոնք ժամանակավորապես գնացել են բուժվելու կամ արձակուրդ: Հոկտեմբերյան խորհրդի աշխատակից Վարլամովը կարողացել է քնածների բնակարանի իրերը դուրս հանել և բնակարանը գրավել: Իրերը տարվել են ներքնատուն, մասամբ թալանվել և փչացվել, իսկ բնակարանը տրվել է մի ուրիշ մարդու:

IX. ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

Ադրբեջանի ինդուստրացման հաջողությունները գյուղական տնտեսության սոցիալիստական վերակառուցումն ու վերելքը բանվոր դասակարգի և գյուղի աշխատավորների նյութական բարեկեցության խիստ բարձրացումն է ապահովել: Կատարյալ վերացում գործազրկության, ԱՍԽՀ պրոլետարիատի ահագին աճը, — 1930 թվի 271 հազարից 1933 թվի հոկտեմբերին հասել է 365 հազարի, արտադրության մեջ բանվորների ընտանիքների անդամների ներգրավումը, վորն ընտանիքի աշխատող անդամների թիվն ավելացրել է, — այս բոլորը բանվոր դասակարգի բարեկեցության աճման ահագին գործոն են հանդիսացել:

ԱՍԽՀ արդյունաբերության բանվորների աշխատավարձը 1928 թվից մինչև 1931 թիվն աճել է 70 տոկոս:

Անշեղ աճում է բանվորների ու ծառայողների սոցիալիստական ապահովագրությամբ ապահովումը: ԱՍԽՀ սոցապի բյուջեն (յերկաթուղայինից բացի), 1931 թ. 48,9 միլիոն ռուբլուց աճել, 1933 թվին 73,2 միլիոն ռուբլու յե հասել:

Միջին թվով մի ապահովագրվածի վրա տարեկան ծախսվում է 165 ռուբլի, բնամթերացած ձևի ոգնության համար, վորը Ադրսոցապի բոլոր ծախսերի 50 տոկոսն է կազմում (նավթագործների վերաբերմամբ՝ 150 ռուբլի):

1. ԱՊՐԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՃՈՒՄԸ

Ապրանքային մասսայի աճումը յերկրում, ապրանքաշրջանառության ընդլայնումը, զգալի տեղաշարժը ապրանք մատակարարող ցանցի աշխատանքում, բանվորական մատակարարման գործն անմիջական տնտեսորգանների ձեռքը տալը (Բանմատվարչություններ կազմակերպելը) պայմանավորվել են քաղաքի յեվ գյուղի ապրանքային մատակարարման զգալի բարձրացումը, բանվորների և գյուղացիների փաստական սպառման աճի զգալի բարձրացումը:

Յեթե 1927–28 թվին ԱՍԽՀ ընդհանուր ապրանքաշրջանառությունը 306,7 միլիոն ռուբլի յե կազմել, ապա 1932 թվին հասել է 741,5 միլիոն ռուբլու, կամ 140 տոկոսի, իսկ 1933 թիվը մանրածախքի ապրանքաշրջանառության գրեթե 20 տոկոս նոր աճ է տվել՝ նախընթաց տարվա դիմաց:

· ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԱՃՈՒՄԸ

Լայն աշխատավոր մասսաների բարեկեցությունը և կենցաղը բարելավելու գործում մեծ լծակ է հանդիսացել հասարակական սննդի զարգացումը:

Միմիայն Բաքվում հասարակական սննդի ցանցը 2128 թվին յեղած 79 կետից աճել, 1932 թվին հասել է 586-ի: Շահագործման են մտցրված յերեք խոշորագույն ֆաբրիկ – խոհանոց: Հասարակական սննդի շրջանառությունը միմիայն Սպառ. ընկերության Բաքվի Միության գծով առաջին հնգամյակում աճել է ավելի քան 20 անգամ:

Ադրբեջանի գյուղական տնտեսության վերելքը այդ տնտեսության արմատական և սոցիալ – տնտեսական վերակառուցման հիման վրա,, և 1933 թվի գյուղատնտեսական տարվա հաջող ավարտումն Ադրբեջանում կոլտնտեսային գյուղացիության բարեկեցության հսկայական վերելքին է հանգել:

1933 թվի բերքը բաժանելու հանրագումարի մասին յեղած նյութերը կոլտնտեսականների յեկամուտների զգալիորեն աճումըն են յերևան հանել, նախընթաց տարիների համեմատու-

թյամբ: 1933 թվի մի աշխորին 5–10 կիլոգրամ հացահատիկ և նույնքան էլ անասունների կեր ե ընկնում (իսկ մի շարք դեպքերում 15–20 կիլոգրամ հացահատիկ): Յեթե հացահատիկի վրա ավելացնենք կոլտնտեսականների մյուս յեկամուտները, — ցորենը բամբակի համար, բանջարաբուծության և անասնաբուծության տված արտադրանքը, կոլտնտեսային առևտրի յեկամուտները և այլն, ապա միանգամայն անվիճելի յե դառնում այն յեզրակացությունը, վոր այժմ կոլտնտեսականների յեկամուտներն անհամեմատելի յեն մենատնտեսների յեկամուտների հետ և շատ ավելի յե, քան անցյալ տարիները կոլտնտեսականների ստացած յեկամուտը: Դրանով մի ահագին քայլ ե արված՝ իրագործելու ընկ. Ստալինի — «բոլոր կոլտնտեսականներին ունևոր դարձնել» — լոզունգը:

Առանձին նշանակություն ե ստանում գյուղում 1933 թ. ապրանքաշրջանառության ծավալումը: Մանրածախ ապրանքաշրջանառությունը գյուղում 16 տոկոս աճել ե ավել անցյալ տարվա դիմաց: Գյուղում առևտրական ցանցի նշանավոր չափերով ծավալելը հնարավորություն ե տվել մատակարարումն զգալի կերպով մոտեցնել առանձին գյուղերին ու կոլտնտեսություններին, ապահովելու ապրանքային ֆոնդերն ավելի լրիվ հասցնելը կոլտնտեսականներին ու աշխատավոր մենատնտեսներին:

Գյուղի մատակարարման գործում հիմնական տեղ ե բռնում բամբակային շրջանների մատակարարումը: Այստեղ պլանային ապրանքները բամբակային շրջաններին հասցնելու հետևյալ դինամիկան ունենք. — 1930 թվին — 14 միլիոն ռ., 1931 թվին — 24,9 միլիոն, 1932 թվին — 29,5 միլիոն ռուբ. և 1933 թվին — 34 միլիոն ռուբ.:

Բամբակարույծ կոլտնտեսականների և աշխատավոր մենատնտեսների մատակարարման աճը բնորոշվում ե հետևյալ թվյալներով. բամբակարույծները պետությանը հանձնած յուրաքանչյուր տոնն հնդավոր բամբակի համար ստացել են. —

Տարի	Արդյունաբ. ապրանք	Շաքար	Թեյ
1930	111 ռուբ.	8 կիլո	435 գրամ
1933	270 ռուբ.	18 կիլո	965 գրամ

Յուրաքանչյուր բամբակարույծ մի տնտեսության համար 1933 թվին շատ ավելի ապրանք ե ստացել, քան 1931 և 1932 թվերին

	1931 թ.	1932 թ.	1933 թ.
Չթեղեն	80 մետր	90 մետր	110 մետր
Կոշիկ	2 զույգ	2½ զույգ	3½ զույգ
Գլխի շալեր	11 ռ. 10 կ.	18 ռ. 45 կ.	20 ռ. 65 կ.
Կարածիրեր	19 ռ. 80 կ.	23 ռ. 90 կ.	30 ռ. 35 կ.
Ծխախոտ	27 տուփ	22 տուփ	37 տուփ

Ապրանքաշրջանառության ծավալման և բանվորների ու գյուղի աշխատավորների մատակարարման գործի բարելավման ասպարեզում ունեցած անվիճելի նվաճումների հետ միասին, անհրաժեշտ ե ապրանքը տեղ հասցնող ցանցի և աշխատանքի մի շարք խոշորագույն թերությունները շեշտել:

Առևտուր անող կազմակերպությունների աշխատանքի թերություններն առաջին հերթին ապրանքների վորակի ու ասորտիմենտի հարցերին են վերաբերում:

Մեր առևտրական օրգանները չափազանց թույլ են ուսումնասիրում սպառողի պահանջները, մեքենայորեն են բաժանում ապրանքային մասսաները և այլն:

Մեր առևտրական կազմակերպությունների, առանձնապես կոոպերացիայի, մյուս թերությունն ե՝ ինքնամթերումների և ինքնադնումների չափազանց թույլ զարգացումը: Չափազանց դանդաղ ե առաջանում առևտրական, կոոպերատիվային ու մատակարարման սիստեմում սեփական պարենային բազա ստեղծելու գործը: Գրեթե բոլոր կազմակերպությունները չեն կատարում ապակենտրոնացրած մթերումների պլանը: Դա բխում ե առևտրական և կոոպերատիվային կազմակերպությունների մի ամբողջ շարք օղակներում խնամառու լինելու ձգտումները, սեփական պարենային բազա ստեղծելու համար բոլշևիկորեն պայքարել չկարողանալն ու չցանկանալը:

Միանգամայն անբավարար ե կադրերի դրությունն առևտրական և մատակարարման կազմակերպություններում: Մենք այստեղ ունեցել ենք մեծ հոսունություն, աղտոտվածություն դասակարգային խորթ տարրերով, կուսակցական – կոմյերիտական կորիզի թուլություն՝ Սպառ. ընկ. Բազմիությունում կուսակցականները կազմում են 9 տոկոս, կոմյերիտականները — 50 տոկոս, Ազնեվթի բանմատակարչում՝ կուսակցականները 10 տոկոս, կոմյերիտականները — 5,5 տոկոս, Ազտորգում՝ կուսակցականները —14 տոկոս, կոմյերիտականները — 10 տոկոս:

Միանգամայն անբավարար ե առաջանում թրքական կադրեր աճեցնելու գործը (Սպառ. ընկ. Բազմիությունում — 21 տոկոս, Ազնեվթի բանմատակարչում — 13 տոկոս, Ազտորգում — 39 տոկոս և այլն): Կանայք, մանավանդ թրքուհիները, թույլ են առևտրական ապարատի մեջ քաշված:

Առևտուր անող, կոոպերատիվային և մատակարարողական կազմակերպությունների հիմնական խնդիրն ե հանդիսանում վճռականորեն ուժեղացնել պայքարն ապրանքաշրջանառության ընդարձակման, քաղաքի և գյուղի աշխատավորների մատակարարման գործի դրվածքը բարելավելու համար: Մենք պետք ե ապահովենք կուսակցության և ընկ. Ստալինի՝ հնգամյակի վերջերին աշխատավորների սպառումը 2–3 անգամ ավելացնելու մասին տված հրահանգի իրագործումը:

3. ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Սոցիալիստական շինարարության հետագա հաջողության, աշխատավորների նյութական — կենցաղային պայմանների, կենցաղի սոցիալիստական վերակառուցման համար մղվող պայքարում՝ քաղաքային տնտեսության հարցերը խոշորագույն տնտեսական — քաղաքական նշանակություն են ստանում:

Համկոմկուսի (բ) Կենտկոմի հունիսի պլենումը կուսակցական, խորհրդային և տնտեսական կազմակերպությունների առաջ մարտական խնդիր է դրել. —

« Շուտափույթ կերպով վերացնել ընդհանուր զարգացումից քաղաքային տնտեսության հետ մնալն ու վճռական բեկում մտցնել նրա զարգացման տեմպերում» :

Խորհրդային իշխանության տարիների ընթացքում ահագին աշխատանք է կատարված քաղաքային տնտեսության վերակառուցման ասպարեզում:

Ի՞նչ է ներկայացնում իրենից Ադրբեջանի կոմունալ տնտեսությունը՝ մինչհեղափոխական ժամանակաշրջանում:

Բաքվի, այդ խոշորագույն արդյունաբերական կենտրոնի պրոլետարիատին ծանր ժառանգություն է մնացել քաղաքային տնտեսության ասպարեզում:

Ավելի վատթար դրության մեջ էին Ադրբեջանի մյուս քաղաքները: Քաղաքներից վոչ մեկը չի ունեցել ջրմուղ, կոյուղի, փոքր ինչ կարգին բաղնիս, ելեկտրոկայան և այլն, չխոսելով դեռ քաղաքային բարեկարգության մյուս տարրական տեսակների մասին: Ադրբեջանի, հարթավայրերի բամբակային շրջաններում գտնվող քաղաքներն բառ եյության գյուղեր են յեղել:

Առանձին քաղաքներում յեղած կիսատնայնագործական ասիական տիպի կոմունալ ձեռնարկություններն իրենցով վոչ մի արժեք չեն ներկայացրել (քյահրիզային «ջրմուղներ», ասիական բաղնիսներ, քարվանսարաներ և այլն): Խոշորագույն քաղաքներ — Գյանջան, Նուխին, Նախիջևանը ջուր ստանում էին քյահրիզներից, վորոնք վարակիչ հիվանդություններ էին տարածում և քաղաքի հակասանիտարական դրությանը նպաստում:

Բուրժուական — կալվածատիրական տիրապետությունը լիկվիդացիայի յենթակող պրոլետարական հեղափոխությունն առողջացրել է քաղաքային կյանքը, քաղաքային տնտեսությունը բանվորական մասսաներին լրացուցիչ կերպով շահագործելու միջոցներից՝ դարձնելով նրանց նյութական-կուլտուրական և կենցաղային կարիքներին սպասարկող կազմակերպություն: Խորհրդային իշխանության տարիների ընթացքում և մանավանդ առաջին հնգամյակի ժամանակաշրջանում, Ադրբեջանի քաղաքների տնտեսության մեջ հսկայական տեղաշարժեր է կատարվել, վորոնք կատարելապես փոխել են այդ քաղաքների դեմքը:

Բաքուն բնական հարստությունների հափշտակողականորեն շահագործելու տիպիկ կենտրոնից, ինչպես վոր նրան թողել են նավթի մագնատները և ցարական կոլոնիզատորները, որինակելի սոցիալիստական քաղաքի յե վերածվում: Բաքվի կոմունալ տնտեսության բյուջեյի աճումը ցայտուն կերպով արտացոլում է կոմունալ և բնակարանային շինարարության ու բարեկարգման զարգացման ընդհանուր տեմպերը: Այդ աճը վորոշվում է հետևյալ թվերով. կոմունալ տնտեսության համար արված ծախսը մի բնակչի նկատմամբ աճել է՝ 1913 *թ.* 1 *ռ.* 50 *կ. և* 1923–24 *թ.* 12 *ռ.* 40 *կ. մինչև* 113 *ռ.* 1933 *թ.:*

Վերջին 10 *տարում Բաքվում մոտ* 500 *հազար քառակուսի մետր բնակտարածություն է կառուցված: Դրա հետևանքով՝ նոր կառուցված բնակտարածությունների բնակարանային ֆոնդը Բաքվի ամբողջ հին բնակֆոնդի մոտ մի քառորդն է կազմում:*

Վորոշ նվաճումներ ունենք Ադրբեջանի շրջաններում քաղաքային տնտեսության վերակառուցման ասպարեզում: Կառուցված է Գյանջայի տրամվայի առաջին հերթը: Ավարտված և շահագործման են տրված Սալյանի, Խաչմազի, Բելոկանու ջրմուղները: Մինչև Նախիջևան, Շամախի, Շուշի, Մաղրասա, Լենքորան ջրմուղներ անցկացնելը՝ շահագործման են տրված 14 *նոր կառուցված կոմունալ ելեքտրակայաններ, վերակառուցված և ընդլայնված են Լենքորանի, Ղուբայի, Աղդամի ելեքտրակայանները, զգալիորեն աճել է մյուս կոմունալ ձեռնարկությունների — բաղնիսների, հյուրանոցների քանակությունը և այլն:*

Այժմյա խորհրդային Գյանջան տեսնողը չի իմանա, թե դա առաջվա խան-բեկական Յելիզավետպոլն է: Անճանաչելի դառնալու չափ փոխված է դեմքը հին Նախիջևանի, վորտեղ միայն վերջին 3 *տարվա ընթացքում ներդրված է* 10 *միլիոն ռուբլուց ավելի:*

Այդ բոլոր անվիճելի նվաճումներով հանդերձ, այնուամենայնիվ պետք է ամենավճռական կերպով շեշտել, վոր մեր քաղաքների բարեկեցությունը չափազանց հետ է մնում սոցիալիստական շինարարության ներկա ետապի պահանջներից:

Մենք ահագին միջոցներ ենք ներդրել շրջանների կոմունալ շինարարության մեջ: Սակայն այդ կապիտալներդրումների եֆեկտավորությունը զգալիորեն քիչ է նրանից, ինչ կարելի յեր ձեռք բերել մեր կոմունժողկոմատի և շրջանների կոմունալ ձեռնարկությունների լավագույն աշխատանքի դեպքում:

Նոր ջրմուղներ են շինված Աղդամ, Ղազախ, Նուխի, Սալյան, Ստեփանակերտ: Սակայն յեթե իրերի սեփական դրությունը նայենք, ապա բնակչությանը ջուր մատակարարելու ներկա դրությունը պետք է միանգամայն անբավարար համարել: Քիչ բացառությամբ՝ շրջաններում գոյություն ունեցող ջրմուղների մեծ մասը ջրմուղներ չեն, այդ բառի իսկական իմաստով:

Մեր քաղաքների բնակչությունը շատ դեպքում ասիական տիպի քյահրիզների ջրից է ոգտվում, լավագույն դեպքում՝ մոտիկ աղբյուրներից, գետերից կամ ջրհորներից:

Մի այնպիսի քաղաք, ինչպիսին Գյանջան է, վոր Բաքվից հետո՝ Ադրբեջանի ինդուստրիալ կենտրոնն է, մինչև այժմ ջրմուղ չունի և ոգտվում է բազմաթիվ կեղտոտված քյահրիզներից:

Կուլտուրական կյանքի համար մղվող պայքարում առանձին նշանակություն ունի բանվորների կենցաղի սանիտարական-առողջապահական պայմանների առողջացումն ու բարելավումը: Սանիտարական - առողջապահական միջոցառումների ընդհանուր կոմպլեքսում, ջրմուղների հետ միասին, ամենալուրջ տեղ պետք է հատկացվի բաղնիքներին: Չնայած, վոր խորհրդայնացման տարիներում զգալիորեն աճել է բաղնիքների քանակն ու ավելի շատ մարդ բաց թողնելու ընդունակությունը, այնուամենայնիվ, յեղածը բոլորովին չի բավարարում այսօրվա պահանջին:

4. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Վոչ մի կասկած, վոր առողջապահության ասպարեզում մենք հսկայական նվաճումներ ունենք: Բավական է ասել, վոր քիչ շրջանային կենտրոններ են մնացել, վորտեղ մենք այժմ հիվանդանոց, ամբուլատորիա չունենանք: Նրանք բոլորը միայն խորհրդային իշխանության ժամանակ են շինված:

Բավական է ասել, վոր միմիայն մալարիայի դեմ պայքար մղելու գործում անցյալ տարի մոտ 7 միլիոն ռուբլի յե ծախսվել, վորպեսզի հասկանալ այն առանձին նշանակությունը, վոր կուսակցությունն ու խորհրդային իշխանությունն են տալիս ժողովրդական առողջապահության գործին:

Բաքվի Կոմիտեի հաշվետվության վերաբերմամբ իմ տված զեկուցման ժամանակ՝ յես խոսել եմ Բաքվի մասին և այժմ դրա վրա կանգ չեմ առնում:

Գյուղին, գլխավորապես սահմանամերձ և բամբակային շրջաններին ցույց տրվող բժշկական ոգնությունն ուժեղացնելու համար, ինչպես ձեզ հայտնի յե, 1933 թվին մենք, Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի ու Ադրժողկոմխորհի վորոշմամբ հարյուրից ավելի բժիշկներ ենք մոբիլիզացիայի յենթարկել ու տեղերն ուղարկել: Կոլտնտեսությունների մեծ մասում դաշտային կետեր են կազմակերպված յեղել բժշկական ոգնություն ցույց տալու համար՝ մշակման, բերքահավաքի և մյուս աշխատանքների ժամանակ: Բայց դա բոլորովին չի նշանակում, թե մենք այսոր չենք կարող համագումարում մեր ուշադրությունը չսրել առողջապահության վրա և ամենասուր կերպով չասել, թե Ադրբեջանի ամենահետամնաց տեղամասերից մեկը — դա առողջապահությունն է, և վոչ թե նրա համար, վոր կուսակցությունը համապատասխան միջոցներ և ուժեր չի հատկացնում, այլ նրա համ-

մար, վոր այդ ժողկոմատում մինչև այսոր էլ աշխատանքի մեթոդները հինն են մնում: Նոր ձևով աշխատելը, ոպերատիվ կերպով աշխատելը, նոր խնդիրների, նոր պայմանների համաձայն աշխատելն ինչպես յերևում է, իր արտացոլումը չի գտնում առողջապահության ասպարեզում, մանավանդ շրջանների սպասարկելու վերաբերմամբ:

Հասարակական աշխատանքն այնպես չի կազմակերպված, ինչպես հարկավոր է, պատշաճ կերպով չի դրված ենտուզիաստների, հարվածային բժիշկների, բժշկական անձնակազմի նախաձեռնությունը խրախուսելու գործը, — նրանց, վորոնք անկեղծորեն ցանկանում են իրենց բոլոր ուժերով ոգնել խորհրդային իշխանությանն ու կուսակցությանը՝ Ադրբեջանի բնակչության բժշկական սպասարկումը բարելավելու գործում, իսկ վոր մենք այդպիսի ենտուզիաստների պակասություն չենք ունեցել, դա անվիճելի յե: Վորպես որինակ, յես կբերեյի պրոֆեսոր Պոպովին, մի մարդ, վորը պատրաստ է իր բոլոր ունեցածը տալու Ադրբեջանի շրջաններում մալարիայի դեմ պայքարը լավագույն կերպով կազմակերպելու ոգտին:

Պրոֆեսոր Տարնոգրադսկին, վորը վերջին ժամանակներս դիմել է Ժողկոմխորհ, մի շարք խիստ հետաքրքիր ու ոգտակար առաջարկություններով, սակայն, դժբախտաբար, նրա բոլոր առաջարկությունները դեմ են առել Առողժողկոմատի ապարատի անշարժությանն ու բյուրոկրատիզմին:

Մի՞թե մշակելու և բերքահավաքի կամպանիաների ժամանակ քիչ կամավոր բրիգադներ են կազմվել բժիշկներից և բժշկական անձնակազմից, գյուղերին ոգնելու համար: Մի՞թե այդպիսի բրիգադներին չեն գլխավորել այնպիսի հին, իրավամբ բժշկության վաստակավոր գործիչներն ինչպիսին է Ալեքսանդր Իսիդորովիչ Ոկինշևիչն ու մյուսները: Մի՞թե շրջաններում ու գյուղերում աշխատողների շարքերում քիչ կան բժիշկներ և բժշկական աշխատողներ, վորոնք պատրաստ են ամեն տեսակ զոհաբերության, առողջապահական գործը կազմակերպելու համար:

Ահա ձեզ յերկու-յերեք որինակ հարյուրավոր այդպիսի փաստերից. —

Բժիշկ Բելյանինով —Դարվիշլարի Կարմիր կիսալուսնի մալարիական կետի վարիչ, հին, վորակյալ բժիշկ, սպասարկում է 38 կոլտնտեսություն, մեծ հասարակական գործիչ, Կարմիր կիսալուսնի մի շարք կոլտնտեսական բջիջների կազմակերպիչ և ղեկավար, կամավոր կերպով Նորաշենի շրջանն է գնացել, բամբակաքաղի կամպանիային սպասարկելու: Չնայած աշխատանքի ծանր պայմաններին (քնում է արկղների վրա, գյուղերը ման է գալիս վոտքով, տեղական կազմակերպությունները նրան նույնիսկ կերոսինկա չեն տվել կերակուր յեփելու համար)—նա մեծ աշխատանք է տանում մի շարք գյուղերում, կանանց հետ զրույցներ սարքում, մանկամսուրներ կազմակերպում և այլն:

Բժիշկ Ալլահվերդով — *յերիտասարդ բժիշկ, կուսակցության անդամ, Թոքախտով հիվանդ, բայց և այնպես ամեն ժամանակ, գիշերը թե ցերեկը, առանց հրաժարվելու՝ բժշկական օգնություն է հասցնում:*

Այդպիսի որինակներ քիչ չեն և ուրիշ շրջաններում, բայց ցավը նրանում է, վոր առողջապահության ճակատում հարվածայինների աշխատանքը չի ամրապնդվում՝ շրջանային կազմակերպությունների կողմից, առողջապահության գործին համապատասխան ուշադրությամբ, նա չի ամրապնդվում և Առժողկոմատի կողմից տրվող կոնկրետ գործնական, իսկական բոլշևիկյան ղեկավարությամբ:

Ամբողջ գործը, ինչպես ասացի, նրանում է, վոր Առողջժողկոմատի ապարատը (յես նկատի չունեմ իրեն, Առողջժողկոմ ընկ. Կադրլուն, *վորը հնարավորության չափ ցանկանում է անել այն բոլորն, ինչ կարող է) պահանջում է արմատական զտում և առողջացում:*

Մենք վերջերս Առողջժողկոմի տեղակալ ենք առաջադրել ընկ. Պանցխավային, *վորն, ի դեպ, կարճ ժամանակում մեծ աշխատանք է կատարել ժողկոմատի և նրա առանձին հիմնարկությունների աշխատանքում աշխուժություն մտցնելու ուղղությամբ: Սակայն վոչ ընկ. Կադրլին և վոչ էլ ընկ. Պանցխավան չեն կարող փշրել այն անշարժությունը, բյուրոկրատիզմը, — պահպանողականությունը, վոր ամուր բուն է դրել Առողջժողկոմատի սիստեմում, յեթե այդ ժողկոմատի վերակառուցման գործին չքաշվի ամբողջ կուսակցական և խորհրդային հասարակայնությունը: Մեր շրջանային ղեկավարները, մանավանդ շրջկոմների ու շրջգործկոմների ղեկավարները, պետք է առանձին ուշադրություն դարձնեն շրջանի առողջապահական գործին և առաջին հերթին՝ մալյարային շրջանների և գյուղերի ծանր պայմաններում աշխատող բժիշկների և բժշկական անձնակազմի համար կենցաղային անհրաժեշտ պայմաններ ստեղծելուն:*

Մենք քիչ յերիտասարդ պրոֆեսորներ, յերիտասարդ բժիշկներ չունենք, վորոնք իրավամբ անուն են վաստակել վոչ միայն Ադրբեջանում, այլ և նրա սահմաններից դուրս Թոփչիբաշևը, *յերիտասարդ բժիշկներ՝* Ազիզ Ալիևը, Աբդուլլաբեկովը *և մի շարք ուրիշները:*

Ամբողջ խնդիրն ու ամբողջ հարցը նրանում է, վոր պետք է կարողանալ այդ ուժերը կազմակերպել, նրանց ի մի հավաքել, լայն ճանապարհ բաց անել նոր յերիտասարդ կադրերի առաջ քաշման, նրանց համախմբելով սոցիալիզմ կառուցողներին լավագույն բժշկական սպասարկման խնդիրների շուրջը: Ինչպես յերևում է այդ աշխատանքը մինչև այժմ չկա Առողջժողկոմատի սիստեմում:

X. ԱԶԳԱՅԻՆ-ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ընկ. Ստալինը *կուսակցության 16–րդ համագումարում ասել է՝*

«Պետք է հնարավորություն տալ ազգային կուլտուրաներին զարգանալու ու ծավալվելու, իրենց բոլոր պոտենցիաները հայտնաբերելով, վորպեսզի պայմաններ ստեղծել նրանց միաձուլվելու համար՝ մի ընդհանուր կուլտուրայի մեջ, մի ընդհանուր լեզվով»:

Ադրբեջանի բոլշևիկների կոմունիստական կուսակցությունը, անշեղորեն պայքարելով կուսակցության առաջնորդ ընկ. Ստալինի *այդ ցուցմունքների իրացման համար և վճռականորեն հաղթահարելով դասակարգային թշնամու և նրա ագենտուրայի դիմադրությունը, մեր կուսակցության 16–րդից մինչև 17–րդ համագումարի ժամանակամիջոցում, ձեռք է բերել հսկայական նվաճումներ ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի զարգացման գործում:*

1. ԴՊՐՈՑ

Այս տարի մենք ավարտեցինք ընդհանուր տարրական պարտուսը ԱՍԽՀ շրջանների մեծ մասում, վորն ահագին մեծ նշանակություն ունեցող փաստ է հանդիսանում:

1914 *թվին Ադրբեջանում կար* 942 *տարրական դպրոց, վորտեղ ընդգրկված եր* 62,788 *աշակերտ,* 1919–20 *թ. (մուսավաթականների տիրապետության ժամանակաշրջանում) դպրոցների թիվը պակասել է մինչև* 668–*ի, իսկ սովորողների թիվը մինչև* 48,078 *հոգու:*

1930–31 *թ. թ. մենք ունեյինք* 1685 *տարրական դպրոց, վորոնք ընդգրկում եյին* 242,212 *յերեխաներ, վորոնց կազմում Թուրք յերիտասարդությունը հավասար եր* 143,310 *հոգու, իսկ* 1932–33 *թ. թ.* 2096 *տարրական դպրոցներ, վորոնք ընդգրկում եյին* 372,033 *հոգի:*

1930–31 *թ. թ. մենք ունեյինք* 307 *միջնակարգ դպրոց, վորոնք ընդգրկում եյին* 18,946 *աշակերտներ, վորոնց թվում Թուրք յերիտասարդությունը կազմում եր* 6,395 *հոգի:*

1932–33 *թ. թ.* 802 *միջնակարգ դպրոց, վորոնք ընդգրկում են* 55,691 *հոգի, Թուրքերը կազմում են* 25384 *հոգի: Դպրոցական հասակ ունեցող յերեխաներն ընդգրկված են. — տարրական դպրոցներում՝ պլանի* 93,2 *տոկոսը և միջնակարգ դպրոցներում՝* 80,7 *տոկոսը:*

Անցյալ տարվանից Ադրբեջանում միջնակարգ դպրոցների սիստեմում ստեղծված է նոր ողակ, դպրոց—տասնամյակներ, վորոնց թիվը ներկայումս ավելացել է մինչև 23–*ի:*

Ժողովրդական կրթության թերություններից մեկը հանդիսանում է աղջիկների, հատկապես թրքուհիների և ազգային փոքրամասնության աղջիկների դպրոցների կողմից վոչ լրիվ ընդգրկումը:

1932–33 թ. թ. տարրական դպրոցով ընդգրկված եյին 147,482 աղջիկներ, վոր կազմում եր ընդգրկված յերեխաների ընդհանուր թվի 39,6 տոկոսը:

Աղջիկների ընդգրկման գործում հատկապես հետ են մնում Զուվանդի, Բելոկանի, Դիվիչի, Քելբաջարաի, Մասալլուի, Խաչմազի շրջանները:

Ավելի վատ է դրությունը աղջիկներին միջնակարգ դպրոցներով ընդգրկելու ուղղությամբ: 1932–33 թ. թ. սովորող աղջիկների թիվը հավասար եր բոլոր սովորողների 31,4 տոկոսին: Առանձին շրջաններում այդ տոկոսը ավելի ցածր է: Զուվանդի շրջանում 1932–33 թ. թ. միջնակարգ դպրոցներում վոչ մի աղջիկ չկար:

Մի շարք շրջաններում անհրաժեշտ պայքար չի տարվում կուլակության և հոգևորականության դեմ և բոլոր հետադիմական ու պահպանողական տարրերի դեմ, վորոնք ագիտացիա յեն մղում աղջիկներին դպրոց ուղարկելու դեմ:

Նացիոնալիստական տարրերը շարունակում են իրենց պայքարը մեր դպրոցական շինարարության դեմ:

Տեղի յեն ունեցել մեր դպրոցները խորթ գաղափարախոսության, պան-իսլամիզմի, պան-թյուրքիզմի զինանոցից և մանկավարժներ Խալիլ Ֆիկրեթթիի, Աղախ-բեյլու ու ուրիշների բուրժուական գաղափարները խծկելու փորձեր, մանկավարժներ, վորոնց աշխատությունները տարածված են յեղել ուսուցչության վորոշ մասի մեջ:

Դասակարգային թշնամու այդ մանյովրները մերկացված են Ադրբեջանի կուսկազմակերպության կողմից: Բայց այդ դպրոցական աշխատողներից պահանջում է ուժեղացնել իրենց զգոնությունը մեզ համար խորթ գաղափարախոսությունների նկատմամբ:

Այս տարի մենք Անդրկովկասում առաջինն եյինք, վոր կատարեցինք կուսակցության վորոշումը՝ տարրական և միջնակարգ դպրոցների համար ստաբիլ դասագրքեր ստեղծելու մասին:

Ուսումնական տարվա սկզբին, տարրական դպրոցներն ամբողջ հանրապետության մեջ ապահովված են յեղել բոլոր տեսակի դասագրքերով՝ հիմնական դիսցիպլինաների նկատմամբ: Բնորոշ է, ի միջի այլոց, վոր այն ժամանակ, յերբ մուսավաթիստներն Ադրբեջանում բացի թուրքերից վոչ մի ազգությունների չեյին ճանաչում և այժմ էլ չեն ուզում ճանաչել, խորհրդային Ադրբեջանում ներկա ուսումնական տարում ապահովված է մայրենի լեզվով պարտադիր ընդհանուր կրթության կիրառումը 14 ազգությունների նկատմամբ՝ թուրքերեն, ռուսե-

րեն, հայերեն, վրացերեն, թալիշերեն, թաթերեն, քրդերեն, լեզգիներեն, ավարերեն, ուզբեկերեն, ասորերեն, թաթարերեն, հունարեն և գերմաներեն լեզուներով: Ազգային փոքրամասնությունները բոլոր հնարավորություններն ու պայմաններն ունեն իրենց զարգացման համար:

Ադրկոմկուսի (բ) կենտկոմի բյուրոյի կողմից առանձնացված հանձնաժողովը յերևան է հանել խոշոր խեղաթյուրումներ հայկական դպրոցների նկատմամբ, խեղաթյուրումներ, վորոնք մեծապետական շովինիզմի և գլխավորապես տեղական նացիոնալիզմի գծով են գնում: Լուսժողկոմատի և Բաքլուսբաժնի կողմից բավարար ուշադրություն չի դարձվել հայկական դպրոցներին:

Բաքվում հայ յերեխաների մեծամասնությունը սովորում են ռուսերեն լեզվով: Դա բացատրվում է նրանով, վոր հայ յերիտասարդությունը միջնակարգ դպրոցներն ավարտելուց հետո, հնարավորություն չունի իր կրթությունը շարունակել իր մայրենի լեզվով, մեր ԲՏՈՒՀ-ներում և ԲՈՒՀ-երում հայկական խմբերի բացակայության պատճառով (բացառությամբ Բարձր. Մանկ. ինստիտուտի):

Հայ յերեխաներին, վորոնք ռուսերեն լեզվով են սովորում, վոչ միայն հնարավորություն չի տրվել վերացնել իրենց այբբենական անգրագիտությունը մայրենի լեզվով, այլ մի քանի դպրոցներում դասամիջոցների ժամանակ մինչև իսկ նրանց արգելել են հայերեն խոսել (Բաքվի հինգերորդ դպրոց): Անհրաժեշտ է ամենավճռական կերպով ուղղել այս սխալը, հարվածել շովինիստներին և հայկական դպրոցներին լուրջ ուշադրություն դարձնել:

Լուսժողկոմատի ղեկավարության դրասենյակային բյուրոկրատական մեթոդների շնորհիվ ուսուցիչների մեջ համարյա վոչ մի քաղաքական աշխատանք չի տարվել, ուսուցիչներին իրենց աշխատանքի մեջ կոնկրետ մեթոդական ոգնություն չի ցույց տրվել, անհրաժեշտ հոգատարություն չի յեղել ուսուցիչների նկատմամբ: Ահա թե ինչու Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի վորոշմամբ անցկացվեց Լուսժողկոմատի ղեկավարության վերակազմակերպումն ու ամրապնդումը:

Տարեց տարի աճում է պոլիտեխնիզացիայի նյութական բազան: Աճում է արհեստանոցների և աշխատանքային սենյակների ցանցը: ԱՍԽՀ-ի 33 շրջաններում, առանց Բաքվի, 1932–33 թ. թ. վերջում կար 137 արհեստանոց և 45 աշխատանքային սենյակ: Բաքվում 104 արհեստանոց, 232 աշխատանքային սենյակ: Միայն 1932–33 թ. թ. շրջանային դպրոցներին ուղարկվել է 170,000 ռուբլու արժողությամբ պոլիտեխնիկական սարքավորումներ:

Մեր դպրոցները և սովորող յերիտասարդությունը մեծ հասարակական աշխատանք են կատարում գարնանացանի, բամբակամշակման և բամբակահավաքի կամպանիաների ժամանակ,

յուլս են ընծայում պատի թերթեր, տանում են սովորողների և հարվածայնության հաշվառումը, կոլտնտեսական արտադրության մեջ անմիջական մասնակցություն են ունենում. օրինակ, Շամխորի շրջանի Կարաջամիրլի և Կապանլի գյուղերի դպրոցները, ուսուցումից ազատ ժամանակ, «Ուղարնիկ» կոլտնտեսությանը խոշոր օգնություն են ցույց տվել բամբակի հավաքման գործում:

Մեր դպրոցներում հակակրոնական աշխատանքը պատշաճ բարձրության վրա չի դրված: Անցյալ ուսումնական տարում, ուրաղայի օրերին սովորող յերեխաների կողմից մզկիթ հաճախելու, «սուրբ աղոթքների» գնալու (Գյանջա), աշակերտներին «Զատիկ» և «Նովրուզ բայրամ» տոնելու արձակելու (Աստրախան-Բազար), ուսուցչի գլխավորությամբ կրոնական տոներին մզկիթ հաճախելու (Թաղաքենդ) դեպքեր են յեղել:

Դեռևս չափազանց ուժեղ է Շամխորի շրջանի Գեորգևսկ գյուղում պաստորի ազդեցությունը գերմանական դպրոցում: Պաստորը ստիպում է աշակերտներին պարապմունքների ժամանակ ընդհատել: Դեպքեր են յեղել, յերբ պաստորի առաջարկությամբ մի ամբողջ խմբակ, ուսուցչի գլխավորությամբ դադարեցրել է պարապմունքները և գնացել յեկեղեցի:

2. ՆՅՈՒԹԱԿԱՆ ԲԱԶԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

1933 թվին դպրոցներին հատկացված գումարը 1931 թվի համեմատությամբ համարյա յերկու անգամ ավելացել է և հասել 41,912,500 ռուբլու:

Վատ է դրությունը դպրոցների կահավորման, դասագրքերի և տնտեսական կարիքների համար հատկացրած գումարների յուրացման գործում:

1932 թվին 1,517 հազար ռուբլուց, վորը բյուջեյով նախատեսվել է դպրոցների կահավորման համար, իր նպատակին ծախսվել է միայն 127,000 ռուբլի, այսինքն 8,3 տոկոսը:

Այդ դրությանհետևանքով չատ գյուղական դպրոցներ չունեն ամենատարրական դպրոցական կահավորում՝ նստարաններ, սեղաններ, դասարանական գրատախտակներ, չունեն անհրաժեշտ գրենական պիտույքներ, պահարաններ, աշխարհագրական քարտեզներ, գլոբուսներ և այլն:

Դպրոցները շենքով ապահովելու գործը նույնպես անբարեհաջող վիճակում է գտնվում: Դպրոցներից միայն 33 տոկոսն է տեղավորված հատուկ դպրոցական շենքերում, մնացածները տեղավորված են դպրոցի համար հարմարեցված տներում:

Չնայած նրան, վոր վերջին 3 տարիների ընթացքում շրջաններում կառուցված են 179 դպրոցական շենքեր, շինարարության տեմպերը պետք է անբավարար համարել:

Մինչհեղափոխությունը Ադրբեջանում յեղել է ընդամենը մոտ հարյուր թուրք ուսուցիչ և մեքթեբի 886 մոլլա-դասատուներ:

1932–33 թ. ուսումնական տարվա վերջում տարրական և միջնակարգ դպրոցներում և այլ ուսումնական հիմնարկներում, վորոնք մտնում են ԱՍԽՀ Լուսժողկոմատի սիստեմի մեջ, մենք ունեցել ենք 10,432 ուսուցիչ, վորոնք պատրաստվել են խորհրդային իշխանության ժամանակաշրջանում: Նրանցից բարձրագույն կրթություն ունեն 593-ը, միջնակարգ կրթություն 6772 հոգի, տարրական կրթություն ունեն 2967 հոգի: Ազգային կազմի տեսակետից ուսուցիչներից թուրքեր են 6,678-ը, հայեր—1568-ը, ռուսներ—1,226, լեզգիներ—255, թալիշներ—227, թաթեր— 128, գերմանացի—61, վրացի—46, Վոլգայի թաթարներ — 45, իսկ մնացածները — այլ ազգություններից:

1932–33 ուսում. տարվա ընթացքում լրացուցիչ կերպով բաց են թողնված 2147 հոգի (բարձրագույն կրթությամբ 256-ը, միջնակարգ—549, տարրական կրթությամբ—1342 հոգի):

Բարձրագույն Ման. ինստիտուտում սովորում են 879 թուրքեր, վորոնցից 152-ը թրքուհիներ են: Մանկավարժական տեխնիկումներում սովորում են 3905 հոգի, վորոնցից 760 թրքուհիներ, մանկավարժական բանֆակներում — 1533 հոգի, վորոնցից թրքուհիներ 258 հոգի և կուսխորհրդային դպրոցներում — 995 թուրքեր, վորոնցից 58-ը թրքուհիներ:

Այդ ժամանակաշրջանում ազգային փոքրամասնությունների համար ստեղծված են մանկավարժական տեխնիկումներ՝ Լենքորանում թալիշների համար, Կուսարում լեզգիների համար, աշխատանք է կատարված Զաքաթալաշենում քրդերի համար, Կուբայում թաթերի համար խմբակներ կազմակերպելու:

Ներկայումս Բաքվում գործում են հատուկ կուրսեր ազգային փոքրամասնությունների կադրեր պատրաստելու համար, վորտեղ սովորում են 67 թալիշ, 61 թաթ, 24 ավար, 9 քուրդ:

Չնայած, վոր մանկավարժական ուսումնական հիմնարկները խոշոր աշխատանք են տարել ԽՍՀՄ-ի Կենտգործկոմի 1932 թ. սեպտ. 19-ի վորոշման հիման վրա աշխատանքը վերակառուցելու ուղղությամբ, այնուամենայնիվ, ուսուցիչների պատրաստության վորակը ցածր մակարդակի վրա յե, վոր առանձնապես վերաբերվում է այն բազմահազար ուսուցիչներին, վորոնք միայն դասընթացքային պատրաստություն են ստացել:

Վերջին տարվա ընթացքում վճռականորեն վերակառուցվում է Մանկավարժական ինստիտուտի աշխատանքները:

Ուսուցիչների բացարձակ մեծամասնությունը ակտիվորեն կատարում է իր պարտականությունները, հերոսաբար պայքարելով կուլտուրական հեղափոխության համար և սոցիալիստական շինարարության մյուս ֆրոնտներում: Համարյա բոլոր ուսու-

ցիչները աշխատանք են կատարում այբբենական անգրագիտության վերացման ուղղությամբ, կուլտ արշավի կարգով. մասնակցում են մեր պլանների համար մղվող պայքարին:

Ուսուցչության նյութական — կենցաղային պայմանների բարելավման գործում մի շարք թերություններ կան: Այսպես, մինչև այժմ ուսուցչության աշխատավարձի պարտքեր գոյություն ունեն մի շարք շրջաններում: Տեղին է այստեղ հիշել ԱՍԽՀ ֆինժողկոմատին: Չնայած վոր մատակարարման նորման ավելացել է, բայց փաստորեն բաց թողնվող մթերքները և արդյունաբերական ապրանքները ուսուցիչներին հասցնելու գործը բացարձակապես անբավարար է, (Սամուխ Սալյան) շնորհիվ նրան, վոր շրջանային և գյուղական սպառողական ընկերությունները մի շարք վայրերում ուսուցիչներին հատկացված ֆոնդերը ոգտագործում են ուրիշ կարիքների համար, իսկ Ագեր իթափֆակը և շրջլուսբաժինները այդ յերևույթի դեմ չեն պայքարում:

3. ԱՅԲԲԵՆԱԿԱՆ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՈՒՄԸ

1930–31 թվերին անգրագիտության վերացման կայաններում ընդգրկված եյին 184.045 հոգի. 1932–33 թ. թ. 312.589 հոգի: 1930–32 թ. թ. լիկկայաններում ընդգրկված եյին 62,533 կին, 1932–33 թ.թ. — 136.662:

Այն շրջանների հետ միասին, վորոնք բոլշևիկորեն պայքարում են այբբենական անգրագիտության վերացումը ավարտելու համար և վորոնք ընդգրկել են լիկկայաններում բոլոր անգրագետներին (Զանգելան, Աղդաշ, Քյուրդամիր, Ջեբրայիլ, Զաքաթալա, Կարյագին, Լենքորան, Կուբաթլի և այլն), կան շրջաններ, վորոնք ոպորտունիստորեն թերագնահատում են այդ կարևորագույն խնդիրը (Նուխի, Վարթաշեն, Բելոկանի, Շամխոր, Վերգյադուզ, Լաչին և այլն):

Ադրբեջանում այբբենական անգրագիտության վերացման գործը ավարտելում խոշոր ոգնություն պիտի ցույց տա կոմյերիտական կազմակերպությունը:

Կարո՞ղ են արդյոք մեր կոմյերիտմիությունը, առանձնապես մեր պրոֆմիությունները հպարտանալ իրենց այս ասպարեզում կատարած աշխատանքով: Իհարկե, վոչ:

Անգրագիտության վերացման արշավի ֆինանսավորումը տարեց տարի աճում է:

1931 թվին դրա համար ծախսվել է 1,074 հազար ռուբլի, իսկ 1933 թվին 2.284.000 ռուբլի. աճումն ավելի չէ քան յերկու անգամ:

Ներկայումս Ադրբեջանում գրագիտության տոկոսը հասել է 60,9 տոկոսի՝ 1931 թվի 21 տոկոսի դիմաց:

Վորպեսզի գնահատենք այն հսկա աշխատանքը, վոր կատարված է այս տարիների ընթացքում անգրագիտության վերացման

ասպարեզում, բավական է մատնանշել, վոր գրագիտության տոկոսը մինչև հեղափոխությունը Ադրբեջանում հավասար եր 9,3 տոկոսի:

Յեթե վերցնենք այսպես կոչված «ակտիվ հասակը» (16–ից մինչև 45 տարեկանը գյուղում և 16–ից մինչև 50 տարեկանը քաղաքում) այս տարի գրագիտությունը կազմում է մոտ 78 տոկոս:

4. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

1930–31 թվին յեղել են 903 նախադպրոցական հիմնարկներ, 26.795 յերեխաների ընդգրկումով: 1931–32 թվերին — 1033 հիմնարկ — 43.268 յերեխաների ընդգրկումով, 1932–33 թվերին — 1.500 հիմնարկ — 67,533 յերեխաների ընդգրկումով: Այսպիսով յերեք տարվա ընթացքում նախադպրոցական հիմնարկների կոնտինգենտն աճել է համարյա թե յերեք անգամ:

Նախադպրոցական հիմնարկները կադրերով ապահովելու համար կոլտնտեսուհիներից 1932 թվին պատրաստվել են 491 հոգի, իսկ 1933 թվին 889 հոգի:

Նախադպրոցական դաստիարակության թույլ կողմը հանդիսանում է վորակյալ կադրերի պակասությունը: Մանկավարժական տեխնիկումներին կից նախադպրոցական սեկտորները իրենց չեն արդարացնում: Նախադպրոցական հիմնարկների աշխատանքների թույլ կողմը հանդիսանում է և սննդի հարցը: Իրենք կոլտնտեսականները մեծ ակտիվություն են հայտնաբերում այդ գործի կազմակերպման խնդրում, բայց Հողժողկոմատի ու Լուսժողկոմատի որգանները չեն գլխավորել այդ ակտիվությունը:

Ժողովրդական կրթության որգանների խնդիրը հանդիսանում է նախադպրոցական հիմնարկների մաքսիմալ զարգացումը, իսկ ամենագլխավորը՝ նրանց աշխատանքի վորակի լավացումը:

Մեզ անհրաժեշտ է նախադպրոցական հիմնարկները դարձնել նոր սերնդի կոմունիստական դաստիարակության իսկական ոջախներ:

5. ԲՈՒՀ-ԵՐ ՅԵՎ ԲՏՈՒՀ-ՆԵՐ

1930–31 թվականներին Բաքվում Ադր. Մանկ. ինստիտուտի և Ադրպետհամալսարանի վերակառուցման հիմունքով բարձրագույն ուսումնական հիմնարկների մեծ ցանց է ծավալվել: Ներկայումս կան 13 ԲՈՒՀ–եր, վորոնցում սովորում է 9.887 հոգի: Դրանցից — 4.892 թուրք, 4.931 բանվոր, 2.108 կոլտնտեսական և մենատնտես գյուղացի, 2.588 ծառայող:

Ավելի խոշոր ԲՏՈՒՀ է հանդիսանում ԱԿՆԻ–ն, վորը միութենական նշանակություն ունի: Խոշորագույն նշանակություն ունի Մարքսիզմ – Լենինիզմի ինստիտուտի (128 ուսանող) և Ադրբ. Բարձր. Կոմ. գյուղատնտեսական դպրոցի (400 ուսանող) կազմակերպումը:

Բարձրագույն կրթության կադրերի ընդհանուր աճին զուգընթաց, բարձրագույն ուսումնական հիմնարկների չրջանավարտները (1932 թ. բոլոր ԲՈՒՀ-երը տվել են 895 չրջանավարտներ, իսկ 1933 թվին — 1.007 չրջանավարտներ) ցույց են տալիս թուրք կադրեր պատրաստելու մեծ աճ:

ԱԿՆԻ-ն 1930–31 թվին 347 շրջանավարտներ է տվել, որից թուրք՝ 24 հոգի (8 տոկոս), 1931–32 թվին — 404 հոգի, որից 70 թուրք (17 տոկոս), 1932–33 թ. — 259 հոգի, որից 67 թուրք (25 տոկոս):

Ադր. Բժշկ. ինստիտուտը 1929–30 թվին բաց է թողել 169 հոգի, որից թուրք 34 հոգի (20 տոկոս), իսկ վերջին յերեք տարվա 425 հոգի շրջանավարտներից 197 հոգի (47 տոկոս) թուրք են:

Բարձրագույն Մանկավարժական ինստիտուտը 1931 թվին բաց է թողել 259 հոգի, որից թուրք՝ 211 հոգի, 1932 թվին — 255 հոգի, որից թուրք՝ 243 հոգի, 1933 թվին — 256 հոգի, որից թուրք՝ 247 հոգի:

Խորհրդային Միության Կենտգործկոմի 1932 թվի սեպտեմբերի 19-ի՝ բարձրագույն դպրոցի մասին որոշման իրագործման հիմունքով՝ ԲՈՒՀ-երի և ԲՏՈՒՀ-երի դասավանդության լավացման գործում զգալի քայլեր են արել:

Ընկ. Ստալինի «Պրոլետարսկայա Ռեվոլյուցիա»-ի խմբագրությանն ուղղած նամակից հետո սուրվել են բոլոր, մանավորապես սոցիալ-տնտեսական առարկաների ծրագրերը՝ կուսակցական կայունության տեսակետից:

Կենտգործկոմի որոշման իրագործման շնորհիվ՝ աշակերտության և ակադեմ-կազմի մեջ աճել ու ամրապնդվել է կարգապահությունը:

Օրինակ՝ Ադրբ. Բժ. ինս-տը 1932 թվի աշնան սեմեստրում ունեցել է 2,79 տոկոս ուսանողության պրոգուլ, իսկ 1933 թվի աշնան սեմեստրում — 0,53 տոկոս:

Սակայն կան ԲՈՒՀ-եր, վորոնք դեռևս իրենց աշխատանքները պատշաճ բարձրության վրա չեն դրել: Ադրկոմկուսի (բ) Կենտկոմը Ադր. Գյուղատնտեսական ինստիտուտի, Բարձրագույն Մանկավարժական ինստիտուտի և Պետկոնսերվատորիայի նկատմամբ հանած 1933 թ. իր որոշումում մատնանշել է այդ ԲՈՒՀ-երի ուսումնական աշխատանքներում յեղած խոշորագույն թերությունները — ուսումնական թույլ կարգապահություն, բաց թողնվող պարապմունքների ցածր որակ, ծրագրամեթոդային անբավարար աշխատանք, կաֆեդրաների թույլ աշխատանք և այլն:

Հաշվետու շրջանում աճել են գիտական աշխատողների նոր կադրեր: Պետ. ուս. խորհրդի տվյալներով՝ 1930 թվի յերկրորդ կիսից սկսած հաստատված է 36 մարդու պրոֆեսորական կոչում տալը, վորոնցից 7-ը թուրք, և 116 հոգու դոցենտի կո-

չում տալը, վորոնցից 52 թուրք: Ընդամենը 92 պրոֆեսորներ
կան, վորոնցից 8-ը թուրք, կա նաև 135 դոցենտ:

Վորոշ ԲՈՒՀ-երի թուրքիզացիայի յենթարկելու գործում
տեղի յեն ունեցել լենինյան ազգային քաղաքականության աղա
վաղումներ, արվել են նացիոնալիստական բնույթ կրող սխալ
ներ:

Ճիշտ չի յեղել Բարձր. Մանկ. ինստիտուտի ղեկավարու-
թյան և Լուսժողկոմատի վերցրած կուրսը՝ բացառապես թուրքա
կան կադրեր պատրաստել, վորովհետև այդ դեպքում միանգա
մայն դադարում ե հայկական և ռուսական կադրերի պատրաս-
տումը, վորոնց պահանջը բավական մեծ ե, իսկ յերկրորդ՝ դա
սավանդությունը չի ապահովել բարձրորակ թուրք կադրերով,
վորի հետևանքով պրոֆեսորի և դոցենտի պաշտոնին հրավի-
րել են բավական անպատրաստ, իրենց կոչման անհամապատաս
խան մարդիկ:

Տեղական նացիոնալիզմի արտահայտություններ են յեղել
նաև Ադր. Բժ. ինստիտուտում: ԱԲԻ 100 տոկոսով թուրքիզացի
այի յենթարկելու գիծն ե վերցվել, առանց հաշվի առնելու Ա-
դրբեջանի առանձնահատկությունները և յեղած կադրերը, վո
րոնք կարող եյին ապահովել թուրքական լեզվով դասավանդու-
թյունը: Դրա հետևանքով ԱԲԻ-ում պրոֆեսորական կազմի
(30-ից միայն 7 թուրք) և ուսանողների կազմի (նախագծվել եր
ընդունվածների 85 տոկոսը սովորեցնել թուրքական լեզվով) ան
համապատասխանության հողի վրա անառողջ տրամադրություն
եր առաջ յեկել ռուսական պրոֆեսուրայի մեջ, վորոնք կարծում
եյին, թե շուտով իրենց ԲՈՒՀ-երից դուրս են անելու:

Այդ աղավաղումներն ուղղվել են շնորհիվ Ադրկոմկուսի (բ)
Կենտկոմի ժամանակին միջամտությանը:

Անհրաժեշտ ե մատնանշել ղեկավար կազմի հոսկայական հո
սունությունը մի քանի ԲՈՒՀ-երում: Սոցիալ-տնտեսական ինս
տիտուտում 1932–33 թվին չորս դիրեկտոր ե փոխվել, Բարձ-
րագույն Մանկավարժական ինստիտուտում այդ նույն ժամանա
կամիջոցում փոխվել են չորս դիրեկտոր և յերեք ուսումնական
բաժնի վարիչ:

Մի շարք ԲՈՒՀ-երում կուս-մասսայական աշխատանքնե-
րը և մարքս-լենինյան դասախոսականությունը լավ չեն դրված:
Կոմունիստների և կոմյերիտականների զգալի մասի գաղափարա-
քաղաքական մակարդակի ցածր լինելու հետևանքով՝ ժամա-
նակին վճռական հակահարված չի տրվել դասակարգային թըշ
նամու և նրա ագենտուրայի յելույթներին, վոր տեղի յեն ունե
ցել Ադր. Գյուղ. Տնտ. ինստ.-ում և Սոցիալ-տնտեսական ինս
տիտուտում: Նորերս յերևան են հանվել Ադր. արդյունաբերա-
կան ակադեմիայում տեղի ունեցած տրոցկիստական յելույթնե-
րը:

6. ԳԻՏԱԿԱՆ-ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐ

1930–31 թվերի ժամանակամիջոցում Ադրբեջանում ստեղծ-
վել են մի շարք գիտական – հետազոտական հիմնարկներ, վո-
րոնք խոշորագույն նշանակություն ունեն տնտեսական և կուլ-
տուրակա շինարարության համար: Ներկայումս գոյություն ու-
նեն գիտական – հետազոտական 12 խոշոր հիմնարկներ՝ «Ազ-
ՌԶՑԱՆ», «ԶԱԿՆԻԽԻ», Նավթային հետազոտական ինստիտուտ,
Շահումյանի անվան ինստիտուտ և այլն:

Բացի այդ գոյություն ունեն մանր գիտական և փորձնական
հիմնարկների մի մեծ ցանց (զոռնալ կայաններ, հենակետեր,
թանգարաններ և այլն):

Գիտական – հետազոտական հիմնարկները մի շարք գործ-
նական արդյունքների յեն հասել, վորոնք գործադրվում են ԱՍ
ԽՀ արտադրության մեջ, գյուղական տնտեսությունում և կուլ
տուրական աշխատանքներում: Առանձնապես աչքի յեն ընկնում
Ադրբեջանի գիտական – հետազոտական նավթային ինստիտուտի
աշխատանքները:

Գիտական հիմնարկների գործունեության ընդհանուր թերու
թյուններից մեկը հանդիսանում է մասսայական թույլ աշխա-
տանքը:

.1932–33 թվերին զգալի տեղաշարժ է մտցրվել թուրքերեն
լեզվով մարքսիզմի կլասիկների աշխատությունների հրատա-
րակման գործում (Լենինի վեցհատորյակի հրատարակությունը,
«Լենինիզմի հարցերի» նոր թարգմանությունը, մի շարք բրո-
շյուրների հրատարակ.), սակայն այդ աշխատանքի տեմպը հա-
փազանց դանդաղ է:

7. ՄԱՄՈՒԼ

Մեծ նվաճումներ կան և մամուլի բնագավառում: Ազերնե-
շրը հրատարակել է.

1929 թվին — 366 անուն հրատարակություն 1·390·000 որի-
նակ ընդհանուր տիրաժով, 1933 թվին — 718 անուն՝ 3·966·800
որինակ ընդհանուր տիրաժով: Դրանցից թուրքերեն լեզվով 511
անուն 3·600 որինակով, իսկ մնացածը ռուսերեն, հայերեն և
թալիշերեն լեզուներով:

1929 թվից մինչև 1933 թիվը լույս է ընծայված 3,370 ա-
նուն 19·365·200 որինակ ընդհանուր տիրաժով:

Կուսհրատարակության վերակազմակերպումից հետո (1933
թվի հուլիսից) նա լույս է ընծայել 71 անուն կուս – քաղաքա
կան գրականություն 170·000 որինակով:

Թուրքերեն թարգմանված են մարքսիզմ – լենինիզմի կլա-
սիկների մի շարք յերկեր: Արդեն մամուլի տակից դուրս են յե
կել Լենինի վեցհատորյակի յերեք հատորը, Ստալինի «Լենինիզ
մի հարցերը» և այլն:

Ազնեշթհրատարակչությունը 1931 թվից հրատարակել է 482
անուն գիրք, 1·194·100 որինակով. դրանցից թուրքերեն լեզվով
88 անուն 179·700 որինակ ընդհանուր տիրաժով:

Այդ նվաճումների հետ միասին Ազերնեշրի աշխատանքում կան
և մի շարք թերություններ: Հարկ յեղած ուշադրությունը չի
դարձվում բաց թողված արտադրանքի վորակի և գաղափարա
խոսական կայունության վրա: 1932 թվին շրջանառությունից
հանված է 27 անուն գիրք, 1933 թվին 4 անուն գիրք:

Զգալիորեն մեծացել է պարբերական մամուլի աճը: Ներ-
կայումս Ադրբեջանում լույս են տեսնում 125 տպագրական թեր
թեր: Բաքվում հրատարակվում են հանրապետական և Բաքվի
9 թերթ և 34 բազմատիրաժ: ԱՍԽՀ շրջաններում լույս են տես
նում —50 շրջանային և 29 քաղրաժնային թերթեր:

1931 թվին Ադրբեջանում հրատարակվում էր 43 թերթ
285·000 որինակ ընդհանուր տիրաժով, 1933 թվին — 125 թերթ
503·000 որինակ ընդհանուր տիրաժով:

125 թերթերից 64 թուրքերեն լեզվով է հրատարակվում, մը
նացածները 9 լեզվով (ռուսերեն, հայերեն և այլն): Այդ
քանակից մի շարք թերթեր լույս են տեսնում զուգնթաց՝ թուր
քերեն– ռուսերեն և թուրքերեն – հայերեն:

Ադրբեջանում տարեց – տարի աճում է բանգյուղթղթակից-
ների շարժումը: Ներկայումս կա 17·918 բանգյուղթղթակից, վո
րոնք առաջին դեր են խաղում նավթի ու բամբակի պլանը կա-
տարելու համար մղվող պայքարի գործում, կուլակային մանրո
վրրների ու նենգությունների դեմ մղվող պայքարում, կոլտն-
տեսությունների կազմակերպչա – տնտեսական ու քաղաքական
ամրապնդման համար:

1933 թվին ավարտվել է գրքի պալատի կառուցումը, վորի
նախագծային ուժը հասնում է 200·000 տպագրական թերթի 110
միլիոն տոտիսկով: Տպագրական գանազան մեքենաների քանա-
կությունը 1929 թվի 128-ից 1930 թվին հասել է 190-ի:

Այդ նույն ժամանակաշրջանում էլ ռայոնական տպարաննե-
րի թիվը 5-ից բարձրացել է 46-ի: Նախագծված է 1934 թվին
կազմակերպել եյի 11 շրջանային և 14 քաղրաժնային տպարան-
ներ:

Թերթերի նկատմամբ բանվորների և կոլտնտեսականների ա-
ճող պահանջը մեր մամուլի առաջ խնդիր է դնում լույս ընծա
յել եյի ավելի մեծ թվով բարձրորակ ու բարձր – գեղարվես
տական արտադրանք: Պահանջվում է մեծ վերակազմության յեն
թարկել ու մեծացնել յեղած պոլիգրաֆբազան, վոր կարելի լի
նի բավարարել աճող մասսաների պահանջները և հրատարակել
անհրաժեշտ արտադրանք:

8. ՄԱՍՍԱՅԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԱՍԽՀ-ՈՒՄ

Վերջին տարիների ընթացքում քաղլուսավորական հիմնարկու-
թյունների ցանցը զգալի չափով մեծացել է։ Եթե 1931–32 թվե-
րին կար 139 գրադարան, ապա 1932–33-ին՝ կա 200, ակումբնե-
րի թիվը 229 էր, այժմ — 305 է, դրանցից 40-ը կանանց հա-
մար էյին, իսկ այժմ — 49. խրճիթ-ընթերցարանները 347 է-
յին, այժմ — 394. կար 450 անկյուն, այժմ 567 է, կուլտուրայի
պալատները 6 են։

Քաղլուսավորական հիմնարկությունների նյութական բա-
զան աճել է։ 1931 թ. ծախսվել է 1.150.000 ռ. իսկ 1933 թվին
—2.276.300 ռ.։

Ադրբեջանում կազմակերպված է 20 օրինակելի ակումբ և
60 օրինակելի խրճիթ-ընթերցարան, ինչպես օրինակ՝ Խնձորիս
տանի օրինակելի ակումբը, Արփաուտի (Բարդա) օրինակելի
խրճիթ-ընթերցարանը, Նորաշենի օրինակելի ակումբը, վո-
րոնք քաղաքական-լուսավորական մեծ աշխատանք են կա-
տարում բամբակի համար մղվող պայքարում։ Կազմակերպված
են ագրոտեխնիկական խմբակներ, ներկայացումներ են դրվում,
կանոնավոր կերպով հրատարակվում է պատի թերթը և ընթեր
ցողներ են նշանակված։

Ալի-Բայրամլիի անվան կանանց ակումբը, վոր վերակազմ-
ված է Թրքուհու կուլտուրայի պալատի, կուլտուր-քաղաքա-
կան աշխատանքի զանազան ձևերով հազարավոր Թրքուհիներ է
հաղորդակից անում սոցշինարարության գործին և մեծ դեր է
խաղում Թրքուհիներին փաստորեն ազատագրելու գործում։
Բաքվի կուլտուրայի պալատները ահագին աշխատանք են
կատարում Նավթի համար մղվող պայքարում։ Առանձնապես
պետք է նշենք «26»-ի անվան կուլտուրայի պալատի այդ ուղղու
թյամբ տարած աշխատանքը։

Դրա հետ միասին քաղլուսավորական հիմնարկություններից
շատերի աշխատանքը շրջաններում անբավարար վիճակում է։
Ադրբեջանում խորհրդային իշխանության գոյության ամբողջ ըն
թացքում շրջաններում ակումբային շինարարություն չի յեղել։ Ա-
կումբներից, խրճիթ-ընթերցարաններից շատերը տարիներով
չեն նորոգվել, չունեն պատշաճ սարքավորում, կուլտուրական
պարագաներով մատակարարված չեն և այլն։ Տեղական կազմա
կերպությունները պատշաճ ուշադրություն չեն դարձնում քաղ
լուսավորական աշխատանքին։ Յեղել են դեպքեր, վոր ակումբնե
րը մեքենայորեն փակվել են։ Գյոքչայի շրջանում Մյուսյուսլիի
ակումբի շենքը քերված և տրված է բանվորների հանրակացա
րանի համար, Քյուրդամիրում — տվել են Կարմիր բանակային
ների հանրակացարանի համար։ Աղսույում օրինակելի խրճիթ-
ընթերցարանի շենքը տրվել է սերմի համաքման կետի համար,
իսկ ինվենտարը դուրս են թափել։ Ալի-Բայրամլույում ա-

կումբի շենքը ժողդատարանն օգտագործում է վորպես դատական
դահլիճ, մյուս օրերին ակումբը փակ է լինում. Կախի շրջանում
լիկվիդացիայի յեն յենթարկել օրինակելի և կանանց ակումբը։
Լիկվիդացիայի յենթարկված ակումբների հաշվին շրջուսբաժի-
նը վճարում է մեթոդխոտ-հրահանգիչներին։ Նույն տեղում
լիկվիդացիայի յեն յենթարկել գրադարանը, իսկ գրադարանա-
պետի աշխատավարձը լրացուցիչ կերպով տրվում է շրջուսբաժ-
նի քարտուղարին։ Թ.ավուզի շրջանի Կովլյար գյուղում օրինա-
կելի խրճիթ-ընթերցարանի շենքը դեղատուն է շինված։

Հատկապես անթույլատրելի վերաբերմունք է նկատվում դե
պի կանանց ակումբները. 1933 թվի առաջին կեսին կանանց ա-
կումբների շենքերը միաժամանակ հատկացված են յեղել՝ Աղ
դաշում — կալանքի տան, Կարյագինում — հանրակացարանի,
Աղջաբեդում, — ագրոտեխտեղամասի, Աղդամում, Գյոքչայում
— այլ հիմնարկությունների համար և այլն։

9. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Համկոմկուսի (բ) Կենտկոմի՝ կուլտուրա-գեղարվեստա-
կան կազմակերպությունները վերակառուցելու մասին վայաց-
րաց ապրիլյան վորոշումից հետո զգալի բեկում կա Խորհրդային
գրողների միության Կազմկոմիտեյի աշխատանքում.

Նախաձեռնությունը բարձրացնելու և գեղարվեստական գր-
րականության վորակը բարձրացնելու, գրողների նյութական-
կենցաղային վիճակը բարելավելու նպատակով՝ գրողներից ու
բանաստեղծներից հինգ հոգի ազատվել են ամեն աշխատանքից և
նրանց թոշակ է նշանակված։

Վերակառուցման արդյունքն առանձնապես ցայտուն կերպով
նկատվում է այնպիսի գրողի ստեղծագործության մեջ, ինչպի-
սին Ջաֆար Ջաբարլին է։

Ջաֆար Ջաբարլին Թուրքական բեմի համար տվել է գաղա
փարախոսական տեսակետից կայուն և խորհրդային վոգով գրը
ված «Ցաշար» պիեսը, վորի մեջ արտացոլում է դասակարգային
պայքարը գյուղում ավյալ էտապում։ Նա գրել է նույնպես «Ալ
մասը» և «1905 թիվը»։

Խորհրդային գրողների կազմկոմիտեյին անհրաժեշտ է ու-
ժեղացնել իր ուշադրությունը հին գրողների աշխատանքի նր-
կատմամբ՝ նրանց իսկական ու արագ վերակառուցումն ապահո
վելու նպատակով և արագորեն շրջադարձ անելու դեպի մեր օրերի
թեմատիկան։

Թյուրքիայում գտնվող մուսավաթիստները չարունակում են
Հուսեյին Ջավադին համարել վորպես Ադրբեջանի նացիոնալիս
տական գրող։ Անհրաժեշտ է, վոր նա ավելի վճռական վերակա
ռուցման յենթարկվի և պայքար մղի մուսավաթական գաղափա
րախոսության ու մուսավաթական տարրերի դեմ։

Վերակառուցում և աշխուժացում է նկատվում այնպիսի գր
րողների կողմից, ինչպիսիք են Կամտեմիրը, Յուսուֆ Վեզիրո-
վը։

Կանտեմիրն իր յերգիծաբանական պատմվածքներում ռեալիս
տորեն ցույց է տալիս գյուղատնտեսության կոլեկտիվացման հա
ջողությունը՝ պատռելով վնասարարների, մոլթեպաշտների ու
հարմարվողների դիմակը:

Յուսուֆ Վեզիրովը «Կրղըլյար Բուլաղի» իր նոր վեպում
պատմական անցքերի ֆոնի վրա ցույց է տալիս ժողովրդական
ապստամբության ընդդեմ ցարի:

Մեր հեղափոխության առաջ քաշած յերիտասարդ գրողները
1932–33 թվերին գրել են ավելի քան 15, ծավալով խոշոր և դա
ղափարախոսության կողմից կայուն վեպեր, վիպակներ, պոյեմ
ներ ու պատմվածքներ:

Այս նվաճումների հետ միասին առանձին գրողների ստեղծա
գործությունների մեջ նկատելի յեն հոռետեսության նոտաներ,
խորհրդային իշխանությանը վարկաբեկելու փորձեր և այլն:
Այսպես, բանաստեղծ Սանըլին մինչև այժմ պահպանում է կու
լակության գաղափարախոսությունը, յերգում է Ադրբեջանի խա
ների եպոխայի հին, կուլակային գյուղը:

Գրողների մի փոքր մասի մեջ կան յեսենինշչինայի տրամա
դըրություններ, այդպիսի տրամադրությունների պրոպագանդ:
Դրանք իրենց արտացոլումն են գտել յերիտասարդ գրողներից մե
կի՝ Բիչինի հայտարարության մեջ, վորը գրական խմբակում
ասել է, թե կամ պետք է Յեսենին լինել, կամ հրաժարվել բա
նաստեղծությունից:

Նույն Բիչինին են պատկանում հետևյալ խոսքերը.—
«Յես համաձայն չեմ, արդյոք հնգամյակին,—
Կկտրեմ իմ գլուխը վայրի սատանան.
Լավ է կանաչ վրաների տակ
Մեռնել իր համար և բոլորի համար»:

Դժբախտաբար պետք է ասել, վոր այդպիսի տրամադրու
թյունների դեմ կազմկոմիտեն բավականաչափ պայ
քար չի մղել:

Գրական ճակատի թույլ կողմերից մեկն այն է, վոր մինչև
այժմ մարքսիստական քննադատությունը հետ է մնում գեղար
վեստական գրականության զարգացման տեմպից:

Ինտերնացիոնալ դաստիարակությունը թույլ է դրված գրող
ների շրջանում. Կազմկոմիտեյի ազգային սեկցիաները կտրված
են իրարից և մինչև իսկ կուսակցական, քաղաքական կամպանի
աները նրանք առանձին – առանձին են տարել (որինակ՝ Մարքսի
մահվան 50-ամյակը տարվել է սեկցիաներով):

Զանազան ազգությունների գրողներն անծանոթ են միմյանց
ստեղծագործությանը:

Ադրպրոֆխորհուրդը, Բաղխորհուրդը և մյուս կենտրոնա
կան կազմակերպությունները անհրաժեշտ ոգնություն չեն հասց
նում խորհրդային գրողների նյութական – կենցաղային գրու
թյան բարելավման գործում: Մինչև այժմ Կազմկոմիտեն չունի
հասարակական չենք, վորը խիստ ազդում է գրողների ստեղ
ծագործական աշխատանքի վրա:

10. ԳԵՂԱՐՎԵՍՏ

Ադրբեջանում 13 պետական և քաղաքային թատրոններ կան:
Թուրքական դրամատիկական թատրոնն այս ժամանակամիջո
ցում պայքար է ծավալել արևմտա – յեվրոպական, ռուսական
և թուրքական կլասիկ դրաման քննադատաբար յուրացնելու հա
մար: Ցուրացնում է ռուսական նոր, հեղափոխական դրաման և
աշխատում է թուրքական խորհրդային դրամա ստեղծելու վր
րա: Թատրոնը գեղարվեստական բեմադրությունը բարելավելու
իմաստով բավականին բարձրացել է: Ներկայումս թատրոնն աշ
խատում է Ջ. Ջաբարլիի «Ալմաստան» նոր պիեսի բեմադրու
թյան վրա:

Պետոպերայի թուրքական սեկցիան բեմադրելու համար
պատրաստում է Գլիերի «Շահ Սանամ» ոպերան, պատրաստում
է Մայիլյանի «Սաֆա» ոպերան, Հաջիբեկովի «Քյոռ Ողլին»,
Բուրշտեյնի «Գյուլնար» բալետը:

Բագվի բանվորական թատրոնը, վոր բանվորական ռայոննե
րում հսկայական աշխատանք է կատարել, աչքի ընկնող տեղ է
գրավել միութենական թատրոնների մեջ:

Բավականին ուժեղացված է հայկական թատրոնը:

11. ԿԱՐՄՐԱԴՐՈՇ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Լենինյան ազգային քաղաքականությունն Ադրբեջանում
ճիշտ կիրառելու բազմաթիվ փաստերից մեկը 1921 թվից գոյու
թյուն ունեցող Կարմրադրոշ հայկական թատրոնի անշեղորեն ա
ճումն ու զարգացումն է հանդիսանում:

Թատրոնն սպասարկում է Բագվի և նրա շրջանների ավելի քան
100 հազարանոց հայ աշխատավոր ազգաբնակչությանը, կենսա
գործելով կուսակցության՝ ձևով ազգային, բովանդակությամբ
սոցիալիստական կուլտուրա ստեղծելու լոզունգը: Թատրոնի աշ
խատանքի հիմնական բովանդակությունը—դա նրա ռեպերտու
արն է: Հայկական թատրոնի ռեպերտուարն ընդգրկում է բոլոր
դույնի դասակարգային թշնամիների դեմ, մասնավորապես դաշ
նակների և դաշնակիզմի դեմ պայքար մղելու համար մասսան
երին մոբիլիզացիայի յենթարկող գեղարվեստական բեմադրու
թյուններ (Վաղարշյանի «Ողակում» պիեսը) հանուն հայ և
թուրք աշխատավորության ինտերնացիոնալ միասնականության
և յեղբայրության:

Հայկական թատրոնը հայերեն լեզվով ներկայացնում է նա
և թուրքական պիեսները, ինչ
յես դրամատուրգ Ջաբար Ջաբարլիի «1905 թիվը» և «Ցաշարը»: Զարգացնելու
պես որինակ «Սևիլը», «1905 թիվը» և «Ցաշարը»: Զանազանց
բնորոշ է այն, վոր այդ թուրքական պիեսները հայկական բեմի
վրա բացառիկ նշանակություն ունեն: Այսպիսով թատրոնը կեն
սագործում է հայկական և թուրքական յեղբայրական թատրոն
ների միջև կուլտուրական արժեքները փոխանակելու խնդիրը:

Թատրոնը հաջողությամբ քննադատաբար հաղթահարում է և յուրացնում է անցյալի կուլտուրական ժառանգությունը (օրինակ՝ Շիլլերի «Սեր և խարդավանքը»):

Զգալիորեն աճել են և հայ բեմի՝ դեղարվեստական ստեղծագործության փայլուն օրինակներ տվող աշխատողների կադրերը:

Հայկական թատրոնի հետագա զարգացումն առանց սեփական թատրոնական շենքի անհնարին է դառնում: Մինչև հիմա հայկական թատրոնն աշխատում էր թուրքական դրամատիկական թատրոնի շենքում: Յերկու թատրոնների աճումը մի շենքում անհնարին է, ուստի կուսակցության և կառավարության վորոշմամբ՝ 1934 թվի բյուջայի մեջ նախատեսնված է հայկական թատրոնի համար Լեյտենանտ Շմիդտի փողոցի վրա նախկին հայկական յեկեղեցու տեղում նոր շենքի կառուցումը:

Այնտեղ, վորտեղ հայ քահանան և դաշնակը կրոն և նացիոնալիզմ են քարոզել, վորպես պատասխան դաշնակներին և մուսավաթիստներին կկառուցվի նոր հայկական թատրոն — մասսաների կուլտուր - քաղաքական և ինտերնացիոնալ դաստիարակության հզոր օջախը:

12. ՅԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Յերաժշտության ֆրոնտում վորոշ առաջընթաց շարժում է նկատվում. կոմպոզիտորների նոր կադրեր են պատրաստված: Ազգային յերաժշտական կուլտուրա ստեղծելու գործին գործնականորեն լծվել են կոնսերվատորիայի պրոֆեսորներ՝ Այգբերգը, Ռուդոլֆը, Յաբլոնկոն և ուրիշները:

Վճռական հակահարված է ստացել ժողովրդական գործիքները (թառ) ու մոտիվներն արհամարհի յենթարկող, «ձախ» հոսանքը: Մյուս կողմից էլ պայքար է մղվել յեվրոպական յերաժշտական կուլտուրան անգիտացող և ժողովրդական մոտիվներն ու յերգերն անփոփոխ ու անշարժ պահպանելու ռեակցիոն հոսանքի դեմ:

1932 թվից Ադրպետկոնսերվատորիային կից յերաժշտական — գիտական — հետազոտական կաբինետ է ստեղծված, վորն իր շուրջն է համախմբում գոյություն ունեցող յերաժշտական կադրերին և ժողովրդական յերաժշտության ուսումնասիրելու նպատակով մի շարք գիտական եքսպեդիցիաներ է կազմակերպել դեպի շրջանները:

Շրջադարձ ունենք և կերպարվեստի ֆրոնտում: Ստեղծագործող ուժերի անկասկած աճ ունենք, վոր արտահայտություն է գտել ինչպես նկարչության, գծագրության, պլակատի բնագավառում, այնպես և արձանագործության և ճարտարապետության բնագավառում: Այդ աճի վկայությունն է հանդիսանում Հոկտեմբերյան հանդեսներին Բագու քաղաքի ճարտարապետական ձեվակերպումը:

1933 թվի գարնանը Ադրբեջանի նկարիչների աշխատությունների ցուցահանդեսը, վորը ներկայումս փոխադրված է Մոսկվա — ԽՍՀՄ ժողովուրդների արվեստների ցուցահանդեսը, —կենտրոնական թերթերի և ժուռնալների կողմից դրական գնահատություն է ստացել:

Ադրբեջանում ունենք մեկ ԲՈՒՀ և վեց տեխնիկումներ (թատրոնական, նկարչական և յերաժշտական), վորտեղ սովորում են մոտ 900 աշակերտներ, վորոնցից 368 թուրքեր են (80 թրքուհիներ):

Չնայած արվեստի և գրականության ֆրոնտում, Կենտկոմի վորոշման առնչությամբ ունեցած վորոշակի շրջադարձին, այդ շրջադարձը դեռևս չի ամրապնդված և ամբողջ աշխատանքը միանգամայն անբավարար է՝ ամբողջ սոցիալիստական շինարարության զարգացման տեմպերի ու ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրա ստեղծելու պահանջների համապատասխան լինելու տեսակետից:

13. ԿԻՆՈ

1933 թվին՝ 1930 թվի համեմատությամբ կինո - ցանցը քաղաքում և գյուղում մեծացել է 194,1 տոկոսով (յեղել է 138 շարժական կինո, դարձել է 462): Խոշոր նվաճում է հանդիսանում խոսող կինոյի յուրացումը: Բաքվում յերեք կինո - թատրոններ և չորս կուլտուրայի պալատներ խոսող կինո ունեն: Ավարտվում են յերկու կուլտուրայի պալատներում խոսող կինոներ դնելու աշխատանքը, ձեռնարկված է Մաշտաղայի ակումբում խոսող կինո դնելու գործը, վոր կավարտվի 1934 թվի առաջին յեռամսյակում:

1943 թվին նախատեսված է հնչյունավորելու Գյոքչայի, Նուխու, Լենքորանի և Նախիջևանի կինո - թատրոնները:

14 ՌԱԴԻՈ

Ներկայումս ԱՍԽՀ-ում 19·290 տրանսլյացիոն կետեր կան, իսկ ռադիո - ընդունողների հետ միասին — 21·345. տրանսլյացիոն հանգույցներ — 60:

1932 թվին տարած վատ աշխատանքի հետեվանքով ռադիոֆիկացիայի գործում խոշոր ճեղքվածք է յեղել: Նախագծով կառուցվելիք 17 ռադիոհանգույցներից միայն ութն է կառուցվել: Նախագծված է յեղել 15·050 կետ սարքել, — սարքված է 7·793 (50 տոկոս):

1934 թվին ԱՍԽՀ-ում ռադիոֆիկացիայի համար կոնտրոլ թիվ է նշված 55·000 ռադիո կետ, այսինքն 1933 թվի դիմաց ավելացում 35·000-ով: Նախագծված է քաղբաժինների ընդգրկած բոլոր կոլտնտեսությունները ռադիոֆիկացիայի յենթարկել: Բաքվում կառուցված է մի խոշոր ելեքտրո - մեխանիկական արհեստանոց, վորը հնարավորություն է տալիս ինչպես

Բաքվում, այնպես և շրջաններում շարքից դուրս յեկած ամբողջ ապարատուրան նորոգմամբ սպասարկելու: Արհեստանոցն արդեն ավարտելու վրա յե 50 վատտի ուժ ունեցող վեց կարճալիք հաղորդիչ ապարատների կառուցումը: Այդ հաղորդիչների սարքավորումը հնարավորություն կտա Բաքուն կապելու խորհտնտեսությունների և ՄՏԿ-ների քաղբաժինների հետ:

1932–33 թվին ռադիոհաղորդումն ԱՍԽՀ-ում լիակատար անկման է հասել: Հաղորդման ժամերի քանակը 16-ից իջել է և որական ութ ժամի հասել:

Հաղորդումների միօրինակությունը, համապատասխան ռեպերտուարի բացակայությունը, կատարողների ցածր վորակը — այս ամենը նույնպես անդրադարձել են հաղորդման վորակի վրա:

Խոշորագույն թերությունն է հանդիսանում և այն, վոր միկրաֆոնի մոտ չեն ուղարկում դեռևս լավագույն գիտական ուժերը, մասնագետները, ինժեներները, գյուղատնտեսները, նավթի և բամբակի խղոտովյանները:

XI. ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Համկոմկուսի (բ) Կենտկոմի 1931 թվի հոկտեմբերի 31-ի վորոշումը, վորը մատնանշել է Անդրյերկրկոմի և ազգային հանրապետությունների կենտկոմների սխալներն ու թերությունները՝ արդյունաբերությունը ղեկավարելու, Անդրֆեդերացիայի ամրացման գործում և մանավանդ գյուղացիության նկատմամբ քաղաքական ղեկավարության գործում, — Ադրբեջանի կուսկազմակերպության հետագա աշխատանքի հիմքում է յեղել:

Սակայն Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի ղեկավարությունը 1932 թվին չի կարողացել ճիշտ իրականացնել կյանքում Համկոմկուսի (բ) Կենտկոմի դիրեկտիվը. դրա հետևանքն առաջին հերթին յեղել է նավթի և բամբակի պլանների չկատարումը, վորովհետև Ադրբեջանի կազմակերպությունում չեն յեղել այն պայմանները, վորոնք ապահովեյին Կենտկոմի դիրեկտիվների անպայման կատարումը:

Կադրերի դաստիարակումը գործնական սկզբունքով չի կատարվել: Կուսկազմակերպության առանձին օղակներում (Աղդաշ, Լենքորան, Շամախի, Նախիջևան, Զուվանդ և այլն) տեղի յե ունեցել քայքայվածություն, անպատասխանատվություն, դասակարգային զգաստության կորուստ, վոր բնական է չէր կարող չհասցնել այն խայտառակ ցուցանիշներին, վորոնցով ավարտվեց 1932 թիվը:

1933 թվին Ադրկոմկուսի (բ) Կենտկոմը, բոլշևիկյան իսկական ղեկավարության պայմաններում և Համկոմկուսի (բ) Անդրյերկոմի կոնկրետ ու օպերատիվ օգնությամբ վերջ տրվեց այդ բոլոր անսկզբունք թափթփվածությանը, խմբակայնությանը, վորոնք բուն եյին դրել անցյալ տարիներին: Սա ապահովել է Ադրբեջանի կուսկազմակերպության այն դրական տըն-

տեսական ցուցանիշները, վորոնցով նա գնում է Անդրկովկասյան 7-րդ և Համամիութենական 17-րդ կուսակցական համագումարին:

Նավթի և բամբակի պլանները կատարելու համար 1933 թվին, պահանջվում եր կուսակցական շարքերի բոլշևիկյան մոբիլիզացիա, ուժերի ճիշտ դասավորում՝ շինարարության առանձին տեղամասերում, շրջանների վրա կոնկրետ ու օպերատիվ ղեկավարության կազմակերպում և բոլշևիկյան ինքնաքննադատության լայն ծավալում, վորը կարողանար նախազգուշացնել և ազդանշանել կուսակցական և տնտեսական ապարատների առանձին օղակներում յեղած թերությունների մասին: Հենց այդ խնդիրներն են դրվել ընկ. Բերիայի զեկուցման առթիվ Բաքվի կուսակտիվում ընդունված բանաձևի և Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի ու Բաքվի Կոմիտեյի հաջորդ պլենումների վորոշումների հիմքում:

Քաղբաժնի աշխատակիցները Ադրբեջանի գյուղը աշխատանքի Ստալինյան վոճ են բերել: Այդ վոճը — բարձր գաղափարա-քաղաքական մակարդակը, մասսաների մեջ, անմիջապես կոլտնտեսություններում, բրիգադում, դաշտերում, կոլտնտեսական մասսաների մեջ տարվող ամենօրյա և կազմակերպչական աշխատանքը բարձր սկզբունքայնության հետ կապակցել կարողանալը, յուրաքանչյուր տնտեսական հարցի նկատմամբ, յուրաքանչյուր փաստի և յերևույթի, յուրաքանչյուր առանձին աշխատակցի նկատմամբ զգայուն քաղաքական մոտեցումն է:

Ներկայումս մենք Ադրբեջանում ունենք 40 քաղբաժիններ (28 ՄՏԿ-ների քաղբաժիններ և 12 խորհտնտեսության քաղբաժիններ):

Քաղբաժինները հսկայական աշխատանք են կատարել Կենտկոմի 1933 թվի հուլիսի 15-ին՝ ստորին կուսցանցն արտադրական սկզբունքով վերակառուցելու մասին՝ ունեցած վորոշումը իրականացնելու գծով:

Կուսկազմակերպությունների վերակառուցման հետևանքով գյուղական շրջանների կուսցանցը նշանակալից չափով ավելացել է:

Յեթե գյուղական կազմակերպություններն ունեցել են 2,003 բջիջներ և թեկնածուական խմբակներ, ապա վերակառուցումից հետո, նրանց թիվը հասել է 3,429-ի, կոլտնտեսություններում յեղել են 773 բջիջներ, այժմ ունենք 1.767 թեկնածուական խմբակներ և 623 կոլտնտեսային բջիջներ և թեկնածուական խմբակներ և կուս.-կոմյերիտական կորիզներ: Սակայն ԱՍԽՀ 3,600 կոլտնտեսություններից, 858-ը դեռևս կուսակցական ցանցով չեն ընդգրկված:

1933 թվի ընթացքում շրջաններում հեռացվել և փոփոխվել են 468 աշխատողներ. շրջկոմների քարտուղարներ 68 մարդ, ագիտմասսավարներ — 72, շրջգործկոմբաժնի վարիչներ—88, շրջգործկոմների նախագահներ—54, թերթերի խմբագիրներ—37 և այլն:

1933 թվի ընթացքում կուսակցության կենտրոնական և Բաքվի կոմիտեները գյուղին և կուսակցական կազմակերպություններին օգնելու համար հազարավոր մարդ են ուղարկել շրջանները: Դրա հետևանքով կոլտնտեսային բջիջների քարտուղարների կադրերը նշանակալից չափով ամրացվել են, մեծացել ու բարձրացել է կոմունիստների ավանգարդային դերը կոլտնտեսային արտադրության մեջ, բարձրացել է նրանց դասակարգային զգաստությունը: Օրինակ կարող են ծառայել՝

1. Գյոքչայի շրջանում Լենինի անվան կոլտնտեսության բջջում կուսակցական Ջալիլ Մամեդ օղլին, կոլտնտեսության բրիգադիրն է, բրիգադի աշխատանքն օրինակելի յե դարձրել. բրիգադն ունի օրինակելի կարգ ու կանոն և ամուր աշխատանքային դիսցիպլինա, բրիգադն աշխատում է հարվածայնորեն, բամբակի պլանը կատարվել է ժամկետից առաջ 111 տոկոսով:

2. Կուսակցության թեկնածու, կոլտնտեսության շարքային անդամ՝ Բոստան Ադիլ ղզին (կին) ոչ մի պրոգուլ չունի, մշակման նորման միշտ կատարել է, օրական միջին հաշվով հավաքել է 25-ից մինչև 45 կիլոգրամ բամբակ,—հարվածային է: Նա իր օրինակելի աշխատանքով գրավել է մի շարք կանանց, մրցելով նրանց հետ:

Քաղբաժիններն իրենց աշխատանքում հաճախ առանձին «կոմունիստների», կուսատոմսը գրպանում կուլակային գործակալների կողմից դիմադրության են հանդիպել:

Կուսակցության թեկնածու, «Բակինսկի Րաբոչի» (Աղջաբեդի շրջան) կոլտնտեսության նախագահ՝ Ֆահրադ Ալիևը յերեք կուլակային տնտեսություններ է թագցրել, գիտակցաբար խախտել է աշխատանքային դիսցիպլինան: 96 աշխատունակ կոլտնտեսականներից բերքահավաքին աշխատանք յե ուղարկել 30-35 մարդ, հափշտակել է կոլտնտեսային անասունները, հացը, յուրացրել է կոլտնտեսային փողերից 500 ռուբլի և այլն:

Քաղբաժինները քիչ աշխատանք չեն տարել այդպիսի «կոմունիստներին» յերևան հանելու և կուսակցական շարքերը նրանցից մաքրելու ուղղությամբ:

Սակայն ոչ բոլոր կուսակցական և խորհրդային կազմակերպություններն են, որ ճիշտ հասկացել են Համկոմկուսի (բ) Կենտկոմի՝ տվյալ եռապում ՄՏԿ-ների և խորհտնտեսությունների քաղբաժինների դերի մասին ունեցած որոշումն ու այն բացառիկ նշանակությունը, որ նրանց տալիս է կուսակցությունը: Կուսակցության առանձին շրջկոմներ, խորհրդային կազմակերպությունների ղեկավարներ քաղբաժինների կազմակերպումը սվիններով դիմավորեցին, փորձեցին անգիտանալ, արհամարհել քաղբաժինները, փորձեցին քաղբաժինները դարձնել օժանդակ ապարատներ: Դեպի քաղբաժիններն այդպիսի հակակուսակցական վերաբերմունքի դեպքեր և փաստեր մենք ունեցել ենք Աստրախան-Բազարի, Ջանգելանի, Բելասուվարի, Աղջաբեդիի, Շամխորի և Սալյանի շրջաններում:

Քաղբաժինների նկատմամբ վերաբերմունքի հարցում խոշորեն յերևան յեկավ գյուղում կուսղեկավարության հին և նոր մեթոդների պայքարը: Դրան վառ ապացույց է Ադրկոմկուսի (բ) Աղջաբեդի շրջկոմի նախկին քարտուղարի պայքարը Աղջաբեդիի ՄՏԿ-ի քաղբաժնի (ընկ. Եփենդիևի) դեմ: Կուսակցության Կենտկոմն անողոք յեղավ նման յերևույթների դեմ (հանվեց Ջանգելանի շրջկոմի քարտուղար ընկ. Ախունդովը և ուրիշները):

Մի ամբողջ շարք շրջաններ, շնորհիվ քաղբաժինների և կուսակցության շրջանային կոմիտեների բոլշևիկյան աշխատանքի, ծավալուն կազմակերպչական կուլտմասսայական աշխատանքի և դասակարգային թշնամու դեմ անողոք պայքարի, — բամբակաքաղի առաջավորներ դարձան:

Ջանգելանի շրջանը, որ մի շարք տարիների ընթացքում չէր կարողացել դուրս գալ սև տախտակից, շնորհիվ քաղբաժնի պետ ընկ. Ախմեդովի բոլշևիկյան ղեկավարության, կարողացել է ավելի քան կրկնապատկել բամբակաքաղի պլանը:

Աղդաշի շրջանը, որ անցյալ տարի խոր ճեղքվածքի մեջ էր, շնորհիվ քաղբաժնի պետ ընկ. Խաչումովի և շրջկոմի քարտուղար ընկ. Մեխտիևի, կազմակերպեց մասսաները բամբակաքաղի համար և մեծ հաղթանակով դուրս յեկավ:

Կասում-Իսմայլովի շրջանը, որն անցյալ տարի խոր ճեղքվածքի մեջ էր, այս տարի, շնորհիվ քաղբաժնի պետ ընկ. Գյուլիջինսկու հայտնաբերած յեռանդի, կատարել և գերակատարել է պլանն այնպես, որ կարողացել է լրացնել անցյալ տարվա պակասը:

Գյանջայի շրջանը նույնպես կարողացել է հաջող կերպով կատարել բամբակի և մյուս կուլտուրաների մթերման պլանը:

Մենք ունեցել ենք կոլտնտեսություններում լավ կուսակցական աշխատանքի մի ամբողջ շարք օրինակներ:

Փիրջավան գյուղի «Կոմունա» կոլտնտեսությունը շնորհիվ կուսաշխատանքի լավ դրվածքի պլանից չորս անգամ ավելի յե բամբակ հանձնել, մի հեկտարից հավաքել է քսան ցենտներ, մինչդեռ անցյալ տարի հեկտարից հավաքել է 3,5 ցենտներ: Այս տարի յուրաքանչյուր աշխօրին ընկնում է 30 փութ հացահատիկ, իսկ անցյալ տարի— 3,5 փութ: Մենք հարյուրավոր այդպիսի կոլտնտեսություններ ունենք:

Այդ շրջանների և կոլտնտեսությունների օրինակները ցույց են տալիս, թե ինչպիսի հսկայական արդյունքներ կարելի յե ձեռք բերել, յեթե՝

«...մեր ձեռքը վերցնենք կոլտնտեսությունների ղեկավարությունը, մեզ վրա վերցնենք աշխատանքի պատասխանատվությունը և օգնենք կոլտնտեսականներին իրենց տնտեսությունը գիտության և տեխնիկայի տվյալների հիման վրա առաջ տանելու» (ՍՏԱԼԻՆ):

Իհարկե, բոլորովին սխալ կլիներ, եթե մենք խոսելով այս նվաճումների մասին, մոռանայինք այն խոշոր թերությունները, վորոնք գոյություն ունեն գյուղական կազմակերպություններում: Մենք ունենք շրջաններ, կարող ենք թվել շատ կոլտնտեսային բջիջներ, վորտեղ մասսայական, իսկական կուսակցական աշխատանքը փոխարինվում է վարչարարությամբ, վորտեղ կենդանի, կոնկրետ և ոպերատիվ ղեկավարությունը ձևական անտարբեր բնույթ է կրում, վորտեղ կուսակցության առանձին անդամները և շրջանային աշխատակիցները անչափավորության են դիմում, խաթարում են կուսակցական կազմակերպությունը, վորպեսզի ծածկեն իրենց աշխատանքի թերությունները: Գյոդճայի, Բարդայի, Աղջաբեդիի, Շամխորի շրջանները չեն կարողացել կուսակցական աշխատանքը վերակառուցել կոլտնտեսական խնդիրների համապատասխան, բարձրացնել շրջանների կոմունիստների ավանգարդային դերն ու նրանց գաղափարա–քաղաքական մակարդակը, վորի հետևանքով էլ այդ շրջանները բամբակահանձնման բնագավառում գտնվում են խոր ճեղքվածքում:

Կուսկազմակերպության վերակառուցումը Գյոդճայի շրջանում ըստ էության կատարվել է ձևականորեն և նույնիսկ չի ավարտվել կուսցանցի ստրուկտուրայի վերակառուցումը: Կադրերի ընտրությունն ու ուժերի դասավորումը գործնական հաշ կանխիշով չեն կատարվել:

Ղեկավարությունը, մասսաները բամբակի պլանը կատարելու համար մոբիլիզացիայի ենթարկելու փոխարեն, ինքը քայքայվել է, քայքայել է ուրիշներին: Բամբակահավաքի պլանը տապալել են: Կուսակցության շրջկոմի աչքի առաջ կուլակներն ամուր նստել էին կոլտնտեսություններում և բլոկ էին կազմել շրջանի ղեկավար աշխատակիցների հետ: Գործնական աշխատանքի փոխարեն, խմբակային պայքարով են զբաղվել, կազմակերպությունը «ազդեցության սֆերաների» պառակտելով և այլն:

Թույլ կուսակցական աշխատանքի հետևանքով, կուսակցական ապարատի կոլտնտեսային բջիջներից կտրվելու շնորհիվ, Շամխորի շրջանում կուսակցական աշխատանքը փոխարինվել է վարչարարությամբ, կորցվել է դասակարգային զգաստությունը, բացակայել է ղեկավարությունը կոլտնտեսությունների նկատմամբ, կոլեկտիվացումն ընթացել է ինքնահոսով: 1933 թվի գարնան ընթացքում կազմակերպվել են 26 նոր կոլտնտեսություններ և գոյություն ունեցող կոլտնտեսություններում ընդգրկվել են ավելի քան 2 հազար տնտեսություններ, առանձին կոլտնտեսություններում անհատական հացահատիկային աշնանացանը համայնացնելու հարցում թույլ է տրվել կոպիտ վարչարարություն: Ամեն քայլափոխում աշնանացանն անցկացնելիս խախտվում է գյուղատնտեսական արտելի կանոնադրությունը, վորը հանգել է շրջանի բամբակային մասում կոլտնտեսության

ների ֆիկտիվ կերպով գոյություն ունենալու և բամբակային պլանի տապալմանը:

Մորուլլիի գյուղխորհուրդում, կոլտնտեսականների ընդհանուր ժողովում կուսբջջի քարտուղար Մամեդովի կողմից կոլտնտեսություններից 30 տնտեսություններ դուրս անելն անց է կացրվել բջջի բյուրոյի անդամներից հարցում կատարելով:

Ինքնահանգստացումն ու կոլտնտեսական մասսաները կազմակերպել չկարողանալը, դասակարգային զգոնության բացակայությունը—ահա աշխատանքի «վոճը» Բարդայում, վորը հասցրել է բամբակի պլանի տապալմանը:

Ադրկոմկուսի (բ) շրջկոմի նոյեմբերի 15-ի վորոշման մեջ ասվում է.

— «Մասսայական աշխատանքը մենատնտեսների մեջ շատ թույլ է դրված, վոր բացատրվում է շրջանային հողբաժնի վոչ հմուտ ղեկավարությամբ»:

Կուսակցության Սաբիր-Աբադի շրջկոմն իր №9 արձանագրության մեջ հանում է այսպիսի վորոշում.

«Գյուղխորհուրդների կողմից մենատնտեսների հետ թույլ մասսայական աշխատանքի հետևանքով, մենատնտեսների բամբակաքաղի և հանձնման պլանը կատարվել է 0,24 տոկոս, այս առնչությամբ առաջարկել շրջգործկոմի ֆրակցիային մասսայական աշխատանք ծավալել մենատնտեսների մեջ»:

Ահա դեպի կուսաշխատանքն անհոգի վերաբերմունքի որինակներն այդ շրջաններում:

Գյուղական ստորին կուսկազմակերպությունների ամրացման և կուսմասսայական աշխատանքի դրվածքը լավացնելու բնագավառում նշանակալից չափով լավացել է գյուղական կուսկազմակերպությունների կուսակցական որերի վորակը: Որինակ Աղդաշի, Կասում-Իսմայլովի, Գյանջայի, Շամախու շրջանների կուսժողովներում, վորտեղ վորոշումներն էին մշակում, ներկա գտնվող կոմունիստների և կոմյերիտականների ընդհանուր քանակի համեմատությամբ, կոլտնտեսականների և աշխատավորների քանակը հասնում էր 100 տոկոսի:

Մի շարք շրջաններում դեռ թույլ են արմատացված քաղ[illegible] բերը: Իբրև մասսաները բամբակաքաղի համար մոբիլիզացիայի յենթարկելու մեթոդներ, կիրառվում են մասսայական աշխատանքի զանազան ձևեր. վորակի նկատմամբ արտադրական խորհրդակցություններ, ծերունիների և պառավների ժողովներ (Գյանջա), խաիրե դրոշներ տալու պրակտիկան, սև ու կարմիր տախտակներ և այլն:

Սալյանի շրջանում Շահումյանի անվան կոլտնտեսության կոլտնտեսականների ընդհանուր ժողովում 4-րդ բրիգադին տրվել են խաիրե դրոշ: Ժողովից հետո, գիշերը, բրիգադը հավաքվել և քննել է, թե ինչպես վերցնեն իրենցից այդ խայտառակ բիծը: Մի քանի որ շարունակ բրիգադում ինքնաքննադատու-

թյունը ծավալելով, բրիգադը հաջողություն է ձեռք բերում բամբակի հավաքման գործում և մյուս բրիգադից առաջ է անցնում:

Բայց դրա հետ միասին շատ շրջաններում կուլտմասսայական աշխատանքը շարունակում է շատ ցածր մակարդակի վրա մնալ: Այնտեղ, ուր թույլ է կուլտմասսայական աշխատանքը, այնտեղ նա սովորաբար փոխարինվում է վարչարարությամբ: Շատ ցածր մակարդակի վրա յե կանգնած կուլտմասսայական աշխատանքը կոլտնտեսականների ինտերնացիոնալ դաստիարակության բնագավառում: Բավական է հիշել Կենտկոմի վորոշումը Լեռնային Ղարաբաղի դասերի մասին, վորոնք դժբախտաբար ժամանակին հաշվի չեն առել հայկական շրջաններում (Շահումյանի և Նարիմանովի):

1. ԿՈՒՍՈՒՍՈՒՑՈՒՄ

«Պրոլետարսկայա Ռևոլյուցիա» ժուռնալի խմբագրությանըն ուղղած ընկ. Ստալինի նամակը — «Բոլշևիզմի պատմության մի քանի հարցերի մասին» — մասսաների ակտիվության ահագին ալիք է բարձրացրել Մարքսի–Էնգելսի–Լենինի–Ստալինի թեորիային տիրապետելու համար մղվող պայքարում, բարձրացրել է կուսկազմակերպությունների զգաստությունը խորթ իդեոլոգիայի թափանցման նկատմամբ և տրոցկիստական ու օպորտունիստական զանազան տեսակի կոնտրաբանդի նկատմամբ:

Մասսայական կուսուսուցման գլխավոր ձևերն են հանդիսանում թեկնածուական խմբակները և ընթացիկ քաղաքականության խմբակները:

1930–31 թ. թ. կուսլուսավորության այս բոլոր ձևերն ընդգրկել են 14,000 հոգի Ադրբեջանի գյուղական շրջաններում և 12,329 հոգի Բաքվի կազմակերպություններում: 1931–32 թվերին Ադրբեջանի շրջաններում ընդգրկված են յեղել 25,834 հոգի, և Բաքվի կազմակերպությունում — 18,061 հոգի: 1932–33 թըվերին Ադրբեջանի 34 շրջաններում ընդգրկված են յեղել 34,146 հոգի, իսկ Բաքվի կազմակերպությունում — 25,617 հոգի: 1933–34 թվերին կուսուսուցման ցանցն աշնան–ձմռան ժամանակաշրջանում ընդգրկել է Ադրբեջանի 23 շրջաններում 47,684 հոգի, իսկ Բաքվի կազմակերպությունում — 24,156 հոգի:

Յեթե մի կողմը թողնենք քանակական ցուցանիշները և հարցին մոտենանք կուսակցական ուսուցման վորակի տեսակետից, ապա նրա գաղափարական մակարդակը դեռևս չի գտնվում պատշաճ բարձրության վրա: Մինչև ընկ. Բերիայի նամակը կուսուսուցման խնդիրներին բավարար ուշադրություն չէյին դարձնում: Միայն այդ նամակից հետո յե, վոր վորոշ տեղաշարժ է կատարվել, մանավանդ Բաքվում:

Կան դրա հետ միասին այնպիսի շրջաններ (Թաուզ, Շամխոր և այլն), վորտեղ մինչև հիմա տեղի ունի կուսուսուցման բացահայտ թերագնահատություն: Սովորաբար շրջանային կազմակերպությունների կողմից մի պատասխան է լսվում. «Ժամանակ չունենք կուսուսուցմամբ զբաղվելու, մենք զբաղված ենք բամբակով»: Դա վնասակար պատասխան է: Կուսուսուցման այսպիսի հակադրումը տնտեսական աշխատանքին խոսում է այն մասին, վոր կուսկազմակերպությունները տեղերում քաղաքականապես բավարար կերպով չեն ըմբռնում կուսակցության անդամների և թեկնածուների գաղափարա – քաղաքական մակարդակի բարձրացման նշանակությունը:

Կուսուսուցման գործն ավելի լավ ապահովելու պայմաններից մեկն է հանդիսանում թեորիապես պատրաստված պրոպագանդիստներ ունենալը:

Օրինակ՝ Շամխորի շրջանում շրջկոմի պրոպագանդիստ ընկ. Բաբայեվն այն հարցին, թե քանի դասակարգ կա Խորհրդային Միությունում, պատասխանում է «Մենք ունենք 5 դասակարգ. բանվորներ, գյուղացիներ, կուլակներ, կոլտնտեսականներ և կապիտալիստների մնացորդներ»:

Շամխորի շրջանի խորհկուսդպրոցի ուսանող Ալեքսանյանը հետևյալ կերպով է վորոշում աջ ու «ձախ» թեքումները. «աջերը գնում են դեպի աջ, ձախերը գնում են դեպի ձախ, իսկ մեր կուսակցությունը գնում է ուղիղ, ուստի մեր գիծն ուղիղ է»:

Գյանջայում ուսուցիչների ընթացիկ քաղաքականության խմբակում յերկու ուսուցչուհիներ բացատրում են, վոր մեզ մոտ քաղաքում դասակարգային պայքարն արդեն վերջացել է, իսկ գյուղում վերջանում է: Ղեկավար Ասկերովը դրան վոչ մի նշանակություն չի տվել և թողել է առանց պատշաճ հակահարվածի:

Այսպիսով կազմկուլտմասսայական և դաստիարակչական աշխատանքի բնագավառում մեր առաջ խնդիր է դրված՝ կատարել Համկոմկուսի (բ) Կենտկոմի հրահանգը կուլտմասսայական աշխատանքի մասին՝ համապատասխան նոր պայմանների և կուսակցության խնդիրների գյուղում, և ընկ. Բերիայի հրահանգը՝ կուսակցական ուսուցման մասին:

2. ՊՐՈՖՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Յեթե 1930 թվի վերջին ԱՍԽՀ պրոֆմիություններում յեղել են 277.348 բանվոր ու ծառայող, ապա 1933 թ. հոկտեմբերին նրանց թիվը հասնում է 355.855 մարդու: Բանվորների ու ծառայողների ընդհանուր թվի մեջ կանայք կազմել են՝ 1931 թվին — 20 տոկոս, 1932 թ. 23.9 տոկոս, 1933 թ. — 26,9 տոկոս:

Լենինյան ազգային քաղաքականության անշեղ կիրառումը արտադրության մեջ է քաշել կադրեր բնիկ ազգություններից և ապահովել է թրքական կազմի անշեղ աճումը։

1931 թ. բանվորների թվում, թուրքեր յեղել են 89766 մարդ, 1933 թ. այդ թիվը աճել ու հասել է 117924 մարդու։ Նավթագործների Միության անդամների կազմի մեջ թուրքերի քանակը 1931 թ. 9350 մարդուց աճել ու հասել է 1933 թ. 12250 մարդու։

16-րդ համագումարից հետո անցած ամբողջ ժամանակաշրջանը բնորոշվում է բանվորական մասսաների ակտիվության անդադար վերելքով, նրանց պայքարի ուժեղացումով՝ արդֆինպլանի գերակատարման համար, սոցշինարարության նոր տեմպերի համար, հարվածայինների քանակի անընդհատ աճումով։ Հարվածայինների քանակն ԱՍԽՀ 52.912 հոգուց աճել ու հասել է 92.500 հոգու։ Հարվածայինների այս քանակական աճման անշուշտ ուղեկցում է աշխատանքի նորանոր սոցիալիստական ձևերի առաջ գալը (հերթա-հանդիպական պլանավորում, մասսայական արշավ տեխնիկական պլանի համար, նավթահորերի մրցություն, 3 վառելիքային գիգանտների՝ Դոնբաս — Բաքու — Գրոզնի սոցմրցում, Բաքու Աստրախան միջանցիկ ուղու և այլն)։ Ամենալավ նավթահորերի և ամենալավ հորափոր վարպետի մրցությանը մասնակցել են. օգոստոսին — 124 նավթահոր 1860 մարդու մասնակցությամբ և, վերջապես, նոյեմբեր ամսին — 199 նավթահոր 3081 մարդու մասնակցությամբ։

Ի՞նչ նոր բան ունենք մենք այժմ պրոֆմիություններում։

Նորը կայանում է նրանում, վոր մենք Ադրբեջանում վերջացրել ենք պրոֆմիությունների ապախոշորացման պրոցեսն այն առումով, վորպեսզի նրանց մոտեցնենք մասսաներին, նրանց յերեսը դարձնենք դեպի արտադրությունը, լծենք պրոֆմիությունները արտադրական խնդիրների կատարման գործին, վերջացրել ենք Աշխժողկոմատի և Սոցապի ֆունկցիաների հանձնումը պրոֆմիություններին։

Խնդիրները մեծ են, ինչ գնով էլ լինի պետք է հաղթահարել այն։ Սակայն մենք պետք է մատնանշենք, վոր մի քանի պրոֆմիություններում կա դեռևս անշարժություն, նրանցից մի քանիսը «հին ձևով» են աշխատում։

Ամեն տեղ չէ, վոր կազմակերպված են վճարման կետեր, չի ապահոված սոցապի գործերի աշխատանքի յուրացումը ֆաբ-գործտեղկոմների կողմից (սոցապում ակտիվ չի ստեղծված)։ Այդ պրոֆմիությունների ղեկավարներն, ըստ յերևույթին, չեն հասկացել մինչև հիմա, թե ինչ է պահանջում ներկայումս կուսակցությունը — պրոֆմիություններից։

3. ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆ

Կոմյերիտմիությունն իր շարքերում հաշվում է 122.512 մարդ, վորոնցից 18,3 տոկոսը աղջիկներ են և 15 տոկոսը կոլտնտեսային յերիտասարդություն։ Կոմյերիտմիության ամբողջ Բաքվի կազմակերպության 60 տոկոսը — բանվոր յերիտասարդությունն է, վորն անմիջապես աշխատում է նավթահանքերում ու գործարաններում։ Կուսակցության այս ահագին պահեստը կոչված է հանդիսանալու կուսակցության ամենակարևոր լծակներից մեկը տնտեսական խնդիրների կատարման գործում։

Կուսակցության Յերկրային Կոմիտեն կոմյերիտմիության մասին պարզորոշ հրահանգ է տվել.

«Այնպես վերակառուցել աշխատանքը կոմյերիտական կազմակերպության ղեկավարման նկատմամբ, վորպեսզի կարելի լինի ճանաչել առանձին – առանձին ամեն մի ակտիվիստ կոմյերիտականի, իմանալ կազմակերպության կարիքները. չզբաղվել կոմյերիտմիության հարցերով առիթից – առիթ պաշտոնական նիստերում, այլ ոգնել կոմյերիտմիությանը ձեռնամուխ լինել նրա աշխատանքների մանրամասնությունների մեջ, ուղղություն տալ և ստուգել առանձին բջիջները և ուշադրությամբ հետեվել, վորպեսզի կուսամբացվածները իսկապես ղեկավարեն կոմյերիտմիության աշխատանքները»։

Առաջին նավթային հնգամյակը յերկու և կես տարում կատարելու համար կոմյերիտմիությունը պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով։

Նավթի համար մղած պայքարում Բաքվի կոմյերիտմիությունը 1932–33 թ. թ. յուրացրել է 71 նավթահոր, 7 նավթահանքային տեղամաս, 7 նավթաթորման գործարան, ու սարքավորում՝ ունենալով նավթի շահագործման 56 բրիգադ, օժանդակ ձեռնարկների 159 բրիգադ։

Մի ամբողջ շարք հարվածային կոմյերիտական բրիգադներ արտադրության մեջ արդֆինպլանի կատարման օրինակներ են ցույց տալիս։

Ադրբեջանի 32 շրջաններում քաղցանցով ընդգրկված են 61.500 կոմյերիտականներ։ Բաքվում 730 խմբակների մեջ ընդգրկված են 16.500 կոմյերիտական և բանվոր յերիտասարդություն։

Բաքվի կազմակերպության ակտիվի մեջ մենք կարող էինք հաշվել նման շատ օրինակներ։

Իսկ ինչպես է կոմյերիտմիության դրությունը գյուղում։ Այնտեղ էլ մենք կարող ենք տեսնել իսկական կոմյերիտական աշխատանքի օրինակներ բամբակի պլանը կատարելու գործում։

Աղդաշում 64 կոլտնտեսային բջիջներ բամբակային պլանի կատարման ակտիվ մասնակցողներն են յեղել։ 1933 թվին բամբակաքաղի ժամանակ կազմակերպված է 18 կոմյերիտական բամբատուրման – վակուում, վորոնք օրեցօր գերակատարել են բամբա

կաքաղի նորմաները 350-ից մինչև 700 կիլոգրամ («Սարիր – Աբադ» Ստալինի անվան կոլտնտեսություն և այլն):

Տուրման – վակուումի վրա աշխատելու համար պատրաստված են 545 կոմյերիտ – շանդիտներ, 48 բրիգադիր և 300 տրակտորիստ կոմյերիտական: Աշխատանքի մասսայական ձևերի գործադրությունը՝ քաղհանյաղները, բերքը պահպանելու պահակները, Քուռի պատերն հեղեղների առաջն առնելու համար, հասարակական բուքսիրը Բաղվից Կարա – Չայա, մի շրջանից մյուս շրջանը, կոմյերիտական Մուստաֆա Մամեդովի աշխատանքի մեթոդների գործադրությունը բամբակային դաշտերում, — ահա կոմյերիտմիության աշխատանքի փայլուն օրինակները: Մի քանի կոմյերիտական խմբակներ մարտականորեն պայքարել են գյուղում տնտեսական աշխատանքի տեղամասերում: Եվ յեթե կոմյերիտմիության առանձին ջոկատները լծվել են տնտեսական աշխատանքի, ապա այդ պետք է վերագրել կուսկազմակերպության կոնկրետ ու ամենօրյա ողնության ուժեղացմանը շըրջանում (Աղդաշ, Նուխի, Գյանջա, Գիլի շրջան և այլն):

Այն, ինչ վոր տվել է կոմյերիտմիությունը հաշվետու ժամանակաշրջանում, իհարկե, դա բոլորովին բավական չէ: Կոմյերիտմիությունը այն հնարավորություններով, վորոնք դըրվում են նրա տրամադրության տակ, տնտեսական և կուլտուրական աշխատանքի թույլ տեղամասերում կոմյերիտական աշխատանքի առանձին օրինակների տարածման առկայության դեպքում, կարող էր զգալիորեն ավելին անել: Այդ թերությունը մենք վերագրում ենք վոչ միայն նրան, վոր կոմյերիտմիության ղեկավարությունը նրա մի շարք օղակներում և նույնիսկ Ադրլենկոմյերիտմիության Կենտկոմի և Բաղվի Կոմիտեյի նախկին ղեկավարության կողմից թույլ է յեղել, այլ նրան, վոր շրջանային կուսկազմակերպությունները ուշադրություն չեն դարձնում կոմյերիտմիության ամենօրյա աշխատանքին:

Ադրկոմկուսի (բ) Կենտկոմը նոյեմբեր ամսին նորացրել է Ադրլենկոմյերիտմիության Կենտկոմի և Բաղվի Կոմիտեյի ղեկավարությունը, վորովհետև Ադրլենկոմյերիտմիության Կենտկոմն ու Բաղկոմը չեն ապահովել անհրաժեշտ ղեկավարությունը, կենդանի օպերատիվ կոնկրետ ղեկավարությունը գրասենյակային – բյուրոկրատական ղեկավարությամբ փոխել են, չեն կարողացել գլխավորել բանվորական ու կոլտնտեսության յերիտասարդության աճող ակտիվությունն ու նախաձեռնությունը տնտեսական առաջադրությունների կատարման համար:

19-րդ «Միջազգային յերիտասարդության օրվա» — այսպիսի կարևորագույն քաղաքական կամպանիայի — անբավարար անցկացնելը Բաղվում ամենալավ կերպով հաստատում է, վոր կոմյերիտմիության ղեկավարությունը կտրված է յեղել մասսաներից և չի կարողացել գլխավորել նրանց անընդհատ աճող ակտիվությունը:

Կոմյերիտմիության ղեկավարության առաջ, սկսած բջիջի ղեկավարությունից և վերջացրած Ադրլենկոմյերիտմիության Կենտրոնական և՝ Բաղվի Կոմիտեների նորացրած ղեկավարությունից, խնդիր է դրված՝ բարձրացնել կոմյերիտմիության աշխատանքը և հասցնել համապատասխան գաղափարա – քաղաքական մակարդակի, գլխավորել առանձին կոմյերիտական խմբակների և բանվորական յերիտասարդության տնտեսագործական ակտիվությունն ու ձեռներեցությունը, տիրապետել արտադրության տեխնիկային, բարձրացնել քաղաքական ու ընդհանուր – կրթական մակարդակը, կոմյերիտմիության մարտական աշխատանքի ամենալավ օրինակները փոխադրել Բաղվի ձեռնարկությունները և գյուղը, ստեղծել իր աշխատանքի բոլոր օղակներում խիստ գործնական պայմաններ, պայքարելով նիստամոլության և ղեկավարության գրասենյակա – բյուրոկրատական մեթոդի դեմ, ուժեղացնել դասակարգային զգաստությունը, անողոք լինել թշնամու վերաբերմամբ, ղեկավարել կոնկրետ ու օպերատիվ կերպով, քիչ զբաղվել շաղակրատությամբ, ամուր հիշել այն, ինչ ասել է ընկ. Ստալինը հարվածային կոլտնտեսականների համագումարում. «Ում շատ է տրվում, նրանից էլ շատ է պահանջվում»:

Համլենկոմյերիտմիության Կենտկոմի լոզունգը — «Ապրել կուլտուրապես, աշխատել արտադրողաբար» — պետք է թափանցի ամեն մի կոմյերիտականի մեջ ձեռնարկությունում, գործարանում և կոլտնտեսությունում:

4. ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Հիմնական քաղաքական հանրագումարը խորհուրդների աշխատանքի բնագավառում 1932–33 թ. թ. ընթացքում հանդիսանում է նրանց, վորպես պրոլետարական դիկտատուրայի օրգանների դերի զգալի ուժեղացումը:

Խոսելով հանրապետության մեջ խորհրդային իշխանության ծավալման մասին, անհրաժեշտ է մի քանի խոսք ասել Բաղխորհրդի մասին, վորպես խոշորագույն խորհուրդներից մեկի, վոչ միայն Ադրբեջանում, այլև Անդրկովկասում, ԽՍՀՄ առաջավոր խորհուրդներից մեկի մասին:

Կուսակցությունը ղեկավարելով Բաղվի խորհուրդին, ամենօրյա օպերատիվ ոգնություն հասցնելով նրան, արմատապես փոխել է Բաղվի տեսքը:

Սակայն, յելնելով Բաղխորհրդի ունեցած հնարավորություններից (նյութական – տեխնիկական բազան, խորհրդային աշխատողների կադրերը), մենք միևնույն ժամանակ պետք է նշենք, վոր Բաղխորհուրդը կարող էր իր ակտիվում էլ ավելի նվաճումներ ունենալ: Դեռ բավականաչափ ուշադրություն չի դարձրել նա Ադրբեջանի գյուղին: Բաղխորհուրդը, դժբախտաբար, իր դըրական աշխատանքի փորձը չի հաղորդել Ադրբեջանի գյուղում

չատ թույլ դրված խորհրդային աշխատանքին: Բաքխորհրդի աշխատանքի օրինակներն անբավարար կերպով են ժողովրդականացվում շրջաններում:

Մենք քիչ գյուղխորհուրդներ չունենք, վորոնք մասսայական քաղաքական աշխատանքի և լայն կոլտնտեսական ակտիվի դաստիարակման օրինակներ է ցույց տվել բամբակի, կոլտնտեսային ունևոր կյանքի համար մղած պայքարում: Այդպիսի գյուղխորհուրդների շարքը կարելի յե դասել Բեյուքբեյլուի, Մուղանլիքենդի, Պիրշիվանի (Զանգելան), Ցենիտջայի (Աղդաշ), Տախտվանի, Բեյհմանլարի (Կարյագինո), Ալի Արադի (Ջաքաթալա), Աղամալուի, Պուշկինսկու (Բեյլասուար), Սարքյարի, Ջիյաթլուի (Գյանջա) գյուղխորհուրդները:

Սակայն ընդհանուր առմամբ Բաքխորհրդի և գյուղխորհուրդների աշխատանքը պետք է ընդունել, վոր դեռ շատ թույլ է, չի ներգրավված ակտիվը, գրեթե անկենդան են գյուղխորհուրդների սեկցիաները, աշխատանք չի տարվում պատվիրակային խմբակներին միջև:

Խորհուրդների թույլ աշխատանքի հիմնական պատճառը բացատրվում է գլխավորապես գյուղխորհուրդների աշխատանքի պատշաճ ղեկավարության բացակայությամբ՝ կուսակցության շրջկոմների և շրջգործկոմների կողմից: Շատ գյուղխորհուրդներ աղտոտված են դասակարգային խորթ տարրերով:

Օրինակ, Աղդաշի շրջանի Ցենիտջայի գյուղխորհուրդից վըռնդվել են 18 մարդ՝ դասակարգային – խորթ տարրեր:

Բերդի ու Քյուրդամիրի գյուղխորհուրդների զեկուցումների առթիվ 1933 թ. մայիսին ընդունված վորոշման մեջ Համկոմկուսի (բ) Անդրերկոմի տված ցուցմունքները չեն կատարվում շրջկոմների ու շրջգործկոմների կողմից:

Առանց սխալվելու կարելի յե ասել, վոր կուսակցության շրջկոմներից շատերը չեն լսում շրջգործկոմների, գյուղխորհուրդների զեկուցումները, չեն թափանցում խորհուրդների աշխատանքի մեջ, մոբիլիզացիայի չեն յենթարկում խորհրդային ու կոլտնտեսային հասարակության ակտիվը: Սեկցիաների աշխատանքը շատ հաճախ փոխարինվում է ձևական բյուրոկրատիկ մեթոդով, միլիցիոներների միջոցով վարչարարությամբ, քիչ է պատահում, վոր գյուղխորհուրդում գյուղխորհրդի անդամների հաշվառը լինի և այլն:

Խնդիրը կայանում է նրա մեջ, վորպեսզի մեր խորհուրդները դարձնել պրոլետարիատի դիկտատուրայի ամուր, իսկական որգանները գյուղում, խորհրդային ու կոլտնտեսային հասարակությունը մոբիլիզացիայի յենթարկել՝ մեր գյուղը բարեկարգելու համար, կոլտնտեսային գյուղացիության կուլտուր – կենցաղային դրությունը բարելավելու համար, խորհրդային աշխատողների կադրեր պատրաստելու համար, խորհրդային ապարատը դասակարգային – խորթ տարրերից մաքրելու պայքարի համար, ազնիվ կոլտնտեսականներից խորհրդային կադրեր աճեց-

նելու համար: Այդ բոլորն Ադրբեջանի կուսկազմակերպության կարևորագույն խնդիրներից մեկն է մնում մոտակա ժամանակաշրջանում:

5. ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԱՆԱՆՑ ՄԵՋ

Կուսակցությունը զգալի աշխատանք է ծավալել Ադրբեջանի աշխատավոր կանանց ներգրավելու համար առաջին հնգամյակի և յերկրորդ հնգամյակի առաջին տարվա պլանը հաջող կատարելու համար մղած պայքարին:

Բերեմ մի քանի ցուցանիշներ, վորոնք բնորոշում են կանանց աշխատանքի արմատացումը ԱՍԽՀ ժողովրդական տնտեսության արտադրության մեջ (բացի Ադնեֆթից ու զբաղկոոպերացիայից): Մենք հետևյալ աճումն ունենք. 1931 թվին արդյունաբերության մեջ զբաղված եյին — 61,940 (բանվորների ընդհանուր թվի 20 տոկոսը), նրանցից թրքուհիներ —8.031: 1932 թվին — 70.094 (23,3 տոկոս), նրանցից թրքուհիներ — 9.928: 1933 թվին — 92,608 (26,9 տոկոս), նրանցից թրքուհիներ — 15,198:

Նավթային արդյունաբերության մեջ 1931 թվին 502 բանվորուհի կար, 1932 թ. — 7993, նրանցից թրքուհիներ — 875, առ 1-ն հոկտեմբերի 1933 թ. — 14,500, նրանցից թրքուհիներ— 5.102:

Զբաղկոոպերացիայում աշխատում են 15.682 բանվորուհի, 1932 թվի տվյալներով բանվորների ընդհանուր թվի 56,2 տոկոսը. դրանց մեծ մասը թրքուհիներ են:

Ժողովրդական ամբողջ տնտեսության մեջ 1933 թվին թրքուհիների մասնակցությունը — 29,92 տոկոս էր, մինչդեռ թրքուհիների մասնակցությունն արդյունաբերության մեջ 1920 թվին մի տոկոս էլ չէր կազմում: Պրոլետարիատի դիկտատուրայի որգաններում թրքուհիների մասնակցությունը տարեց տարի աճում է: Յեթե 1925 թ. խորհուրդների անդամներ յեղել են 6,3 տոկոս, ապա 1931 թվին, վերջին ընտրություններում, կազմում է — 18,4 տոկոս, Բաքխորհրդում — (105 թրքուհիներ), խորհուրդների կին անդամների ընդհանուր թվի 27 տոկոսը:

1931-32 թ. թ. անգրագիտությունը վերացրել են — 180.299 թրքուհի, 1932-33 թ. թ. — 136.652: Թուրք աղջիկները 31-32 թ. թ. տարրական դպրոց են ներգրավվել — 71.953, իսկ 32-33 թ. թ. — 89.859:

Այս հաջողությունները գնահատելու համար բավական է հիշել, թե անցյալում ինչ էր ներկայացնում իրենից թրքուհին:

Ականատեսները գիտեն, վոր 1917 թ. Բաքվում անդրկովկասյան մուսուլմանների համագումարի ժամանակ, համագումարին մասնակցող հոգևորականությունն իբրև բողոքի նշան վայրենի սկանդալ սարքեց միմիայն նրա համար, վոր յերկու թրքու-

հի ուսուցչուհիներ համագումար եկին յոկել առանց չադրայի։ Հոգևորականությունը «Մուսուլմանությունը Ռուսաստանում» (հետագայում «Իտտիհադ» կուսակցություն) ահաբեկչական կուսակցության ղեկավարությամբ մինչև իսկ փողոցային հարծանք կազմակերպեց յեվրոպական կապույտ հագնող կանանց դեմ, Բաքվի փողոցներում հանում էին բարձր կրունկավոր տուֆլիները։ Մինչև հեղափոխությունը գրագետ թրքուհիներ հատ ու կենտ էին, և այն էլ բուրժուական շրջանից։

Ահա բանվորուհիների և մասնավորապես թրքուհիների անեցման ցայտուն օրինակները, նրանց հերոսական պայքարը վոչ միայն իրենց ազատության, այլև տեխնիկային տիրապետելու ճանապարհին։

Անցյալում ապադրական բանվորի կին Լեյլա Մամեդբեկովան չադրան դեն է շպրտել 1928 թվին, այժմ հրահանգիչ–օդաչու յե։

Նուրիևան ատամներում չադրա յեր կրում։ 1924 թվին, վերացրել է անգրագիտությունը, այժմ օդաչու յե։

Ֆիրուզա Բերիմովան չադրան վերցրել է 1925 թվին, կուսակցության մեջ է մտել, ավարտել է միջնակարգ դպրոցը, և նավթային արդյունակադեմիան, այժմ նավթագործ – ինժեներ է։

Անցյալում չքավորուհի, անգրագետ Զեյրան Կուրբանովան, այժմ հարվածային կոլտնտեսուհի յե, առաջ է քաշվել Ալի – Բայրամլուի Կարաբաղլիի գյուղխորհրդի նախագահ։

Կարելի յե դեռ այդպիսի շատ օրինակներ բերել։

Կանանց վերադաստիարակելու նկատմամբ կատարած հսկա աշխատանքում պատմական դեր է խաղացել Ալի – Բայրամովի անվան կանանց կենտրոնական ակումբը։ Ակումբների, խմբակների, դասընթացների, դպրոցների տեխնիկումների մեծ ցանցի միջոցով, անմիջապես տներում տարած աշխատանքի միջոցով, հազարավոր կանայք են անցել, վորոնք այժմ տիրապետում են տեխնիկային արտադրության մեջ, կոլտնտեսությունում, ֆաբրիկում, աշխատում են գիտական ֆրոնտում։

Կուսակցությունն ամեն ինչ անում է, վորպեսզի ազատագրի թրքուհուն։ Տասնյակ հազարավոր յերեխաներ դաստիարակվում են մանկամսուրներում և մանկապարտեզներում։

Բայց մենք չպետք է պարծենանք և հանգստանանք ձեռք բերած հաջողություններով։ Դեռ մեծ աշխատանք է մնում։

Կանանց ազատագրման հարցն այժմ էլ ակտուալ նշանակություն ունի, մանավանդ մեր գյուղում։

Ադրբեջանի խուլ շրջաններում կանանց ազատագրման, նրանց խորհրդային աշխատանքի առաջ քաշելու և կուլտուրական կյանքին հաղորդակից դարձնելու գործը չափազանց ծանր պայմաններում է կատարվում։ Այդ տեղամասում դասակարգային թշնամին կատաղի դիմադրություն է ցույց տալիս։

Այն փաստը, վոր խորհուրդների նախավերջին ընտրություններին գյուղխորհրդի նախագահներ են ընտրվել 116 թրքուհի, իսկ վերջին ընտրություններում մենք գյուղխորհուրդների նախագահների կազմում ընդամենը 34 կին ունենք, և այժմ դրանք հաշվվում են ընդամենը հինգ մարդ — լուրջ նշան է հանդիսանում այն բանի, թե ինչպես իջնում է կնոջ ղեկավար դերը խորհուրդում և ինչպես այդ տեղամասում թշնամին ճարպկությամբ է գործում։ Դժբախտաբար այն խոշորագույն փաստն աննկատելի յե անցել մեր ղեկավար օրգանների կողմից, վորոնք, ինչպես և մենք, հավասար չափով պատասխանատու յենք այդ բանի համար։

Մեր առաջ, Ադրբեջանի կուսկազմակերպության առաջ կանգնած խնդիրը կայանում է նրանում, վորպեսզի կանանց միջեվ տարվող աշխատանքը բարձրացնել գաղափարա – քաղաքական բարձր աստիճանի։ Առաջվա պես ամենայն սրությամբ հարց է դրված կնոջ աշխատանքն արմատացնել արտադրության մեջ, աճեցնել բանվորուհիների վորակյալ կադրեր։ Դժբախտաբար աշխատանքի այդ տեղամասը նեղ տեղ է մեր ղեկավար կուսակցական, և մանավանդ, տնտեսական կազմակերպությունների աշխատանքում։

Լ. Պյատակովի անվան գործարանում 3·000 բանվորից — 680 բանվորուհի յեն, նրանցից թրքուհիներ — 28, ըստ վորում վորակյալ աշխատանքի մեջ գտնվում է ընդամենը միայն 70 բանվորուհի։

Ստալինի անվան գործարանում 3200 բանվորներից — 898 կին է։ Նրանցից թրքուհիներ — միայն 17 են, և այն էլ սակավ վորակյալ աշխատանքներում։

Ղեկավար կազմակերպության առաջ ամբողջ հասակով կանգնում է դասակարգային զգաստության ուժեղացման խնդիրը կնոջ ազատագրման համար մղվող պայքարի ֆրոնտում, մանավանդ գյուղում, անխնա պայքար մղելու ֆրոնտում նրանց դեմ, ովքեր ամենափոքր չափով անգամ փորձում են իջեցնել կնոջ դերը սոցշինարարության մեջ, ով արգելակներ է դնում նրա աճման ուղու վրա։ Այդ մարդկանց մենք կհիշեցնենք ընկ. Ստալինի՝ հարվածային – կոլտնտեսականների համագումարում ասած խոսքը. — «կինը կոլտնտեսությունում մեծ ուժ է»։

XII. ՀԱՆՈՒՆ ԼԵՆԻՆՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՔՐՈՒԹՅԱՆ

Ադրբեջանում լենինյան ազգային քաղաքականության կենսագործման հանրագումարը տալով՝ պետք է նշել, վոր Ադրբեջանը դարձել է Խորհրդային մեծ Միության աճող տնտեսական կենտրոններից մեկը։ Հետամնաց, նահապետական գյուղատնտեսությունից սոցիալիզմին անցնելու գործում, մի կողմ թողնելով

զարգացման կապիտալիստական ստադիան, վճռական հաջողություններ ենք ունեցել:

Ադրբեջանի բոլշեվիկյան կազմակերպությունը, Համկոմկուսի (բ) Կենտրոնական Կոմիտեյի՝ ընկ. Ստալինի գլխավորությամբ, և Համկոմկուսի (բ) Անդրյերկոմի անմիջական ղեկավարությամբ, հաղթանակորեն ղեկավարում է ազգային հանրապետության սահմաններում սոցիալիզմի կառուցման վերաբերյալ Լենինի ցուցմունքների կենսագործումը: Այդ հաջողությունները հնարավոր են յեղել միայն բոլոր և ամեն տեսակի թեքումների արտահայտությունների դեմ, ինչպես մեծապետական շովինիզմի, այնպես և տեղական նացիոնալիզմի դեմ — Ադրբեջանի կազմակերպության կողմից մշտական, անհաշտ և ամենասուր պայքար մղելու հիման վրա:

Սոցիալիստական շինարարության վճռական հաջողությունների հիման վրա ազգային – կուլտուրական շինարարության հոյակապ ծաղկման պայմաններում, վորքան խղճուկ յեն յերեվում մուսավաթիստների արտահայտությունները «Ադրբեջանի գաղութային վիճակի» մասին, նրա «նվաճման», «կուլտուրայի քայքայման» մասին և նման վողորմելի զրպարտությունները:

Ի՞նչ և ո՞ւմ է պաշտպանում մուսավաթիստական եմիգրացիան:

Հակահեղափոխական «Պրոմեթեյ» ժուռնալի համարներից մեկում վոմն Ցավուշ գրում է. «Կովկասի ժողովուրդների ազգային շարժումը սկզբից և յեթ խորթ է յեղել ֆինանսիստների ամեն տեսակի կոմբինացիաներին: Ընդհակառակը, այդ ազգային շարժումը հաճախ դժվարացել է հենց իրենց՝ տարյերկրյա ֆինանսիստների միության կողմից, այն ֆինանսիստների, վորոնք ամեն քայլափոխում բոլշեվիկների հետ են միացել»:

Այս խոսքերով մուսավաթիստները փորձում են սվաղել այն փաստը, վոր իրենք իմպերիալիզմի վարձու գործակալներն են, վորը նրանց կերակրում է պատրաստվող ինտերվենցիայի նպատակների համար: Դա բոլորովին եվ պատահական չե, այլ ամբողջապես և լրիվին հանդիսանում է մուսավաթական կուսակցության քաղաքականության պարունակությունը՝ նրա գոյության ամբողջ ընթացքում, մասնավորապես քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանում:

1919 թվի նոյեմբերի 1-ին մուսավաթական կառավարության պատվիրակության կողմից Պարսկաստանի հետ կնքած պայմանագրի մեջ, այն Պարսկաստանի, վորի թիկունքում կանգնած եր բրիտանական իմպերիալիզմը, վորը հենց նոր եր Պարսկաստանն իր գաղութը դարձրել, 4-րդ կետում մատնանշված է, վոր «Ադրբեջանի հանրապետությունն Անգլիայի իսկական օգնության կարիքն է զգում՝ Ադրբեջանի հանրապետության անկախությունը ճանաչելու, նրա ամբողջականության և անկախության նկատմամբ ամեն տեսակի վտանգություններից

նրան անվտանգ դարձնելու և նրա քաղաքական, տնտեսական կուլտուրան ու ռազմական ուժերի զարգացման նպատակով, այն ձևով, ինչ ձևով այդ օգնությունը ցույց է տըրվում Պարսկաստանին»:

Մուսավաթական կառավարության ֆինանսների մինիստրը, իր ճառի մեջ ասել է. «Կառավարության ամսական ծախսերն արտահայտվում է մոտավորապես 135 միլիոն ռուբլու սահմաններում, վորից մոտ 60 միլիոն ռուբլին ծախսվում է նավթային արդյունաբերությունը ֆինանսավորելու համար, մոտ 30 միլիոնը տրվում է անգլիական հրամանատարությանը և մոտ 50 միլիոնը ծախսվում է պետական ընթացիկ ծախսերի համար»:

Այսպես ուրեմն, «անկախ» մուսավաթական հանրապետության բյուջեյի 44,4 տոկոսը տրվում եր նավթային կապիտալին, 26 տոկոսը անգլիական իմպերիալիստներին և միայն 29,6 տոկոսը յերկրի սեփական կարիքներին:

Եվ ի՞նչպես այս ամենից հետո հավատալ, վոր մուսավաթական հակահեղափոխական շարժումը — «Սկզբից և յեթ խորթ է յեղել ֆինանսիստների կոմբինացիաներին»:

Մուսավաթական հակահեղափոխության մեջ մեծ ատելություն և անզոր չարախնդություն են առաջ բերում լենինյան ազգային քաղաքականության հաջողությունները: Առանձնապես այդ ռազմատենչ նացիոնալիզմի գաղափարախոսներին կատաղեցնում Ադրբեջանի մանր ազգությունների միջև սոցիալիստական շինարարության գծով տարած աշխատանքը:

«Իստիգլալ»-ի 1933 թվի հոկտեմբերի 1-ի № 41-ում տպված է. «Ռուսաստանը, վորպեսզի այդ ազգերին (այսինքն Անդրկովկասի ազգություններին) թուլացնի, բացի ռուս և հայ վերաբնակիչներից, Վրաստանը, Ադրբեջանը և Հյուսիսային Կովկասը 5 և 10 ազգային կտորների յե բաժանում և նոր ազգեր գտնում: Տարօրինակ է այդ, վոր այդ բոլոր նոր ազգությունները հայտնաբերվում են հարավ – արեվմտյան մասում, Կասպիի ափերին և Բաքվի ու Լենքորանի միջեվ»:

Թալիշները, քրդերը, ասորիները, լեռնային հրեյաները և մյուս, մուսավաթիստների կարծիքով «նորագյուտ», ազգերը, միայն խորհրդային իշխանություն հաստատելուց հետո յեն կարողացել ազատ շունչ քաշել այն հետապնդումներից ու վայրագ ասիմիլյացիայից, վորը նրանց նկատմամբ գործադրում եր մուսավաթական կառավարությունը, վոր գրչի մի շարժումով նրանց թուրքեր եր «դարձրել»:

Այդ բանում մուսավաթիստները ռուսական ցարիզմի, ժողովուրդների, դրանց թվում և թուրքերի այդ խեղդահամ անողի հավատարիմ աշակերտներն են հանդիսացել:

Կապիտալիստական տարրերի մնացորդների կատաղի դասակարգային պայքարն իր արտահայտությունն է գտել պրոլետարական ինտերնացիոնալիզմի դեմ, լենինյան ազգային քաղաքականության դեմ յեղած մի շարք յելույթների մեջ:

Դաշնակցական թշնամին՝ իր ծուղակը ձգելով առանձին անկայուն կոմունիստներին, փորձել է Ադրբեջանի ինտերնացիոնալ աշխատավոր մասսաների միջև պառակտում սերմանել: Կազմակերպության առանձին օղակներ միշտ չէ, վոր ժամանակին ու պատշաճ հակահարված են տվել շովինիստական և ազգայնական յելույթներին:

Տեղի յեն ունեցել ինչպես մեծապետական, այնպես և ազգայնական բնույթի մի շարք յելույթներ, օրինակ, Կարա – Ջալա խորհտնտեսության մեջ, — բանմասրաժնում, սիստեմատիկաբար թուրքերին հեռացրել են: Քաղբաժինը այդ բանը հայտնաբերել է և հանցավորներին ըստ արժանավույն պատժել:

Սակայն յեն և տեղական նացիոնալիզմի ուժեղացող արտահայտությունները: Բավական բնորոշ է Ինք. Լեռ. Ղարաբաղի մարզի նախկին ղեկավարության գործը, վորը հանձինս մարզկոմի նախկին քարտուղար Կարո Գրիգորյանի և մարզ. ՎՀ նախագահ Սարգսյանի ստեղծել է մի ամբողջ «թեորիա» դաշնակ և մուսավաթական հակահեղափոխական կուսակցությունների դեմ հատուկ պայքարի անհրաժեշտ չլինելու մասին, վոր չափով վոր, դեհ, պայքար է մղվում կուլակության դեմ: Այդ նեխված «իդեայի» հիման վրա ԻԼՂՄ նախկին ղեկավարությունը հակահարված չի տվել հակահեղափոխական դաշնակների ու մուսավաթիստների՝ միջգյուղային հողային վեճերն ազգային հրահրելու համար ոգտագործելու փորձերին, մոբիլիզացիայի չի յենթարկել մասսաներին մեծապետական շովինիզմի և տեղական (հայկական և թուրքական) նացիոնալիզմի դեմ պայքարելու, չի ղեկավարել մասսաների ինտերնացիոնալ դաստիարակությունը:

Ղուբայի շրջանում իր ժամանակին բաց է արվել լենինյան ազգային քաղաքականության ծուռ, վորն արտահայտվել է լեռնային հրեաների «Կրասնայա Սլոբոդա» արվարձանում տնտեսական և կուլտուրական շինարարության անգիտանելու մեջ: Հակահրեական արարքները պատշաճ հակահարված չեն ստացել Ղուբայի շրջանի նախկին ղեկավարության կողմից:

Նացիոնալիզմը յերբեմն ապաստան է գտնում և և խորհրդային գրական միջավայրում և պատշաճ հակահարվածը չի ստանում գրողների կազմկոմիտեյի կողմից:

Գրողների կազմկոմիտեյի մեջ, չնայած նրա կազմակերպչական միասնական կառուցվածքին, մենք նկատում ենք թուրք, հայ և ռուս գրողների իրարից կտրվածություն, նրանց միջև ստեղծագործական զոդվածության բացակայություն և ազգային սեկցիաների շրջանակներում պարփակվելու ցանկության արտահայտություն:

Նացիոնալիստական տենդենցները ամենից ավելի ցայտուն կերպով են արտահայտվում լեզվական շինարարության ասպարեզում: Մի կողմից գավառականություն, տեղականություն՝ տերմինոլոգիայում, մի քանի գրողներ, դրանց թվում և յերիտա-

սարդ գրողներ, նախապատրաստվում են Ադրբեջանի աշխատավոր ընթերցողների հետ խոսել հին խալիֆաթական Թյուրքիայի լեզվով, նրա բոլոր արաբիզմով և պարսիզմով (Դավուդ, Ցեվդի և Իզմայիլ Հաֆիզ): Իսկ մի քանիսը, բանաստեղծ Սանիլիի նմանները, լեզուն պարզացնելու հարցը, ինչպես դա տեղի յե ունեցել Ուկրայնայում, ոգտագործում են գյուղը քաղաքից կտրելու նպատակով, հանրածանոթ ինտերնացիոնալ տերմիններն ու բառերը փոխարինելով խորապես արխայիկ, նեղ շրջանային բառերով, տերմիններով ու դիալեկտներով:

Յերաժշտական կրթության ասպարեզում մինչև այժմ դեռ չեն վերացված պահպանողական տենդենցները, վորոնք արտահայտվում է ազգային ձևերը բացարձակ դարձնելու, նոտային սիստեմը և առաջավոր յերաժշտական տեխնիկան անգիտանելու մեջ:

Մեծապետական և տեղական նացիոնալիստների այդ բոլոր և նման փորձերին՝ Ադրկոմկուսի (բ) Կենտկոմն ու Ադրբեջանի կազմակերպությունը համապատասխան հակահարված են տալիս:

Պայքարն ազգային հարցում յեղած թեքումների դեմ ամբողջ Ադրբեջանի կազմակերպության հիմնական խնդիրներից մեկըն է մնում: Մինչև այժմ իր ուժի մեջ է մնում ընկ. Ստալինի՝ կուսակցության 16-րդ համագումարում ասած խոսքերը.

«Այդ թեքումներն այնքան նկատելի և համառ չեն, վորքան «ձախ» կամ աջ թեքումը: Նրանց կարելի յեր անվանել սողացող թեքումներ: Բայց դա դեռ չի նշանակում, թե նրանք գոյություն չունեն: Վոչ, նրանք գոյություն ունեն, և վոր գլխավորն է, — աճում են: Դրանում վոչ մի տարակուսանք լինել չի կարող: Չի կարող տարակուսանք լինել, վորովհետև դասակարգային պայքարի սրման ընդհանուր մթնոլորտը չի կարող կուսակցության մեջ իր արտացոլումն ունեցող ազգային տարաձայնությունների վորոշ սրվածության չհանգել»:

Ռուսաստանում հենց պրոլետարական հեղափոխության շընորհիվ է, վոր հնարավոր է դարձել ռուսական ռազմա – ֆեոդալական իմպերիալիզմի դարավոր շղթաների փշրումն ու ազգային ճնշումից ազատագրումը.

«Առանց դրան, — գրում է ընկ. Ստալինը, — անհնար կլիներ ամրապնդել խորհրդային իշխանությունը, իսկական ինտերնացիոնալիզմ սերմանել ու ժողովուրդների աշխատակցության այն հիանալի կազմակերպությունն ստեղծել, վորը կոչվում է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն և վորը ժողովուրդների համաշխարհային միասնական տնտեսության մեջ ապագա միացման կենդանի պատկերն է հանդիսանում»:

Ռուսաստանում պրոլետարական հեղափոխությունից դուրս չէր կարելի վերացնել Անդրկովկասյան ժողովուրդների միջև

յեղած ազգային խտրությունը, վորը մշակվել է ցարիզմի ու բուրժուազիայի տիրապետության կողմից, և որինակելի, Անդրկովկասյան Ֆեդերացիա ստեղծել, հսկայական պայքար ծավալել փաստական անհավասարությունը վերացնելու համար՝ մի շարք ինդուստրիալ օջախների հիման վրա ազգային հանրապետություններում:

Այդ պատճառով՝ ազգային հարցում յերկու ճակատի վրա պայքար մղելը պետք է համարված լինի միայն նպատակադրությամբ — ամրապնդել պրոլետարիատի դիկտատուրան:

Յես վերջացնում եմ, ընկերներ:

Ի՞նչի մասին են խոսում այս յերկու տարում բոլոր ասպարեզներում մեր կատարած պրակտիկ աշխատանքների արդյունքները:

Այդ արդյունքները վկայում են մեր աշխատանքի մեջ յեղած մեծ հաջողությունների մասին, շնորհիվ անձնական մեծ ոգնության, վորը ցույց է տալիս ընկ. Ստալինն Անդրկովկասի ղեկավարությանն ու Ադրկոմկուսի (բ) Կենտկոմին (ծափահարություններ):

Այդ հաջողությունները մենք ձեռք ենք բերել շնորհիվ նրան, վոր բոլշևիկորեն պայքարել ենք Համկոմկուսի (բ) Կենտկոմի 1931 թվի հոկտեմբերի 31-ի պատմական վորոշումը կյանքում կիրառելու համար:

Այդ հաջողությունները մենք ձեռք ենք բերել շնորհիվ Յերկոմի բոլշևիկյան ղեկավարության, վորը կարողացել է վճռականորեն վերացնել Անդրկուսկազմակերպության շարքերում տեղի ունեցած հակակուսակցական, հիվանդոտ յերևույթները—գրուպովշչինայի, «ատամանշչինայի» տարրերը, յուրահատուկ «Անդրկովկասյան» փտած տրադիցիաների տարրերը՝ դեպի գործնական աշխատանքը և առանձին աշխատողների նկատմամբ յեղած մոտեցման գործում:

Այդ յերևույթների դեմ անողոք պայքար մղելու հետևանքով՝ արմատախիլ են արվել գրուպովշչինայի և «ատամանշչինայի» տարրերը, և դրանում մեզ հսկայական ոգնություն է ցույց տվել Անդրյերկոմն՝ նրա փորձված և մարտական ղեկավար ընկ. Լավրենտիյ Բերիայի գլխավորությամբ (ծափահարություններ):

Մեր ձեռք բերած հաջողությունները հաստատապես ամրապնդելու և պատվով դեպի նոր մարտերի ու հաղթանակների գնալու համար՝ մենք, ինչ կերպ էլ լինի, պետք է ընտանեկանության տարրերը մեր շարքերից անխնայորեն արմատախիլ անելու գիծը շարունակենք:

Մենք պետք է սոցիալիզմի շահերը, կուսակցության շահերը, պրոլետարիատի դիկտատուրայի շահերը բարձր դասենք անձնական փոխհարաբերություններից (ծափահարություններ):

Այդ մասին մենք ասել ենք նաև 1933 թվի սկզբին, ուժեղացնելով պայքարը փտած տրադիցիաների դեմ, «ատամանշչինայի», գրուպովշչինայի, ընտանեկանության դեմ, փոխադարձ յերաշխիքի դեմ, մեր շարքերում դասակարգային զգաստության բթացման դեմ: Յեվ դա մեզ հնարավորություններ է տվել վոչ քիչ հաղթություններ տանելու:

Յես հավատացած եմ այն բանում, վոր Ադրբեջանի կուսկազմակերպությունն էլ ավելի բարձրացնելով իր շարքերի մարտունակությունը, կուսակցության հիմնական գծի համար մղվող իսկական հերոսական պայքարի որինակներ ցույց տալով, բարձր բռնած Լենինի — Ստալինի դրոշը, 1934 վերջին կգնա հաղթական ցուցանիշներով և յերկրին կտա 22 միլիոն տոնն նավթ ու 150 հազար տոնն բամբակ (բուռն ծափահարություններ):

ԱԴՐԿՈՄԿՈՒՍԻ (Բ) XII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՆԱՁԵՎԸ

ԱԴՐԿՈՄԿՈՒՍԻ (Բ) ԿԵՆՏԿՈՄԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ ԸՆԿ. Մ. Ջ. ԲԱԳԻՐՈՎԻ ՀԱՇՎԵՏՈՒ ԶԵԿՈՒՅՑՄԱՆ ԱՌԹԻՎ

Ադրկոմկուսի (բ) 12-րդ համագումարը, լսելով և քննելով ընկ. Մ. Ջ. Բագիրովի հաշվետու զեկուցումն Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի աշխատանքի մասին, Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի քաղաքական և կազմակերպչական գիծը գտնում է ճիշտ և լիովին հավանություն է տալիս նրա գործնական աշխատանքին:

Ադրկոմկուսի (բ) 12 համագումարն արձանագրում է, վոր Համկոմկուսի (բ) լենինյան ճիշտ քաղաքականությամբ, լենինյան Կենտկոմի ամբողջ սոցիալիստական շինարարության գործի կոնկրետ և օպերատիվ ղեկավարումը մեծ Ստալինի գլխավորությամբ, ապահովել են սոցիալիզմի համաշխարհային-պատմական հաղթանակները ԽՍՀՄ-ում և ամրացրել են ԽՍՀՄ-ի դիրքերը միջազգային արենայում:

Խորհրդային Միությունն ավարտել է սոցիալիստական էկոնոմիկայի հիմքի կառուցումը, ագրարային յերկրից դարձել է ինդուստրիալ յերկիր, աշխարհում ամենախոշոր հողագործության յերկիր, վորն ունի պաշտպանության ժամանակակից հզոր միջոցները, վորը դուրս է յեկել տեխնիկա-տնտեսական տեսակետից ամենաառաջավոր յերկրների առաջին շարքերը:

ԽՍՀՄ-ի այդ համաշխարհային պատմական նշանակություն ունեցող հաջողությունները ձեռք են բերվել կուսակցության գլխավոր գծի ճիշտ կենսագործման, յերկրի ինդուստրացման և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման քաղաքականության անհողդողդ, հետևողականորեն կիրառման հիման վրա, դասակարգային թշնամու և նրա գործակալության — աջ օպորտունիզմի դեմ մղած կատաղի պայքարում, հակահեղափոխական տրոցկիզմի ջախջախման, «ձախ» շեղումների, Սիրցով-Լոմինաձեյի աջ — «ձախ» բլոկի դեմ տարված պայքարի հիման վրա, կուսակցության գլխավոր գծից կատարվող թեքումների նկատմամբ ցուցաբերվող հաշտվողականության դեմ մղված վճռական պայքարում:

Ադրկոմկուսի (բ) 12-րդ համագումարն արձանագրում է, վոր Համկոմկուսի (բ) Կենտկոմի 1931 թ. հոկտեմբերի 31-ի պատմական վորոշման և կուսակցության առաջնորդ ընկ. Ստալինի անձնական ցուցմունքների կատարման հիման վրա, Ադրբեջանի կուսկազմակերպությունը Համկոմկուսի (բ) 17-րդ համագումարն է գնում ԱՍԽՀ-ում սոցիալիստական շինարարության բոլոր ասպարեզներում ձեռք բերած խոշոր հաղթանակներով:

Դասակարգային թշնամու և նրա գործակալության դեմ, դաշնակցական — մուսավաթական հակահեղափոխական թափթփուկների դեմ տարված անխնա պայքարի, հանուն լենինյան ազգային քաղաքականության ճիշտ կենսագործման՝ մեծապետական շովինիզմի և տեղական թուրքական նացիոնալիզմի դեմ մղված հետևողական պայքարի հետևանքով, — Ադրբեջանի բոլշևիկները զգալի հաջողությունների յեն հասել Անդրֆեդերացիայի հետագա ամրապնդման գործում, միաժամանակ զարգացնելով հանրապետությունների տնտեսական նախաձեռնությունն ու ինքնագործունեությունն Անդրկովկասի ժողովուրդների ինտերնացիոնալ միության և համերաշխության գործում:

Ադրբեջանի բոլշևիկները 1933 թվականի նավթահանման ծրագիրը կատարել են հաջողությամբ, յերկրին տալով 15,326 հազար տոնն նավթ—հիմնական ծրագրից մեկ միլլիոն տոնն ավելի, և յերեք միլլիոն տոնն ավելի քան 1032 թվականին: Ադրբեջանի բոլշևիկները 1933 թվականին յերկրին տվել են 131 հազար տոնն բամբակ գերակատարելով բամբակի պլանը:

Ադրկոմկուսը (բ), Համկոմկուսի (բ) Անդրյերկոմի ղեկավարությամբ, վոչնչացնելով «գրուպավոյշչինայի» և «ատամանշչինայի» մնացորդները, գալիս է Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների 7-րդ համագումարին — միասնական, ինչպես յերբեք, միաձույլ, ամուր համախմբված Համկոմկուսի (բ) Անդրյերկոմի շուրջը, իր սիրելի առաջնորդ և ուսուցիչ ընկեր Ստալինի շուրջը, վորը յերկիրն ու կուսակցությունը Համկոմկուսի (բ) 17-րդ համագումարին է բերել խոշորագույն հաղթանակներով՝ սոցիալիստական շինարարության բոլոր տեղամասերում: Այդ հաղթանակները լենինյան ազգային քաղաքականության հաղթանակներն են հանդիսանում:

Սոցիալիստական շինարարության հաջողություններն ԱՍԽՀ-ում հետագա առաջխաղացման համար նոր հսկայագույն հնարավորություններ են բաց անում: Ամրապնդվել են կուսակցական կազմակերպությունները քաղաքում և գյուղում: Կուսակցական կազմակերպության մեջ առաջ են յեկել և աճել բոլշևիկյան կադրեր: Բանվորների և կոլտնտեսականների մեջ աճել է ամենալայն ակտիվ: Այս բոլորը պայմաններ է ստեղծում և խնդիր է առաջադրում 1934 թ. այնպես կազմակերպել աշխատանքը, վորպեսզի ԱՍԽՀ-ն դառնա խորհուրդների յերկրի առաջավոր հանրապետությունը:

1. 1934 թվականին Ադրբեջանի նավթային արդյունաբերությունը յերկրին պետք է տա 22 միլիոն տոնն նավթ — 45 տոկոսով ավելի, քան 1932 թվականին:

Համագումարն ընդգծում է, վոր այս մարտական ծրագրի կատարումն ապահովող հիմնական պայմանն է հանդիսանում Ադնեֆթի վողջ աշխատանքի արմատական վերակառուցումը, վճռական պայքարը՝ ղեկավարության գրասենյակային – բյուրոկրատական մեթոդների դեմ, ոպերատիվության և կոնկրետության ամրացումն աշխատանքի մեջ, կադրերի ճիշտ դասավորումը, առաջավոր տեխնիկայի յուրացումն ու արմատացումը, Ադրբեջանի նավթային արդյունաբերության հետագա տեխնիկական վերակառուցումը և նոր նավթային տարածությունների հաջող յուրացումը: Հատուկ ուշադրություն պետք է կենտրոնացվի հորատման — նավթարդյունաբերության կարևորագույն տեղամասի վրա, վորը դեռ մինչև ներկա ժամանակս էլ Ադնեֆթի աշխատանքներում ամենահետամնաց ճյուղն է հանդիսանում:

1934 թվականի խնդիրը պետք է լինի ամենակարճ ժամանակամիջոցում հորատման գոյություն ունեցող հետամնացության հաղթահարումը՝ հորատման, հատկապես խորունկ հորատման տեխնիկային տիրապետելու, դուրատիրման տնտեսության ռացիոնալացման, ինժեներ Կապելյուշնիկովի տուրբոբուրի, Սկվորցովի, Շահնազարովի, Դուդինի և ուրիշների ավտոմատի համարձակ և վճռական կերպով արմատացման հիման վրա, պայքարը ծռումների դեմ, հորատման մեջ վթարների և անարտադրողական պարապուրդների վերացումը:

Պայքարը՝ 22 միլիոն տոնն նավթի համար, 1934 թվականին պետք է Ադրբեջանի ամբողջ կուսկազմակերպության ուշադրության կենտրոնում լինի:

Վճռական պայքար մղելով հանգստության ու բարեհոգության տարրերի դեմ, պլանի իրական լինելու նկատմամբ ոպորտունիստական անհավատության դեմ, Ադրբեջանի կուսկազմակերպությունը պետք է իր բոլոր ուժերը մոբիլիզացիայի յենթարկի 1934 թվականին նավթի վերաբերյալ պլանի անպայման կատարման համար:

2. Ադրկոմկուսի (բ) 12-րդ համագումարն արձանագրում է, վոր Ադրբեջանի կուսկազմակերպությունը զգալի հաջողություններ ունի ԱՍԽՀ հանրապետական արդյունաբերության զարգացման գործում, Ադրբեջանի շրջանների ինդուստրացման գործում:

Աճել է ԱՍԽՀ յերկրորդ ինտերնացիոնալ կենտրոնը՝ Գյանջան, վորտեղ կառուցվել և սարքավորվել են լավագույն ստանոկներով մանածա – գործվածքային Ֆաբրիկան, կաշեգործական Ֆաբրիկան, կարի Ֆաբրիկան, ձեթ – օճառի գործարանը և այլն: Ստեղծված է խոշորագույն մետաքս – մշակման կոմբինատը Նուխում: Ի. Լ. Ղ. մարզն իր մոտ խորհրդայնացման ժա-

մանակաշրջանում զգալի չափով զարգացրել է մետաքս – կարժելու արտադրությունը: Նախիջևանի ՍԽՀ տեղական հումքի բազայի վրա իր մոտ զարգացրել է արտադրության մի շարք ճյուղեր: Ադրբեջանի մյուս շրջաններում զգալիորեն աճել է տեղական արդյունաբերությունը:

Համագումարը դրա հետ միասին արձանագրում է ԱՍԽՀ հանրապետական և տեղական արդյունաբերության կողմից յերկրորդ հնգամյակի առաջին տարվա արտադրական ծրագրի անբավարար կատարումը: Թողարկման տարեկան պլանը՝ հանրապետական արդյունաբերության կողմից ամբողջությամբ վերցրած՝ կատարվել է միայն 83,6 տոկոսով, այդ թվում Ծանրարդժողկոմատի գլխավորության գծով՝ 79 տոկոսով, Թեթևարդժողկոմատի գծով՝ 82 տոկոսով, Անտառժողկոմատի գծով՝ 41 տոկոսով, Մատժողկոմատի գծով՝ 88 տոկոսով: Ծրագիրը պրոմկոոպերացիայի գծով կատարվել է միայն 76 տոկոսով:

Աշխատանքի արտադրողականության բարձրացման և ինքնարժեքի իջեցման վերաբերյալ պլանային առաջադրանքները չեն կատարվել: Տարեկան պլանով նախատեսնված կապիտալ ներդրումները լիովին չեն յուրացվել:

Համագումարը գտնում է, վոր հանրապետական և տեղական արդյունաբերության ծրագրի թերակատարման հիմնական պատճառն է հանդիսանում արտադրությանը ղեկավարելու գրասենյակային – բյուրոկրատական մեթոդները, աշխատանքի թույլ վերակառուցումը՝ «Դոնբասի» և «Յերկաթուղային տրանսպորտի մասին» Համկոմկուսի (բ) Կենտկոմի և ԽՍՀՄ Ժողկոմխորհի վորոշումների հիմունքով, ձեռնարկություններում կուսակցական-մասսայական ու պրոֆաշխատանքի անբավարար դրումը: Պայքարը 1934 թվականի պլանների կատարման համար, արտադրանքի վորակի բարձրացումը, աշխատանքի արտադրողականության բարձրացումը, ինքնարժեքի իջեցումը, խոտանքի վերացումը, աշխկարգապահության ուժեղացումն ու միանձնավարության ամրապնդումը, սոցմրցության և հարվածայնության ծավալումը, տնտեսության արտադրության տեխնիկային տիրապետումն ու ղեկավարության մեթոդների արմատական վերակառուցումը — պետք է դառնան հանրապետական ու տեղական արդյունաբերության բոլոր կուսակցական, տնտեսական և արհմիութենական կազմակերպությունների ամենակարևոր մարտական խնդիրը:

3. Համագումարն արձանագրում է յերկաթուղային տրանսպորտի միանգամայն անբավարար աշխատանքն ԱՍԽՀ-ում: Յերկրորդ շրջանի քաղբաժինը, յերկաթուղային բանվորները և վողջ ադրբեջանյան կազմակերպությունը պետք է խիստ բարելավման ձգտեն ԱՍԽՀ-ում յերկաթուղային տրանսպորտի աշխատանքում:

ԱՍԽՀ խճուղային ճանապարհներն ու ավտոտրանսպորտը նույնպես գտնվում են անբավարար վիճակում: Համագումարն

առանձնապես ընդգծում է Ադգորտրանի և շրջանային կազմակերպությունների թույլ աշխատանքը ճանապարհային շինարարության գծով, վորոնք չեն կարողացել ապահովել խճուղային ճանապարհների զարգացումը՝ սոցիալիստական շինարարության ընդհանուր տեմպերի համապատասխան, վորոնք այդ բանի համար թույլ կերպով են ոգտագործել տեղական ամենահարուստ հնարավորությունները: Համագումարը շրջանային կազմակերպությունների և Ադգորտրանի առաջ խնդիր է դնում — ամենակարճ ժամանակամիջոցում վերացնել այդ հետամնացությունը և լայնորեն ծավալել ճանապարհային շինարարությունն Ադրբեջանում:

Համագումարը հանձնարարում է Կենտկոմին միջոցառումներ նախատեսնել Բուրի գետային տրանսպորտի աշխատանքն ընդարձակելու և բարելավելու վերաբերյալ:

4. Նշելով այն հաջողությունները, վորոնք ձեռք են բերվել 1933 թվականին բամբակի պլանի կատարման գործում, Համագումարը դրա հետ միասին գտնում է, վոր 1934 թվականի պլանի կատարման համար պահանջվում է ԱՍԽՀ վողջ բամբակային տնտեսության ամենալավ կազմակերպումը և հետագա պայքար բամբակենու բերքի բարձրացման համար: Անհրաժեշտ է վճռական պայքար ծավալել գարնանային աշխատանքներին պատրաստվելու գործում հանդստացման տարրերի, ինքնահոսի վրա հույս դնելու դեմ: Համագումարը հանձնարարում է Կենտկոմի նոր Կարմին ձեռք բերել գարնանացանի, այլ և 1934 թվականին բամբակի մշակման կամպանիայի բոլշեվիկյան նախապատրաստումն ու անցկացումն այն հաշվով, վորպեսզի ապահովվի բերքատվության հետագա բարձրացումը:

Ադրկոմկուսի (բ) 12-րդ համագումարն արձանագրում է բամբակի գարնանացանին նախապատրաստվելու գործի բացահայտ անբավարար ընթացքը 1934 թվականում և հանձնարարում է Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի բյուրոյին, Ադրկոմկուսի (բ) շրջանային կոմիտեներին և ՄՏ կայանների ու խորհտնտեսությունների քաղբաժիններին՝ անհապաղ բեկում ձեռք բերել ցանքսին նախապատրաստվելու բոլոր տեղամասերում (հերկ, տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների նորոգում, հանքային և գոմաղբային պարարտացման արմատացում, ձմեռային արաթ, բամբակենու տեսակների բուսաբանական շրջանացում, նոր ջրային սիստեմների պատրաստում, ինչպես ցանքային, այնպես էլ վեգետացիոն վոռոգումներին, կոլտնտեսությունների արտադրական պլանների կազմումը և այլն):

Նշելով յեգիպտական բամբակենու մշակման ասպարեզում ձեռք բերած խոշոր հաջողությունները, վորոնք ապահովվում են ընկ. Ստալինի կողմից դրած՝ Ադրբեջանում յեգիպտական բամբակի կարևորագույն բազա դարձնելու խնդրի կենսագործումը, Համագումարը պարտավորեցնում է յեգիպտականը արտադրող

շրջանների կուսակցական կազմակերպություններին՝ ժամանակին անցկացնել բոլոր անհրաժեշտ միջոցառումները յեգիպտական բամբակի բարձրորակ ցանքի, մշակման և վոռոգման համար:

Ընկ. ընկ. Ստալինի և Մոլոտովի ցուցմունքները՝ բամբակային խորհտնտեսությունների վերաբերմամբ՝ մնում են դեռևս չկատարված և 1934 թվականի համար էլ պահպանում են իրենց ամբողջ սրությունը: Բամբակային խորհտնտեսությունները (մանավանդ Կարա — Չալան) անբավարար կերպով են անցկացրել բամբակային կամպանիան 1933 թվին և պարզորեն անբավարար կերպով են նախապատրաստվում 1934 թվականին:

Համագումարը հանձնարարում է Կենտկոմին անցկացնել կոնկրետ միջոցառումներ, վորոնք լիովին ապահովեն խիստ բեկումն խորհտնտեսությունների աշխատանքում, մանավորապես անհապաղ վերջացնել խորհտնտեսությունների ապախոշորացումը, նրանց կադրերի ընտրությունն ու ամրացումը, դարձնելով խորհտնտեսությունները «բամբակի գործի տեխնիկայի խոշորական նմուշներ»:

Մթերման ապարատի և բամբակի գործարանների աշխատանքը ճանաչելով անբավարար, Համագումարը հանձնարարում է Կենտկոմին անհապաղ ամրացնել Ադգազբամբակի ապարատը և նրա ամբողջ սիստեմն ամուր, ստուգված աշխատողներով, ձեռք բերել թեյլի անվթարություն, ժամանակին մշակման և փոխադրման, բամբակի գործարանների աշխատանքի վճռական բարելավման և 1934 թվականի հավաքման նկամպանիային ուշադիր կերպով նախապատրաստելու գործի (գործարաններ, հավաքման կետեր, տարա, տրանսպորտ և այլն) ապահովումը:

Նշելով մի շարք շրջաններում ցանքափոխության արմատավորման ուղղակի թերագնահատումը, Համագումարը հանձնարարում է Կենտկոմին ուժեղացնել ցանքափոխության վերաբերյալ աշխատանքը, կենտրոնական և շրջանային կազմակերպությունների հատուկ դիտողության և վերահսկողության տակ առնելով այդ կարևորագույն խնդրի կատարումը:

Համագումարը միանգամայն ճիշտ է գտնում Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի նոր ՄՏ կայաններ կառուցելու և յեղածները ապախոշորացնելու համար վերցրած գիծը և առաջարկում է հասնել ՄՏ կայանների ամեն մի կերպ ամրապնդմանը և աշխատողների, մանավանդ նրանց ղեկավար կազմի հաճախակի փոփոխման դադարեցման:

Արձանագրելով ՄՏ կայանների և խորհտնտեսությունների տրակտորային պարկի ոգտագործման դեռևս բացահայտ անբավարար լինելը, անհրաժեշտ է ձեռք բերել տրակտորների արտադրողական աշխատանքի խիստ բարձրացում, ավելի բարդ և աշխատատար պրոցեսների մեջ նրանց կիրառման ընդարձակում (ցանք, կուլտիվացում, հավաքում), տրակտորային պար-

կը կոլտնտեսությունների կենդանի քարշող ուժի հետ ճիշտ կերպով շաղկապելու հիման վրա:

Համագումարն արձանագրում է վնասատուների դեմ պայքարող ընկերության թույլ աշխատանքը 1933 թվականին բամբակենու վնասատուների դեմ տարված պայքարում: Բացառիկ աշխատանքային խանդավառություն ցուցաբերող կոլտնտեսական — բամբակագործների վողջ մասսայի պայքարն էր միայն, որ հնարավորություն է տվել ավարտելու պայքարը գյուղատնտեսական վնասատուների դեմ: Համագումարը հանձնարարում է Կենտկոմին մշակել և կենսագործել մի շարք հատուկ միջոցառումներ, որոնք կապահովեն 1934 թվականին պայքարի ամենալավ կազմակերպումը բամբակենու գյուղատնտեսական վնասատուների դեմ (կնգուղակեր, չոռ, ավելս (միջատ), կոբոդրին գեռուն (որդեր) և այլն):

Համագումարը հավանություն է տալիս Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի բյուրոյի՝ քաղաքից կայուն, ստուգված աշխատողներով բամբակային և այլ շրջանների հետագա ամրապնդման վերաբերյալ միջոցառումներին և հանձնարարում է Ադրկոմկուսի (բ) Կենտկոմին շարունակել գյուղական կուսկազմակերպություններում կադրերի ընտրության և դասավորման համար վերցրած կուրսը՝ սկզբունքային գործարար հիմունքով:

Բաքվի կուսկազմակերպությունը պետք է դեռ է՛լ ավելի լավ կազմակերպի Բաքվի պրոլետարիատի կապն ու օգնությունն Ադրբեջանի գյուղին:

5. Ադրբեջանի գյուղատնտեսության մեջ ջրային տնտեսությունը դեռևս շարունակում է մնալ նեղ տեղը: Տարածությունների հետագա աճումը, ցանքափոխության արմատացումը և բերքատվության բարձրացման խնդիրը դեռ է՛լ ավելի սրությամբ Ադրկոմկուսի (բ) առաջ այնպիսի վճռական պրոբլեմների վերելքի և լուծման խնդիր են դնում, ինչպես Մուղանի վերակառուցումը և մեքենական ոռոգումը, Թարթառի շինարարությունը և այլն:

Համագումարն առաջարկում է.

ծավալել վերակառուցողական աշխատանքները Մուղանի ինժեներական սիստեմների վրա, պատշաճ կոլեկտորային ջրահավաքային ցանցի կառուցմամբ, սկսելով նույնպես Արաքս գետի վրա Բահրամթափայի ամբարտակի կառուցումը.

ավարտել Միլի Որջոնիկիձեյի անվան առաջին ջրանցքի, և գլխավորապես, Ստալինի անվան խորհտնտեսության դաշտերի վրա քարտեզային (կարտովոյ) և ջրահավաքման ցանցի կառուցման վերաբերյալ աշխատանքները, սկսել Որջոնիկիձեյի ջրանցքի Արաքս գետից լրացուցիչ ջրամատակարարման կառուցման, նույնպես և Մերձարաքսյան գոտու և Միլի տափաստանի տեղական սիստեմների վերակառուցման վերաբերյալ աշխատանքները.

ձեռնարկել ջրհանների խոշորացմանն ու ելեկտրիֆիկացմանը, նույնպես և ծավալել ոռոգման ցանցի վերակառուցման վերաբերյալ աշխատանքը՝ մեքենական ոռոգման շրջաններում կոլեկտորի կառուցման հետ միասին.

արագացնել Կարա — Չալա խորհտնտեսությունում ոռոգման վերաբերյալ սկսված աշխատանքը՝ հասցնելով ընդհանուր — ոռոգման տարածությունը մինչև 12 հազար հեկտարի:

Համագումարն անհրաժեշտ է համարում՝ հատուկ ուշադրություն կենտրոնացնել Թարթառի շինարարության վրա, որը խոշոր իրրիգացիոն և էներգետիկական նշանակություն ունի ԱՍԽՀ ժողովրդական տնտեսության համար:

Համագումարն առաջարկում է արմատապես վերացնել մինչև հիմա մի շարք շրջաններում գոյություն ունեցող ջրային տնտեսության թերագնահատումը, վճռական պայքար կազմակերպելով ջրային ռեսուրսների հափշտակման և անռացիոնալ օգտագործման դեմ և ապահովել հիդրոսարքավորումների պատշաճ պահպանությունը:

6. Համագումարը հանձնարարում է Ադրկոմկուսի (բ) Կենտկոմին ապահովել Ադրբեջանում տեխնիկական կուլտուրաների բերքատվության հետագա զարգացումն ու բարձրացումը:

Գտնելով, որ Ադրբեջանն ունի բոլոր հնարավորությունները ամենաարժեքավոր մերձարևադարձային կուլտուրաների աճեցման համար, համագումարն Ադրբեջանի կուսկազմակերպության առաջ ցիտրուսային (կիտրոն, մանդարին) և մերձարևադարձային կուլտուրաների (քրքում, ձիթապտուղ, թեյ, կաուչուկ և ուրիշները), որպես կարևորագույն նշանակություն ունեցող կուլտուրաների, արագացրած զարգացման խնդիրն է դնում, և հանձնարարում է Կենտկոմին մշակելու այդ կուլտուրաների լայնորեն արմատացման վերաբերյալ միջոցառումներ՝ այն հաշվով, որպեսզի ԱՍԽՀ դարձվի մերձարևադարձային և ցիտրուսային կուլտուրաների հզոր բազա:

7. Հացահատիկային կուլտուրաների մշակման ասպարիզում, համագումարը կուսկազմակերպությունների առաջնակարգ խնդիրն է դնում հացահատիկայինների հետագա զարգացումը, բերքատվության բարձրացումը բարձր ագրոտեխնիկայի կիրառման (ցելեր, ցանքի ժամկետներ, շարքացան, սերմերի զտումն ու թունախեղդումը և այլն) և, առանձնապես բամբակային շրջաններում, հացահատիկայինների մշակման հիմնական պրոցեսների (ցանք, հացահավաք, կալսում և այլն) վճռական մեքենայացման բազայի վրա:

Նշելով չալթուկի կուլտուրայի նշանակության թերագնահատումը, նույնիսկ չալթուկի հիմնական շրջաններում (Լենքորանի և Զաքաթալա — Նուխու մասսիվ), համագումարն առաջարկում է Կենտկոմին չալթուկի տարածությունների ընդարձակ-

ման վերաբերյալ միջոցառումներ կիրառել՝ այդ կուլտուրայի համար նոր հողերի յուրացման միջոցով, հիմնական ուշադրությունը դարձնելով չալթուկի բերքատվության բարձրացման վրա՝ ագրոմիջոցառումների լայն կիրառման և չալթուկամշակության պրոցեսների մեքենայացման վերաբերյալ աշխատանքի արտադրման հիման վրա:

Ահագին նշանակություն տալով բանջարանոցա — բաղչային կուլտուրաների զարգացմանը, Համագումարն առաջարկում է ցանքային տարածությունների ընդարձակման հետ միասին, հասնել նրանց բերքատվության խիստ բարձրացմանը: Անհրաժեշտ է առանձին ուշադրություն դարձնել բանջարեղենի կոլտնտեսությունների և կոոպտնտեսությունների աշխատանքի արմատական բարելավման վրա, ապահովելով այդ տնտեսություններում բերքատվության բարձրացումը, արտադրանքի ժամանակին հավաքումը, մթերումը և տրանսպորտիրովկան:

Համագումարն արձանագրում է Հողժողկոմատի օրգանների և շրջանային կազմակերպությունների կողմից պատշաճ ուշադրության բացակայությունը խաղողագործության և գինեգործության զարգացման նկատմամբ ԱՍԽՀ-ում և առաջարկում է Կենտկոմին անհրաժեշտ միջոցառումներ նախատեսել ԱՍԽՀ կոլտնտեսություններում և խորհտնտեսություններում խաղողագործության հետագա զարգացման վերաբերյալ:

Նշելով Ադրբեջանում մետաքսագործության զգալի չափով հետ մնալը, Համագումարն անհրաժեշտ է համարում նրա հումքային բազայի հետագա ընդարձակում և մետաքսագործության ծավալի մեծացումը:

8. Համագումարն ընդգծում է, վոր անասնապահությունը — ԱՍԽՀ գյուղատնտեսության այդ կարևորագույն ճյուղերից մեկը — ամենահետ մնացող ճյուղն է հանդիսանում, կուսակցական և տնտեսական կազմակերպությունների կողմից հարկ յեղած ուշադրության բացակայության հետևանքով:

Համագումարը 1934 թվականի և յերկրորդ հնգամյակի մարտական խնդիրն է համարում ԱՍԽՀ-ում անասունների գլխաքանակի ամեն կերպ ավելացումը և նրա արդյունավետության բարձրացումը:

Անասնապահության զարգացման ասպարեզում կենտրոնական խնդիր է հանդիսանում կերային բազայի զարգացումն ու բարելավումը (կերային կուլտուրաների արմատացումը, ցանքափոխություն մտցնելը և այլն):

Համագումարը հանձնարարում է Ադրկոմկուսի (բ) Կենտկոմին հատուկ ուշադրություն դարձնել անասնապահական խորհտնտեսությունների և կոլտնտեսային ապրանքային ֆերմաների հետագա զարգացման ու ամրապնդման վրա, մոտ տարում բոլոր կովազուրկ կոլտնտեսականներին կովերով ապահովելու վերաբերյալ աշխատանքի ծավալմանը և Ադրբեջանի կոլտնտեսականների մեջ կովազրկության վերացման վրա, գլխաքանակը

կորուստից անվնաս պահելու համար մղվող պայքարի վրա, գլխաքանակը չարաշահելու և հափշտակելու դեմ մղվող պայքարի վրա:

9. Պայքարը կոլտնտեսությունների կազմակերպչա-տնտեսական և քաղաքական հետագա ամրապնդման, «բոլոր կոլտնտեսությունները բոլշևիկյան, կոլտնտեսականներին ունևոր դարձնելու» (Ստալին) համար, կոլտնտեսությունների հետագա սիստեմատիկ զտումը՝ դասակարգային — թշնամի և այլ հակախորհրդային տարրերից, սոցիալիստական կոլտնտեսային սեփականության պահպանումը, աշխատանքի կարգապահության ամրապնդումը, աշխատանքի արտադրողականության բարձրացումը, աշխատանքի վորակի և կոլտնտեսական գյուղացիության նյութական — կենցաղային դրության բարելավումը, պայքարը կոլտնտեսականների կուլտուրական և ունևոր կյանքի համար — այդպիսիք են կուսակցական կազմակերպությունների հետագա խնդիրները գյուղում:

10. Ադրբեջանի ինդուստրացման հաջողությունները, սոցիալիստական շինարարության աճումն ու գյուղատնտեսության կոլտնտեսական վերելքը՝ ապահովել են բանվոր դասակարգի և կոլտնտեսական գյուղացիության նյութական բարեկեցության զգալիորեն բարելավումը, արդյունաբերական բանվորների աշխատավարձը 1928 թվից մինչև 1933 թիվն աճել է 70 տոկոսով, զգալիորեն աճել է բանվորների և ծառայողների ապահովումը սոցապահովագրման գծով, ավելացել է ապրանքային մասսան յերկրում, լայնորեն ծավալվել է հասարակական սնունդը:

Զգալիորեն աճել է կոլտնտեսականների յեկամուտը նախորդ տարիների համեմատությամբ, կոլտնտեսականների յեկամուտներն անհամեմատելի յեն դարձել մենատնտեսների յեկամուտների հետ և մեծ չափով գերազանցում են կոլտնտեսականների անցյալ տարիների յեկամուտները: Դրանով զգալի քայլ է արված ընկ. Ստալինի «բոլոր կոլտնտեսականներին ունևոր դարձնել» լոզունգի իրականացման գործում:

Սակայն, նյութական բարեկեցության գործում յեղած զգալի հաջողությունների հետ միասին, նյութական–կենցաղային կարիքների սպասարկման գործում տեղի ունեն մի ամբողջ շարք խոշոր թերություններ: Առանձնապես զգալի յեն այդ թերությունները ապրանքատար ցանցում. օպորտունիստական վերաբերմունքն ապրանքների վորակի և ասորտիմենտի նկատմամբ, ապրանքային մասսաների մեխանիկական բաշխումը, սպառողի պահանջների ուսումնասիրության բացակայությունը, ինքնամթերումների և ինքնագնումների չափազանց թույլ զարգացումը, առևտրա — կոոպերատիվային ապարատի աղտոտվածությունը դասակարգային խորթ տարրերով, վատնումներն ու հափշտակումները բնորոշում են ԱՍԽՀ առևտրային և մատակարարման կազմակերպությունների մի ամբողջ շարք օղակների դրությունը:

Համագումարն ընդգծում է, որ առևտրա–կոոպերատիվային և մատակարարման կազմակերպությունների հիմնական խնդիրն է հանդիսանում ապրանքաշրջանառության ընդարձակման համար, քաղաքի և գյուղի աշխատավորների մատակարարման գործի դրվածքի բարելավման համար մղվող պայքարի վճռական ուժեղացումը: Այդ խնդիրը պետք է լուծվի իսկական կուլտուրական խորհրդային առևտրի ծավալման, առևտրային գործի տեխնիկայի տիրապետման և նրա նյութական – տեխնիկական բազայի ամրապնդման, ինքնամթերման և ինքնագնման և ծավալման հիման վրա, կոոպերատիվային – մատակարարման կազմակերպությունների խնամառու տենդենցների հափշտակումների և վատնումների դեմ պայքար մղելու, ապարատը դասակարգային – խորթ և անպիտան տարրերից մաքրելու, կուսակցական և խորհրդային կազմակերպությունների կողմից ապրանքատար օրգանների աշխատանքի կոնկրետ օպերատիվ ղեկավարություն ուժեղացնելու հիման վրա:

Համագումարն առաջարկում է լայնորեն աշխատանք ծավալել ձեռնարկություններում հասարակական սննդի գործի դրությունը բարելավելու, բանվորների պարենմատակարարման ֆոնդերի ավելացման համար ապակենտրոնացրած գումարները ծավալելու, մերձքաղաքային տնտեսությունների հետագա ամրապնդման, նույնպես և սննդի ձեռնարկություններում հակասանիտարիայի դեմ վճռական պայքար մղելու վերաբերյալ:

Խորհրդային իշխանության տարիներին, առանձնապես վերջին տարիների ընթացքում ահագին աշխատանք է կատարված Ադրբեջանի քաղաքների տնտեսության վերակառուցման ուղղությամբ: Բագուն դառնում է Անդրֆեդերացիայի օրինակելի սոցիալիստական քաղաքը: Զգալի նվաճումներ են ձեռք բերվել նաև քաղաքային տնտեսության վերակառուցման ասպարեզում շրջաններում (Գյանջա, Նախիջևան, Նուխի, Ստեփանակերտ): Սակայն, ԱՍԽՀ արդյունաբերական քաղաքների և շրջանների կենտրոնների բարեկարգումը սոցիալիստական շինարարության պահանջներից հետ է մնում: Ջրմուղը, քաղաքի սանիտարական առողջական դրությունը, բնակարանային շինարարությունը — բոլոր այս խնդիրները պետք է կենտրոնական և տեղական կուսկազմակերպությունների ուշադրության կենտրոնում լինեն:

Առողջապահության օրգանների — ժողովրդա–տնտեսական պլանի կատարման համար մղվող պայքարում այդ կարևորագույն օղակի — աշխատանքը ճանաչելով բացահայտորեն անբավարար, համագումարը հանձնարարում է կուսակցության կենտկոմին հատուկ քննության առնել հանրապետության մեջ առողջապահության վերաբերյալ հարցերը և նշագծել մի շարք կարդինալ միջոցառումներ, ուղղված ԱՍԽՀ-ում ժողովրդական առողջապահության գործի արմատական բարելավմանը (պայքարը հակասանիտարիայի դեմ, մալարիայի դեմ, բուժական գործը, կադրերը և այլն):

12. Լենինյան ազգային քաղաքականության կենսագործումը պայմանավորել և ԱՍԽՀ խոշորագույն նվաճումները՝ ազգային–կուլտուրական շինարարության գործում. պարտուսի հիմնականում ավարտումը, ազգային փոքրամասնությունների սպասարկման բարելավումը, ԲՈՒՀ-երի, ԲՏՈՒՀ-երի, տեխնիկումների և գիտա–հետազոտական հիմնարկությունների աճումը, ԱՍԽՀ-ում գրագետների թվի ավելացումը մինչև 52 տոկոս, 1931 թվի 31 տոկոսի և մինչպատերազմյանի 9 տոկոսի դիմաց. մասսայական կուլտուր – լուսավորական հիմնարկների աճումը (գրադարաններ, ակումբներ, կարմիր անկյուններ, կինոներ), տպագրական արտադրանքի աճումը (այդ թվում և դասագրքերի — յերեք անգամ 1929 թվի դիմաց), թերթերի թվի ավելացումը մինչև 125-ի 1933 թվին՝ 1931 թվի 43-ի դիմաց. Մարքսի, Էնգելսի, Լենինի, Ստալինի աշխատությունների հրատարակումը թուրքերեն լեզվով և զգալի հաջողությունները գրականության և արվեստի զարգացման գործում:

Ադրկոմկուսի (բ) Համագումարը դրա հետ միասին արձանագրում է ազգային – կուլտուրական շինարարության գործում խոշորագույն թերությունների և ազգային քաղաքականության անցկացման գործում լուրջ խեղաթյուրումների առկայությունը (բարձրագույն մանկինստիտուտ, Ադրբժինստիտուտ, Բագվի մի քանի դպրոցները), որը Լուսժողկոմատի և Առժողկոմատի օրգաններում դասակարգային բավականաչափ զգոնության բացակայության և ղեկավարության գրասենյակային-բյուրոկրատական մեթոդների տարրերի առկայության հետևանքն է հանդիսանում:

Ադրկոմկուսի (բ) Համագումարը հետևյալ կարևորագույն խնդիրն է առաջադրում ազգային – կուլտուրական շինարարության ասպարեզում. ա) պարտուսի յենթական յերեխաների ամբողջ կազմը լրիվին ամրացնելով դպրոցում, բարձրացնել ուսուցման և կոմունիստական դաստիարակության որակը դպրոցում և ուսուցչական կադրերի քաղաքական–գաղափարական մակարդակի և կվալիֆիկացիայի բարձրացումը, դպրոցական շինարարության և դպրոցական գործի նյութական բազայի ծավալումը. բ) անգրագիտության լրիվին վերացումը 1934 թվականին. գ) քաղլուսավորական աշխատանքի հետագա ծավալումն ինչպես քաղաքում, այնպես էլ գյուղում, առանձնապես ազգային փոքրամասնությունների մեջ. դ) ԲՈՒՀ-երում, ԲՏՈՒՀերում և տեխնիկումներում մասնագետների պատրաստման վճռական բարելավումը և թուրքերից ու տեղական մյուս ազգություններից բարձր — փորձառված գիտական աշխատողների և մանկավարժների պատրաստումը. ե) գիտա – հետազոտական հիմնարկությունների աշխատանքի հետագա բարելավումն ու ընդարձակումը, ուղղված սոցիալիստական շինարարության բազմակողմանի օգնության համար. զ) կուլտուրական ֆրոնտի գեղարվեստական տեղամասի (թատրոն, գրականություն, յերաժշտություն, կերպարվեստ) աշխատանքի ղեկավարության գործի

վրա ուշադրության ուժեղացումը և յերկաթուղային կադրերի ել ավելի համարձակ առաջ քաշումը:

13․ Ադրկոմկուսի (բ) համագումարն արձանագրում է, որ դատախազության և դատական ապարատի օրգանները՝ սոցիալիստական սեփականության պահպանման և հեղափոխական օրինականության կենսագործման գործում հանդիսանում են դեռևս թույլ օղակներից մեկը: Դասակարգային գծի խեղաթյուրման փաստերը, դասակարգային խորթ տարրերով աղտոտվածությունը, ղեկավարության գրասենյակային — բյուրոկրատական մեթոդների առկայությունը, դատական պրոցեսների թույլ նախապատրաստումը և նրանց շուրջը հասարակական կարծիքը մոբիլիզացիայի յենթարկելու գործի բացակայությունը բնորոշում են Արդժողկոմատի մի շարք օղակներին:

Ադրկոմկուսի (բ) համագումարը դատախազության և դատարանի օրգաններից պահանջում է.

ա) պարզ և արագ աշխատանք, իսկական դասակարգային մոտեցում քննարկվող գործին և հասարակական կարծիքի մոբիլիզացիա դատական պրոցեսների շուրջը՝ այն հաշվով, վորպեսզի բարձրացվի մասսաների զայրույթը հասարակական սոցիալիստական սեփականությունը հափշտակողների դեմ.

բ) դատական օրգանների և դատախազության աշխատողների կադրի ուշադիր ստուգում, դուրս վտարելով բոլոր դասակարգային — խորթ և անաշխատունակ տարրերին, ապահովելով արդարադատության օրգանները կայուն, ստուգված կադրերով և միջոցներ ձեռք առնելով նրանց նյութական կենցաղային դրության բարելավման համար:

14․ Համագումարը նշում է, վոր հսկայական նշանակության ու ոգնության աճումը Կարմիր բանակի, ռազային և ծովային տորմիղի նկատմամբ ապահովել են նորմալ պայմաններ զորամասերի մարտական ուսուցման համար:

Համագումարն առաջարկում է կուսակցական, տնտեսական և խորհրդային կազմակերպություններին հետագայում ևս ընթուլացնել բազմապիսի հոգատարությունն ու ոգնությունը Կարմիր բանակին և տորմիղին, բարելավելով՝ ինչպես բանակայիններին, այնպես էլ հրամանատարական կազմի կուլտուր — կենցաղային պայմանները, ամեն կերպ ոգնելով ՊԱՋԸ — Ավիաքիմին՝ Կարմիր բանակի մասսայական ռեզերվին բոլոր աշխատանքներում:

15 Համագումարն արձանագրում է ձեռնարկություններում և կոլտնտեսություններում կուսակցական — մասսայական աշխատանքի զգալի բարելավումը․ արտադրության մեջ ամրապնդվել է ստորին կուսակցական օղակը, բարելավվել է նրա աշխատանքի վորակը: Խոշոր աշխատանք է կատարվել գյուղական կազմակերպությունների ամրապնդման համար: Այս գործում հսկայական դեր է խաղացել Բաքվի կազմակերպությունը, վորը գյուղն աշխատանքի յե ուղարկել մոտ չորս հազար մարդ, ընդարձակվել է կոլտնտեսական բջիջների ցանցը, զգալի հաջողություններ

 են ձեռք բերվել նրանց աշխատանքն ըստ արտադրական սկզբունքի վերակառուցելու գործում, Համկոմկուսի (բ) Կենտկոմի 1933 թ. հունիսի 15-ի վորոշումների իրականացման հիման վրա:

Գյուղական կազմակերպությունների ամրապնդման, գյուղական կազմակերպությունների շարքերն ոպորտունիստներից, այլասերման և կուլակի հետ ուղղակի դաշնակցող տարրերից մաքրելու, և կոմունիստներին ու կոլտնտեսականներին կուլակային սաբոտաժի դեմ, կոլտնտեսությունները բոլշևիկյան և կոլտնտեսականներին ունևոր դարձնելու համար պայքարին մոբիլիզացիայի յենթարկելու գործում ահագին դեր են խաղացել ընկ. Ստալինի նախաձեռնությամբ ստեղծված ՄՏ կայանների և խորհտնտեսությունների քաղբաժինները:

ՄՏ կայանների և խորհտնտեսությունների քաղբաժինների ստեղծումը կուլակային, հակախորհրդային տարրերի կողմից, ընդ եյության այդ հակախորհրդային ուժերի ազդեցությունն արտահայտող՝ առանձին գյուղական կոմունիստների կողմից խոչոր ընդդիմադրության է հանդիպել:

Համագումարը՝ Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի դեպի քաղբաժինները ցուցադրած հակակուսակցական վերաբերմունքի բոլոր արտահայտությունների դեմ, քաղբաժինների դերը չհամակառա- ... քաղբաժինների կողմից աշխատանքի ... յու և թերագնահատելու, առանձին աշխատողների կողմից աշխա... չցանկանալու բոլոր տանքում բոլշևիկյան կոնտակտ հաստատել ... վերաբերյալ բոլոր միջոցառումփաստերի դեմ պայքար մղելու վերաբերյալ բոլոր միջոցառումներին ամբողջովին և լիովին հավանություն է տալիս:

16․ Սոցիալիստական շինարարության խնդիրները յերկրորդ հնգամյակի յերկրորդ տարում պահանջում են յուրաքանչյուր կուսակցական օղակի մարտունակության էլ ավելի բարձրացում՝ ձեռնարկությունների ու կոլտնտեսությունների ավանգարդային դերի բարձրացումը՝ ձեռքի կոմունիստների ավանգարդային դերի բարձրացումը, կոմունիստների և կոլտնտեսությունների արտադրական պլանների իրագործման համար մղվող պայքարում, կազմակերպչական աշխատանքի զգալի բարելավումը, սոցիալիստական շինարարության հետագա աշխատանքի դասակարգային զգոնության հետագա բարձրացումը:

Կուսակցության կողմից դրված խնդիրների հաջող կատարման համար, Ադրկոմկուսի (բ) 12-րդ համագումարը բոլոր կուսակցական կազմակերպություններից պահանջում է «բարձրացնել աշխատանքի վորակը բոլոր ճյուղերում, առաջին հերթին, կազմակերպչական — գործնական ղեկավարության վորակը» (ընկ. Կագանովիչի զեկուցման թեզիսներից):

17․ Համագումարն արձանագրում է արհմիությունների 17-րդ համագումարի վճիռը, արտադրական աշխատանքի բարելավման վորոշ տեղաշարժեր, արտադրական մասսաների՝ կենտրոնական վարչությունների դերի ուժեղացումը նրանց ապախոշորացումից հետո: Դրա հետ միասին այն հսկայական խնդիրները, վորոնք դրվում են կուսակցության և Սովետական իշխանության կողմից 1934 թվականին — Աշխժողկոմատի և արհմիությունների կողմից չեն ֆունկցիաների հանձնումը — արհմիությունների կողմից չեն

կարող կատարվել առանց նրանց աշխատանքում վճռական բեկման, ինչպես արտադրական խնդիրների, այնպես էլ բանվորների նյութական – կուլտուրական – կենցաղային կարիքների սպասարկման ասպարեզում: Այդ բոլոր կազմակերպությունների առաջ խնդիր է դնում՝ վճռականորեն բարելավել արհմիությունների կուսղեկավարությունը:

18. Ադրլենկոմյերիտմիությունը նավթի և բամբակի վերաբերյալ պլանների իրագործման ու կուլտուրական շինարարության մեջ խոշոր դեր է հատկացված: Ադրլենկոմյերիտմիության աշխատանքում, սակայն, գոյություն ունեն մի շարք լուրջ թերություններ. արդյունաբերության տեխնիկայի թույլ տիրապետումը, առանձնապես գյուղատնտեսության մեջ, մի շարք կազմակերպություններում կոմյերիտմիության անդամների մարքս-լենինյան դաստիարակության վերաբերյալ անբավականաչափ աշխատանքը, ղեկավարության հետ մնալը բանվորական և կոլտնտեսական յերիտասարդության ակտիվությունից: Ադրլենկոմյերիտմիության հետ մնալը, ամենից առաջ ամբողջ մի շարք շրջանային կազմակերպությունների կողմից կոմյերիտմիության աշխատանքի անբավականաչափ կուսակցական ղեկավարության հետեվանք է հանդիսանում:

Համագումարը պարտավորեցնում է Ադրկոմկուսի (բ) բոլոր կազմակերպություններին բարելավել կուսղեկավարությունը բոլոր օղակներում — «կոմյերիտմիության կազմակերպությունները ղեկավարելու իրենց աշխատանքն այնպես վերակառուցել, վոր ճանաչել յուրաքանչյուր կոմյերիտականին առանձին վերցրած, իմանալ կազմակերպության կարիքները, կոմյերիտմիությամբ չզբաղվել պատահած դեպքում, պաշտոնական նիստերում» (Համկոմկուսի (բ) Անդրյերկոմի վորոշումից), այլ գործով օգնեն Ադրլենկոմյերիտմիության կազմակերպություններին կոմյերիտականների գաղափարա – քաղաքական մակարդակի բարձրացման, տեխնիկային մասսայորեն տիրապետելու, կոմյերիտմիության աշխատանքի պրակտիկայից ղեկավարության գրասենյակային – բյուրոկրատական մեթոդների բոլոր տարրերի վտարման վերաբերյալ աշխատանքում, պարզություն, կոնկրետություն և օպերատիվություն ապահովելու, աշխատանքում Լենին – Ստալինյան վոճ արմատացնելու վերաբերյալ աշխատանքում:

19. Ադրկոմկուսի (բ) 12-րդ համագումարը նշում է խորհուրդների, վորպես սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառներում պրոլետարական դիկտատուրայի որգանների, դերի զգալիորեն ուժեղացումը: Խոշոր աշխատանք է կատարված Բաքվի և Գյանջայի խորհուրդների կողմից — խորհրդի անդամների և ընտրողների մասսայական ներգրավումը քաղաքի բարեկարգման և կանաչազարդման վերաբերյալ, բնակարանային-կոմունալ, դպրոցական, ճանապարհային շինարարության, և այլնի վերաբերյալ աշխատանքին մասնակցելու գործում: Աշխատանք է տարված գյուղատնտեսության սոցիալիստական վերափոխման

համար մղվող պայքարում, դասակարգային – թշնամի կուլակային հակակոլտնտեսական տարրերի դեմ մղվող պայքարում գյուղխորհուրդներն ամրապնդելու վերաբերյալ:

Կուսակցության համագումարը կուսկազմակերպությունների առաջ հետեվյալ հիմնական խնդիրն է դնում. խորհուրդների աշխատանքի ամեն կերպ բարելավումը՝ ինչպես քաղաքում, այնպես էլ գյուղում աշխատավորների կուլտուր – կենցաղային սպասարկման համար (կոմունալ և ճանապարհային շինարարություն, դպրոցներ, առողջապահություն և այլն). խորհրդային հասարակայնության մոբիլիզացիան խորհուրդների սեկցիաների միջոցով, լավագույն աշխատողների ընտրումը խորհրդային ապարատում, պայքար բյուրոկրատիզմի տարրերի դեմ խորհրդային ապարատում, կոնկրետ և օպերատիվ ղեկավարության ապահովումը:

20. Ադրկոմկուսը (բ) խոշոր աշխատանք է ծավալել առաջին հնգամյակի և յերկրորդ հնգամյակի առաջին տարվա պլանի կատարման համար մղվող պայքարի մեջ կանանց ներգրավելու վերաբերյալ: Յեթե 1931 թվականին ԱՍԽՀ բոլոր ձեռնարկությունների գծով արտադրության մեջ յեղել է 62.400 հոգի, նրանցից թրքուհիներ՝ 8.000 հոգի, ապա 1933 թվականին բանվորուհիների թիվն աճել է մինչեվ 107 հազար հոգու, նրանցից թրքուհիներ՝ 20.300 հոգի:

Համագումարը Ադրկոմկուսի (բ) բոլոր կազմակերպությունների առաջ հետեվյալ խնդիրն է դնում. շարունակել աշխատավոր կանանց ներգրավումը արտադրության մեջ, բարձրացնել նրանց վորակավորումը, բարձրացնել ամբողջ մասսայական քաղաքական աշխատանքի վորակը բանվորուհիների և կոլտնտեսուհիների մեջ, բանվորուհիներին և կոլտնտեսուհիներին համարձակորեն առաջ քաշել հասարակական, կուսակցական խորհրդային և այլ աշխատանքների:

Ադրբեջանի կուսկազմակերպությունների, մանավանդ գյուղական շրջանների կուսկազմակերպությունների առաջ շարունակում է կարեվորագույն խնդիր մնալ — հետագա համառ սիստեմատիկ աշխատանք կանանց ազատագրելու համար, անխնա պայքար՝ դասակարգային թշնամու այդ աշխատանքն արգելելու բոլոր փորձերի դեմ, վճռական պայքար՝ կոլտնտեսական արտադրության մեջ կանանց աշխատանքի թերագնահատման դեմ:

Կուսկազմակերպությունը կոլտնտեսուհիների մեջ տարած իր ամբողջ աշխատանքում պետք է ելնի ընկ. Ստալինի ցուցմունքներից այն մասին, թե «կինը կոլտնտեսության մեջ մեծ ուժ է, մոռացության տալ այդ ուժը — դա կնշանակի հանցանք գործել»:

21. Խորհրդային Ադրբեջանի հսկայական հաղթանակները, վորոնք հանդիսանում են լենինյան ազգային քաղաքականության հաղթանակը, վո՛չ մի չափով Ադրբեջանի բոլշեվիկների շարքերում հանգստացման տարրեր չպետք է ստեղծեն: Կուսակցության 17-րդ համագումարին ընկ. ընկ. Մոլոտովի, Կույբի-

չեմի զեկուցումների թեզիսների և ընկ. Կագանովիչի թեզիսների լույսի տակ, յերկրորդ հնգամյակի համաշխարհային — պատմական աշխատանքների ծրագրի կատարումը պայքարի նոր գըլուխ է բաց անում, վորը մղվում է հանուն սոցիալիստական հասարակության կառուցմանը, հանուն «արտադրության սոցիալիստական յեղանակի, վորպես արտադրության միակ յեղանակի հաստատման, յերկրի վողջ աշխատավոր ազգաբնակչությանը սոցիալիստական հասարակության ակտիվ և գիտակից կառուցողներ դարձնելով» (ընկ. ընկ. Մոլոտովի և Կույբիշևի թեզիսներից):

Այդ պատմական ճանապարհի վրա Ադրբեջանի կուսկազմակերպությունը, Համկոմկուսի (բ) Կենտկոմի և Համկոմկուսի (բ) Անդրյերկոմի ղեկավարության ներքո, պետք է ուժեղացնի դասակարգային զգոնությունը և պայքարը յերկու ֆրոնտի վրա՝ ազգային հարցում — ընդդեմ մեծապետական շովինիզմի, վորպես գլխավոր վտանգի, և տեղական նացիոնալիզմի, վորը ակտիվանում է տվյալ ետապում:

Լայնորեն ծավալելով, ինչպես տնտեսական, այնպես էլ կուլտուրական շինարարության մեջ, քանակական և վորակական ցուցանիշների կատարման համար մղվող պայքարի սոցիալիստական մեթոդները, ուժեղացնելով ինքնաքննադատությունը մեր շարքերում, չնայելով անձնավորություններին, — Ադրբեջանի կուսկազմակերպությունը 1934 թվականում պետք է վոչ միայն ամրապնդի 1933 թվի հաջողությունները, այլ և՛ ավելի խոշոր ցուցանիշներով 1934 թվականում պետք է նշանակալից դարձնի լենինյան ազգային քաղաքականության հաղթանակները:

Առա՛ջ դեպի պայքարը նավթի և բամբակի համար:

Կեցցե՛ Համկոմկուսի (բ) Կենտկոմը և համաշխարհային պրոլետարիատի առաջնորդ ընկ. Ստալինը:

Կեցցե՛ Անդրֆեդերացիան և նրա ղեկավար Համկոմկուսի (բ) Անդրյերկոմը:

ՊԵՏ. ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԳՐԱԴ. Госпубл. Библиотека ՀՍԽՀ-ССР ИМ. А. МЯСНИКЯН Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

եջ
—— 5
I. ԽՍՀՄ միջազգային յեվ ներքին դրությունը —— 13
II. Պայքար նավթի համար —— 15
III. Արդյունաբերություն ——
1. Ելեկտրիֆիկացիա (17). 2. Մանր արդյունաբերություն (19). 3. Թեթև արդյունաբերություն (21). 4. Անտառային արդյունաբերություն (22). 5. Սննդի արդյունաբերություն (23). 6. Տեղական արդյունաբերություն (24). 7. Ջրադկոոպերացիա (25).
IV. Տրանսպորտ.
1. Յերկաթուղի (25) Ջրային տրանսպորտ (27). —— 28
V. Կապ —— 29
VI. Գյուղական տնտեսություն ——
1. Պայքար բամբակի համար (32). 2. Տեխնիկական կուլտուրաներ (36). 3. Շերամապահություն (40). 4. Անասնաբուծություն (40). 5. Ջրային տնտեսություն (40).
VII. Հանուն բոլշևիկյան կոլտնտեսությունների, հանուն ունևոր կոլտնտեսային կյանքի —— 45
1. Կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների կազմակերպչա-տնտեսական ու քաղաքական ամրապնդումն ու քաղբաժինների դերը (45). 2. Աշխատանքի կազմակերպումը կոլտնտեսություններում (48). 3. Բերքի բաշխումը (51). 4. Խորհտնտեսային շինարարություն (53). 5. Հերթական խնդիրներ (54).
VIII. Սոցիալիստական սեփականության պահպանումը յեվ հեղափոխական օրինականությունը —— 56
IX. Պրոլետարիատի յեվ գյուղի աշխատավորների նյութական բարեկեցության բարելավումը —— 60
1. Ապրանքաշրջանառության աճումը (61). 2. Բանվորների և կոլտնտեսականների մատակարարման աճումը (61). 3. Կոմունալ տնտեսության սոցիալիստական վերակառուցումը (64). 4. Առողջապահություն (66).
X. Ազգային-կուլտուրական շինարարություն —— 69
1. Դպրոց (69). 2. Նյութական բազան դպրոցներում (72). 3. Այբբենական անգրագիտության վերացումը (74). 4. Նախադպրոցական դաստիարակություն (75). 5. ԲՈՒՀ-եր և ԲՏՈՒՀ-ներ (75). 6. Գիտական—հետազոտական հիմնարկներ (78). 7 Մամուլ (78). 8. Մասսայական—քաղաքական—լուսավորական աշխատանքն ԱՍԽՀ-ում (80). 9. Գրականություն (81) 10. Գեղարվեստ (83). 11. Կարմրադրոշ հայկական թատրոնի աշխատանքը (83). 12. Յերաժշտություն (84). 13 Կինո (85). 14 Ռադիո (85).
XI. Կուսակցական շինարարություն —— 86
1. Կուսուսուցում (92). 2. Պրոֆմիություններ (93). 3. Կոմյերիտմիություն (94). 4. Խորհուրդներ (97). 5. Աշխատանքը կանանց մեջ (99).
Հանուն լենինյան ազգային քաղաքականության մաքրության —— 101
XII. Համկոմկուսի (բ) 17-րդ համագումարի աշխատանքի մասին ընկ. Մ. Դ. Բագիրովի հաշվետու զեկուցման առթիվ Ադրկոմկուսի (բ) ԿԿ-ի բանաձևը —— 108

Уполн. главлита № 3268
Заказ № 1843
Тираж 5000
Сдано в производство 19/VI—34.
Разрешено к печати 15/VIII—34.
Ст. ф. 82 × 110
8 печ. лист.
Тип. „III Интернационал“.
Баку, ул. Ефима-Саратовца.

ՀՀ Ազգային գրադարան
NL0186616

1166

ԳԻՆԸ 80 ԿՈՊ.

М. Д. БАГИРОВ.

О РАБОТЕ ЦК АКП (б)

Отчетный доклад XII с'езду АКП (б)

Партиздат—Баку—1934.